

991

3K 33
L - 35

, 090

335.55
U-90.

Ի. Վ. ԱՍԱԼԻՆ

ԼԵՆՏՆԻԶՄԻ
ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ

«Զ. Ա. Կ. Կ. Գ. Ա.»
ԹՐԱՎԵՐՈՒՄ—1926

505

3K33
L-35

Ի. Վ. ԱՏԱԼԻՆ

ՀԵՆԻՆԻԶՄԻ ՀԱՐՑԵՐԻ ԱՌԹԻՎ

1003
4307



2001

«Զ. Ա. Կ. Կ. Ե. Վ. Պ.»
Թ. Ե. Վ. Պ. - 1926

7699

Զոնում եմ ՀԿԿ(թ) Լենին-
գրադի կազմակերպությանը:

Խ. Առաջին

25 հունվարի 1926 թ.

ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆ



Թհթիւ, տպարան «Զարյա Վուստոկ»-ի, Ս. Շուլտուկիձելի փ. № 4.
Գևալիս ՀՀ 502. — Տիրաժ 2000. — Պատուի ՀՀ 63.

Ներկա ժողովածուի հիմնական մասերից մեկը պետք է համարել «Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրը։ Այդ բրոշյուրը առաջին անգամ լույս տեսավ գրեթե յերկու տարի առաջ, 1924 թվի ապրիլին։ Այժմ նա լույս է տեսնում ներկա ժողովածուի մեջ յերկրորդ հրատարակությամբ։ Այս յերկու տարվա ընթացքում շատ ջուր անցավ. կուսակցությունն յերկու դիսկուսիա ունեցավ, լույս տեսան մի շարք բրոշյուրներ և ձեռնարկներ լենինիզմի վերաբերմամբ, հերթի կանգնեցին սոցիալիստական շինարարության նոր գործնական խնդիրներ, Հասկանալի յե, վորայս յերկու տարվա ընթացքում ծագած նոր խնդիրները, ինչպես և բրոշյուրի լույս տեսնելուց հետո տեղի ունեցած գիսկուսիաների հետևանքները չեյին կարող հաշվի առնված լինել այդ բրոշյուրի մեջ։ Հասկանալի յե նույնպես, վոր մեր շինարարության կոնկրետ խնդիրները (նեալը, պետկապիտալիզմը, միջին գյուղացիության վերաբերյալ խնդիրը և այլն) չեյին կարող լիովին լուսաբանված լինել մի փոքրիկ բրոշյուրի մեջ, վոր ներկայանում եր իրեւ «լենինիզմի հիմունքների կոնսպեկտիվ մեկնարանություն»։ Այս և սրանց նման խնդիրները կարող եյին լուսաբանվել հեղինակի միայն հետագա բրոշյուրներում («Հոկտեմբերյան հեղափոխությունը և սուսական կոմմունիստների գործելակերպը», «ԽՄ կուսկոնֆերենցիայի հետևանքները», «Հարցեր և պատասխաններ» և այլն, վորոնք մտել են ներկա ժողովածուի մեջ և որդանապես կապված են «Լենինիզմի հիմունքների մասին» սկզբունքների հետ։ Այս հանգամանքը կատարելապես արդարացնում է ներկա ժողովածուի լույս ընծայումը, վորը, այսպիսով, հանդիսանում է իրեւ ամբողջական մի աշխատանք լենինիզմի հարցերի վերաբերմամբ։

XIV կուսհամազումարում տեղի ունեցած վերջին դիսկուսիան ավագ վերջին ժամանակաշրջանում, այն ե XIX և XIV

համագումարների միջին ժամանակամիջոցում կուսակցության կատարած գաղափարական և շինարարական աշխատանքի հաշվեհարդարը։ Նա ընդ սմին վորոշ չափով ստուգեց այն սկզբունքները, վոր իր ժամանակին ասած եր բերել նոր ոպողիցիան, թողերվի հարցնել - վորոնք են այդ ստուգման հաշվեհարդարները։

ԵՎԻՆԻԶՄԻ ՎՈՐՈՇՈՒՄԸ

«Հենինիզմի հիմունքների մասին» բրոցյուրի մեջ տրված և լինինիզմի հայտնի վորոշումը, վորը, ըստ յերևույթին, քաղաքացիական իրավունք և ստացել։ Այդ վորոշումն ասում ե.

«Հենինիզմը իմպերիալիզմի և պրոլետարական հեղափոխության ժամանակաշրջանի մարքսիզմ եւ Ավելի ճիշտը՝ լենինիզմը պրոլետարական հեղափոխության տեսություն և գործելակերպ չե ընդհանրապես, պրոլետարիատի դիկտուրայի տեսություն և գործելակերպ առանձնապես»:

ՃՐԴԱԿԱՆ Ե ԱՐԴՅՈՔ այս վորոշումը

Յես կարծում եմ, վոր ճիշտ ե: Ճիշտ ե, նախ, նրա համար,
վոր ճշտիվ ցույց ե տալիս լենինիզմի պատմական արմատները,
քննորոշելով լենինիզմը իբրև իմակերիալիզմի ժամանակաշրջանի
ժարքսիզմ, հակառակ լենինի մի քանի քննադատների, վորոնք
անձիշտ կերպով կարծում են, թե լենինիզմը ծագել ե իմակերա-
լիստական պատերազմից հետո: Յերկրորդ, ճիշտ ե նրա համար,
վոր ճշտիվ նիշում ե լենինիզմի միջազգային բնույթը, հակա-
ռակ սոցիալ-դեմոկրատների, վորոնք լենինիզմը գործադրելի յեն
համարում միայն ոռուսական-ազգային պարագաներում: Յերրորդ,
ճիշտ ե նրա համար, վոր ճշտիվ նիշում ե լենինիզմի որդանական
կազմը Մարքսի ուսմունքի հետ, բնորոշելով լենինիզմը իբրև իմ-
պերալիզմի ժամանակաշրջանի մարքսիզմ, հակառակ լենինիզմի
մի քանի քննադատների, վորոնք լենինիզմը համարում են վոչ
թե մարքսիզմի հետագա զարգացումը, այլ միայն մարքսիզմի
վերականգնումն և նրա գործադրություն ոռուսական իրականու-
թյան մեջ:

Այս բոլորը, կարծես թե, կարիք չունի առանձին մեկնաբանությունների:

Բայց և այնպես, բանից դուրս և գալիս, վոր մեր կուսակցության մեջ կան ընկերներ, վորոնք անհարժեղ են համարում վորոշել լենինիզմը մի քիչ այլ կերպ։ Ահա, որինակ, ընկ. Զինովյան կարծում ե, վոր

«Լենինիզմը իմակերիալիստական պատերազմների և գերակիու զյուղացիական ընակըռություն ունեցող յերկրում անմիջապես սկսված համաշխարհային հեղափոխության մարքսիզմ ե»*) (տես ընկ. Զինովյանի «Բողոքիզմ թե արոցկիզմ» հոդվածը, «Պրավդա», № 273, 30/XI—24 թ.),

Ի՞նչ կարող են նշանակել ընկ. Զինովյանի ընդդած բառերը՝ ի՞նչ ե նշանակում լենինիզմի վորոշման մեջ մտցնել Ռուսաստանի յետամացությունը, նրա զյուղացիական ընույթը։

Այս նշանակում ե լենինիզմը միջազգային պրոլետարական ուսմունքից դարձնել ուսուական ուրույն կենցաղի արդյունք։

Այս նշանակում ե յուղ քսել Բառերի և Կառւսովու հացին, վորոնք լենինիզմը անսետք են համարում կաղիտալիստականորեն ավելի զարգացած ուրիշ յերկրների համար։

Խոսք չկա, զյուղացիական հարցը Ռուսաստանի համար կարուրագույն նշանակություն ունի, մեր յերկիրը զյուղացիական ե։ Բայց ի՞նչ նշանակություն կարող ե ունենալ այս փաստը լենինիզմի հիմունքները բնույթալրելու համար։ Միթե լենինիզմը մշակվել ե միայն Ռուսաստանի հողի վրա և Ռուսաստանի համար, և վոչ թե իմակերիալիզմի հողի վրա, և վոչ թե իմակերիալիստական յերկրների համար առհասարակ։ Միթե լենինիզմի աշխատություններ, վորպիսիք են «Իմակերիալիզմ»-ը, «Պետություն և հեղափոխություն»-ը, «Պրոլետարական հեղափոխությունը և սենեգատ Կառւսակին», «Զախության յերեսայական հիվանդություն»-ը և այլն, նշանակություն ունեն միմիայն Ռուսաստանի, և վոչ թե բոլոր իմակերիալիստական յերկրների համար ընդհանրապես։ Միթե լենինիզմը բոլոր յերկրների հեղափոխական շարժման փորձի ամփոփումն չե։ Միթե լենինիզմի ակտության և գործելակերպի հիմունքներն անսետք են, պարապիր չեն բոլոր յերկրների պրոլետարական կուսակցությունների համար։ Միթե լենինն իրավացի չեր, վոր ասում եր, թե «բոլ-

չինիզմը պիտանի յերբեք գործելակերպի որինակ ամենքի համար»*) (տես հ. ԽV, եջ 503)։ Միթե կենինը իրավացի չեր, վոր խոսում եր «Խորհրդային իշխանության միջազգային նշանակության, նմանապես և բոլշևիկյան տեսության ու գործելակերպի հիմունքների մասին» (տես հ. ԽVI, եջ 116)։ Միթե ճիշտ չեն լենինի, որինակ, հետեւյալ խոսքերը.

«Ռուսաստանում պլոտետարիատի զիկտատուրան անհուսափելի կերպով սեաք և տարբերվի մի քանի առանձնահատկություններով առաջավոր յերկրներից մեր յերկրի խիստ մեծ յետամացության և մանր-բարեժուական լինելու պատճառով։ Բայց հիմնական ույժերը—և հասրակական տնտեսության հիմնական ձևերը—Ռուսաստանում նույն են, ինչ վոր և ամեն մի կապիտալիստական յերկրում, այնպես վոր այդ առանձնահատկությունները համենայն դեպք չեն կարող վերաբերվել ամենազլիսավորին» (տես հ. ԽV, եջ 348)։

Բայց յեթե այս բոլորը ճիշտ ե, չի հետեւում արդյոք այս բանից, վոր ընկ. Զինովյանի տված լենինիզմի վորոշումը չի կարող ճիշտ հանաչվել։

Ի՞նչպես համակերպես լենինիզմի այս աշխային-սահմանափակ վորոշումը միջազգայնության հետ

II.

ԳԼԽԱՎՈՐԸ ԼԵՆԻՆԻԶՄԻ ՄԵԶ

«Լենինիզմի հիմունքների մասին» բբոշուրի մեջ ասված ե։

«Վորմանք կարծում են, թե հիմնականը լենինիզմի մեջ զյուղացիական հարցն ե, թե լենինիզմի յելակետը հանդիսանում է զյուղացիության, նրա գերին, նրա տեսակաբար կուին վերաբերյալ հարցը։ Այս միանգամայն ճիշտ չե հիմնական հարցը լենինիզմի մեջ, նրա յելակետը հանդիսանում է վոչ թե զյուղացիական հարցը, այլ պրոլետարիատի գիրտատուրայի, նրա նվաճումների պայմանների նրա ամբապնիզման պայմանների հարցը։ Գյուղացիական

*) Ընդդեմը ընկ. Զինովյանին ե։

հարցը, իբրև իշխանության համար պայքարող պրոլետարիատի դաշտի հաջակցի հարց, հանդիսանում է վորպես հիմնականից բղխող հարց։

Ճիշտ ե արդյոք այս սկզբունքը, Կարծում եմ, վոր ճիշտ ե Այս սկզբունքն ամրողությամբ բղխում ե լենինիզմի վորոշումից։ Յեվ իրոք, յեթե լենինիզմը պրոլետարական հեղափոխության տեսություն և գործելակերպ է, իսկ պրոլետարական հեղափոխության հիմնական բովանդակությունը հանդիսանում է պրոլետարական դիկտատուրան, — ապա պարզ է, վոր գլխավորը լենինիզմի մեջ կազմում է պրոլետարիատի դիկտատուրայի հարցը, այդ հարցի մշակումը, հիմնավորումն ու առարկայացումը։

Այսուամենայնիվ, ընկ. Զինովյանը, ըստ յերևույթին, համաձայն չե այս վորոշման, իր «Լենինի հիշատակին» հոդվածի մեջ նու ասում ե.

«Գյուղացիության դերի հարցը, ինչպես ասացի արդեն, հանդիսանում է բոլեկիզմի, լենինիզմի հիմնական հարցը*» (տես «Պրավդա» № 35, 13 փետր. 1924 թ.)։

Ընկ. Զինովյանի այս սկզբունքը, ինչպես տեսնում եք, ամբողջովին բղխում է լենինիզմի այն անձիշտ վորոշումից, վորտափս և ընկ. Զինովյանը Ուստի դա նույնքան անձիշտ է, վորքան անձիշտ ե և նրա լենինիզմի վորոշումը։

Ճիշտ ե արդյոք լենինի այն թեզիսը, թե պրոլետարիատի դիկտատուրան հանդիսանում է «հեղափոխության հիմնական բովանդակությունը» (տես հ. XV, եջ 447)։ Անպայման, ճիշտ ե, ճիշտ ե արդյոք այն թեզիսը, թե լենինիզմը պրոլետարական հեղափոխության տեսությունն և գործելակերպ ե։ Կարծում եմ, վոր ճիշտ ե։ Բայց ի՞նչ ե հետեւում սրանից։ Սրանից հետեւում ե այն, վոր լենինիզմի հիմնական հարցը, նրա յելակետը, նրա հիմքը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի հարցը,

Միթե ճիշտ չե, վոր իմակերխալիզմի հարցը, իմակերխալիզմի կարգացման ցատկուն բնույթի հարցը, մի յերկրում սոցիալիզմի տարած հաղթության հարցը, պրոլետարիատի պետության հարցը, այդ պետության խորհրդային ձեր հարցը, պրոլետարիատի դիկտատուրայի մեջ կատարայի մեջ կուսակցության կատարած գերի հարցը, սոցիալիզմի մեջ կիսակուր հարցը, — այս ժամանակ լենինիզմն անպետք ե, պարտադիր չե կապիտալիստականորեն զարգացած յերկրների համար, այն յերկրների համար, վորոնք չեն հանդիսանում գյուղացիական յերկրներ,

տատուրայի սիստեմի մեջ կուսակցության կատարած գերի հարցը, սոցիալիզմի շինարարության ուղիների հարցը, — այս բոլոր հարցերը հենց լենին ե, վոր մշակել ե։ Միթե ճիշտ չե, վոր լուս այս հարցերն ել կազմում են պրոլետարիատի դիկտատուրայի գաղափարի արմատը, հիմքը։ Միթե ճիշտ չե, վոր առանց այս հիմնական հարցերի մշակման անհնարին կլիներ գյուղացիական հարցի մշակումը պրոլետարիատի դիկտատուրայի տեսակետից։

Խոսք չկա, լենինը գյուղացիական հարցի մասնագետ եր Խոսք չկա, գյուղացիական հարցը, իբրև պրոլետարիատի դաշնակցի հարց, կարևորագույն նշանակություն ունի պրոլետարիատի համար և կազմում է պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական հարցի անբաժան մասը։ Բայց պարզ չե միթե, վոր յեթե լենինիզմի առջև կանգնած չլիներ պրոլետարիատի դիկտատուրային վերաբերյալ հիմնական հարցը, ապա չեր լինի և դրանից բղխող պրոլետարիատի գաղափարիցի, գյուղացիության վերաբերյալ հարցը։ Պարզ չե միթե, վոր յեթե լենինիզմի առջև կանգնած չլիներ իշխանությունը պրոլետարիատի կողմից նվաճելու գործնական հարցը, ապա չեր լինի և գյուղացիության հետ դաշնակցելու հարցը։

Լենինը չեր լինի պրոլետարական մեծագույն գաղափարախոսը, վորպիսին նա հանդիսանում է անտարակույս, նա կլիներ մի հասարակ «գյուղացիական փիլիսոփա», վորպիսին հաճախ նկարագրում են նրան արտասահմանյան զրական գրչակները, յեթե նա գյուղացիական հարցի մշակումը առաջ տաներ վոչ թե պրոլետարիատի դիկտատուրայի տեսության և գործելակերպի հողի վրա, այլ այդ հողի կողքով, այդ հողից դուրս։

Յերկուսից մեկը.

Կամ գյուղացիական հարցը հանդիսանում է լենինիզմի մեջ իբրև գլխավոր հարց, — և այն ժամանակ լենինիզմն անպետք ե, պարտադիր չե կապիտալիստականորեն զարգացած յերկրների համար, այն յերկրների համար, վորոնք չեն հանդիսանում գյուղացիական յերկրներ,

Կամ թե լենինիզմի մեջ զիսավոր հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի մեջ կապիտալիզմը հանդիսանում է բոլոր յերկրների պրոլետարների միջազգային ուսմունք,

* Հնդգետության իմ ե. Ի. Ս. ա.:

պլանի և պարտադիր առանց բացառության բոլոր յերկրները, դրանց թվում և կապիտալիստականորեն զարգացած յերկրների համար:

Այստեղ պետք է բնտրել յերկուսից մեկը:

III.

«ՊԵՐՄԱՆԵՆՏ» ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

«Լենինիզմի հիմունքների մասին» բրոշյուրի մեջ «պերմանենտ հեղափոխության տեսությունը» գնահատվում է իրեն զյուղիության դեմի թերի գնահատության «տեսություն»։ Այս տեղ ասված է։

«Լենինը պայքարում եր «պերմանենտ» հեղափոխության կողմանակիցների գեմ վոչ թե անընդհատականության արցի պատճառով, քանի վոր Լենինն ինքն ել կանգնած եր հեղափոխության անընդհատականության տեսակերի վրա, այլ այն պատճառով, վոր նրանք թերի գնահատություն ելին տալիս գյուղացիության, պրոլետարիատի այդ մեծագույն ուժերիի դերին»։

Բուռական «պերմանենտնիկների» այս բնույթագիրը մինչ վերջին ժամանակներս ճանաչված եր ամենքի կողմից։ Այսուհետեւ առհասարակ ճիշտ վիճելով հանդիրձ, նա չի կարու ժաման, լրիվ համարվել 1924 թվի դիսկուսիան, մի կողմից, և լենինի աշխատությունների մանրազնին վելուծումը, մյուս կողմից ցույց տվին, վոր ուսական «պերմանենտնիկների» սխալը կայանում եր վոչ թե ժիայն գյուղացիության դերի թերի գնահատման մեջ, այլ և այն բանում, վոր նրանք բարարար չափով չելին գնահատում պրոլետարիատի ույժերն ու ընդունակությունները, թե վերջինս կարող ե իր յետելից տանել գյուղացիությանը և չելին հավատում պրոլետարիատի հեգեմոնիայի զաղափարին։

Այս պատճառով իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և սուսական կոմմունիստաների գործելակերպը» բրոշյուրի մեջ (զեկումբեր 1924 թ.) յես ընդարձակեցի այս բնույթագիրը և զբանի մի ուժից, ավելի լրիվ լրիվ բնույթագիր ավելի Ահա թե ինչ և առիտ մասին այդ բրոշյուրի մեջ։

«Մինչեւ այժմ սովորաբար նիշում ելին «պերմանենտ հեղափոխության» տեսության մեկ կողմը, այսինքն այն, վոր այդ տեսության պաշտպանները չելին հավատում զյուղացիական շարժման հեղափոխական կարելիություններին Այժմ, արդարացի լինելու համար, անհրաժեշտ է այս կողմը լրացնել մի ուրիշ կողմով, այն ե վոր նրանք չելին հավատում Ոտուսատանի պրոլետարիատի ույժերին և ընդունակություններին։

Այս, ի հարկե, չի նշանակում, թե լինինիզմը գեմ եր կամ դեմ և պերմանենտ հեղափոխության (առանց չակերտների) գաղափարին, վոր ազգաբարել եր Մարքսը անցած դարի քառասունական թվականներին։ Ըստհակառակը, Լենինը միակ մարքսիստն եր, վոր ձշտորին հասկացավ և զարգացրեց պերմանենտ հեղափափոխության գաղափարը։ Լենինն այս հարցում «պերմանենտնիկներից» տարբերվում ե նրանով, վոր «պերմանենտնիկները» ինդադիտուրել ելին Մարքսի պերմանենտ հեղափոխության գաղափարը, զարձնելով այն անկենդան, զբացյին իմաստություն, այն ինչ լենինը վերցրեց այդ գաղափարն իր մաքուր ձևով և գարձրեց իր հեղափոխության տեսության հիմունքներից մեկը Պետք ե հիշել վոր բուրժուական-պեմոլետական հեղափոխությունը սոցիալիստական հեղափոխության վերածելու գաղափարը, վոր ավել եր լենինը գեռևս 1905 թվին, Մարքսի պերմանենտ հեղափոխության տեսության մարմնացման ձևերից մեկն ե։ Ահա թե ինչ եր գրում այդ մասին լենինը գեռևս 1905 թվին։

«Դեմոկրատական հեղափոխություններց մենք խկույն և թ կանցնենք և հենց մեր ույժի, գիտակից և կազմակերպված պրոլետարիատի ույժի չափով կականք անցնել առցիալիստական հեղափոխության։ Մենք կողմանակից հնք անընդհատ հեղափոխության*): Մենք կանգ չենք առնի կիսամամբին... Առանց արկածախնդրության մեջ ընկնելու, սուսակ գավաճանելու մեր գիտական խղճին, առանց ընկնելու եժանագին ժողովրդականության յետելից, մենք կարող ենք ասել և առում ենք միայն մեկ բան։ – մենք բոլոր ույժերով կողմանք ամբողջ գյուղացիությանը դեմոկրատական հեղափոխություն անելու, վորակեսզի դրանով մեղ, պրոլետարիատի կուսակցության համար ավելի հեշտ լինի կարելույն չափ շուտով անցնել նոր և ավելի բարձր նպա-

*) Ըստդուքն իմն եւ ի. Սու..

տակի—սոցիալիստական հեղափոխության» (տես հ. VI,
եջ 449—450):

Իսկ ահա թե ինչ ե զրում էնքինս այս նյութի մասին
տասնվեց տարի անց, իշխանությունը պրոլետարիատի ձեռքն
անցնելուց հետո.

«Կառւտսկիները, Հիլֆերդինգները, Մարտովները:
Զերնովները, Խիլկիտաները, Լոնգեները, Մակդոնալդները,
Տուրատիները և 2^{1/2} մարքսիզմի մյուս հերոսները չկարո-
ղացան հասկանալ... փոխարքերությունները բուրժուա-
կան-դեմոկրատական և պրոլետարական—սոցիալիստական
հեղափոխությունների միջև։ Առաջինը վերածվում ե յերկ-
րորդի *), Յերկրորդը կողմանակի կերպով վճռում ե առաջինի
ինսդիրները։ Յերկրորդն ամրապնդում ե առաջինի գործը՝
Պայքարը և միմիայն պայքարն ե վճռում, թե վորքանյերկ-
րորդին աջողվում ե փոխարինել առաջինին» (տես հ. XVIII,
մ. 1, եջ 365—366):

Յես առանձին ուշադրություն եմ դարձնում առաջին մեջ-
բերումի վրա, վոր վերցված ե լենինի 1905 թվի սեպտեմբերի
1-ին հրատարակված «Սոցիալ-դեմոկրատիայի վերաբերմունքը
դեպի գյուղացիական շարժումը» հոդվածից։ Յես շեշտում եմ այս
ի գիտություն այն ընկերների, վորոնք դեռևս շարունակում են
պնդել վոր լենինը բուրժուական-դեմոկրատական հեղափոխու-
թյունը սոցիալիստական հեղափոխության, պերմանենտ հեղա-
փոխության վերածելու գաղափարին անցել ե, իբրթե, իմպե-
րիալիստական պատերազմից հետո, մոտավորապես 1916 թվին։
Այս մեջբերումը կասկած չի թողնում, վոր այդ ընկերները մնա-
պես մոլորված են։

IV.

ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊՐՈԼԵՏԱ- ՐԻԱՆԻ ԴԻԿՏԱՏՈՐԻԱՆ

Վորոնք են պրոլետարական հեղափոխության բնորոշ գծերը և
ինչնի են տարրերվում նրանք բուրժուական հեղափոխությունից։

*.) Ընդգծումն իմ եւ ի. Սա.։

Տարբերությունը պրոլետարական հեղափոխության և բուր-
ժուական հեղափոխության միջև կարելի յէ հանգեցնել հիմ-
նական կետերի։

1) Բուրժուական հեղափոխությունը սովորաբար սկսվում ե
այն ժամանակ, յերբ կան կապիտալիստական հասարակակարգի
քիչ թե շատ պատրաստի ձեեր, վորոնք աճել և հասունացել են
զեռւս հեղափոխությունն սկսվելուց առաջ ֆեյոդալական հասա-
րակության խորքերում։ այն ինչ պրոլետարական հեղափոխու-
թյունը սկսվում ե այն ժամանակ, յերբ բացակայում են, կամ
գրեթե բացակայում են, սոցիալիստական հասարակակարգի պատ-
րաստի ձեերը։

2) Բուրժուական հեղափոխության հիմնական խնդիրը հան-
գում ե այն բանին, վոր զավթի իշխանությունը և համապա-
կերպի նրան գոյությունը ունեցող բուրժուական եկոնոմիկային,
այն ինչ պրոլետարական հեղափոխության հիմնական խնդիրը
հանգում ե այն բանին, վոր իշխանությունը զավթելուց հետո
կառուցի նոր, սոցիալիստական եկոնոմիկա։

3) Բուրժուական հեղափոխությունը վերջանում ե սովորա-
բար իշխանության զավթումով, այն ինչ պրոլետարական հեղա-
փոխության համար իշխանության զավթումը հանդիսանում է
միայն իբրև նրա սկիզբ։ ընդամին իշխանությունն ոգտագործ-
վում ե իբրև լծակ հին եկոնոմիկան վերակազմելու և նորը կազ-
մակերպելու համար։

4) Բուրժուական հեղափոխությունը բավականանում ե իշ-
խանությունը շահագործող մի խմբակից խելով և մի ուրիշ շա-
հագործող խմբակի հանձնելով, ուստի և կարիք չի զգում քան-
դելու պետական հին մեքենան։ այն ինչ պրոլետարական հեղա-
փոխությունը իշխանությունից հեռացնում ե բոլոր և ամեն
տեսակ շահագործող խմբակցություններին և նրանց տեղ գնում
ե բոլոր աշխատավորների և շահագործվողների պարագլին,
պրոլետարիատի զատակարգին, ուստի և նա չի կարող յուլա-
զնալ առանց պետական հին մեքենան քանդելու և նրա տեղ
նորը սարքելու։

5) Բուրժուական հեղափոխությունը չի կարող բուրժու-
ակայի շուրջը քիչ թե շատ տեսական կերպով համախմբել աշխա-
տավորների և շահագործվողների միլիոնավոր մասսաները հենց

ոյն պատճառով, վոր սըմանք աշխատավորներ և շահագործվողներ են. այն ինչ պրոլետարական հեղափոխությունը կարող է և պետք է կապի նրանց պրոլետարիատի հետ տևական շաղկապով իրեւ հենց աշխատավորների և շահագործվողների, յեթե նա ուզում է կատարել իր հիմնական խնդիրը, այն եւ ամբապնդել պրոլետարիատի իշխանությունը և կառուցել նոր, սոցիալիստական եկա նոմիկա:

Ահա այս մասին Լենինի մի քանի հիմնական սկզբունքները:

«Բուրժուական և սոցիալիստական հեղափոխությունների միջև հիմնական տարբերություններից մենք ել այն եւ ասում ե կենինը, — վոր միշտ ֆեյոդալիզմից ծագում առնող բուրժուական հեղափոխության համար տնտեսական նոր կազմակերպությունները աստիճանաբար ստեղծվում են հին հասարակակարգի խորքերում հենց թեկուզ առևտրական հարաբերությունների միջոցով, վարոնք աստիճանաբար փոխում են ֆեյոդալական հասարակության բոլոր կողմերը: Բուրժուական հեղափոխության առջև կար միայն մեկ խընդիր—սրբել գեն շպրտել քարուքանդ անել նախկին հասարակության բոլոր ուղիները: Կատարելով այս խնդիրը, ամեն մի բուրժուական հեղափոխություն կատարում ե այն ամենը, ինչ վոր պահանջվում ե նրանից, վորովհետեւ հետևիանքում նա ստեղծում ե ապրանքային արտադրություն և ուժեղացնում ե կապիտալիզմի աճումը: Բոլորովին այլ գրության մեջ ե սոցիալիստական հեղափոխությունը, Վորքան ավելի յետամասց ե այն յերկիրը, վորին վիճակված ե պատմության զիգզագների շնորհիվ սոցիալիստական հեղափոխություն սկսել այնքան ավելի դժվար ե նրա համար հին կապիտալիստական հարաբերություններից սոցիալիստական հարաբերությունների անցնելը: Այստեղ ավերման խնդիրներին ավելանում են նոր, անլուր դժվարին խնդիրները՝ կազմակերպչական խնդիրները» (տես հ. X⁵, եջ 124):

«Յեթե, — շարուն ալում ե կենինը, — 1905 թվի մեծ փորձի բովով անցած սուսական հեղափոխության ժաղովրդական ստեղծագործությունը Խորհուրդներ չստեղծեր գեռ և 1917 թվի փետրվարին, ապա վոչ մի պարագայում նրանք չեյին կարող վերցնել իշխանությունը հոկտեմբերին, վորովհետեւ աջողությունը կախված է միլիոններին ընդգրկած շարժման արդին պատրաստի կազմակերպչական ձևերի գոյությունը ունենալուց: Այդ պատրաստի ձեզ հանդիսացան Խորհուրդները վոչ թե նրա համար, վոր քաղաքական պապարեզում մեզ սպասում եին այն փառագոր աջողությունները, այն

միապաղաղ հազիթական գնացքը, վոր մենք ունեցանք, այլ նրա համար, վոր քաղաքական նոր ձեզ պատրաստ եր և մեղ մնում եր միայն մի քանի դեկրետներով հանել Խորհրդային իշխանությունն այն սաղմնային վիճակից, վորի մեջ նա գտնվում եր հեղափոխության առաջին ամիսներին, և դարձնել ուսւական պետության պաշտոնապես ճանաչված ձեւ՝ Ռուսական Խորհրդային Հանրապետություն» (տես նույն տեղը, եջ 124—125):

«Մնում են դեռևս, — տառը և լենինը, — յերկու հսկայական դժվարության խնդիր, վորոնց լուծումը վոչ մի պարագայում չի հանդիսանում այն հազիթական ընթացքը, վորով գնում եր մեր հեղափոխությունը» (տես նույն տեղը, եջ 125):

«Այդ, նախ, ներքին կազմակերպության խնդիրն ե, վոր կանգնած և ամեն մի սոցիալիստական հեղափոխության առջև: Սոցիալիստական հեղափոխությունը բուրժուական հեղափոխությունից տարբերվում է հենց նրանով, վոր այնտեղ կան կապիտալիստական կազմակերպությունների պատրաստի ձևեր, իսկ խորհրդային պրոլետարական հեղափոխությունը այդ ձևերը չի սահանում պատրաստի, յեթե չվերցնենք կապիտալիզմի ամենազարգացած ձեւը, վորոնք, իսկապես, ընդգրկել են արդյունաբերության միայն փոքրիկ բարձունքները և դեռևս շատ քիչ են շոշափել յերկրագործությունը: Կազմակերպել հաշվառությունը, վերահսկել խորագույն ձեռնարկերը, պետական անտեսական ամբողջ միխանիզմը գարձնել միասնական խորոր մեքենա, ստեղծել այնպիս գործող հոկայական մի կազմակերպություն, վոր հարյուր միլիոնավոր մարդկել զեկավարվելին մեկ ծրագրով, — ահա այն հոկայական կազմակերպչական խնդիրը, վոր ընկել եր մեր ուսերին: Հստ իր սահմանների այս խնդիրը վոչ մի պարագայում թույլ չեր տալիս այնպիսի մի «ուռա»-լուծում, վորով մեզ աջողվեց հաղթահարել քաղաքացիական պատերազմի խնդիրները» (տես նույն տեղը, եջ 125):

«Յերկրորդ խնդիրը միջազգային հեղափոխության խնդիրի լուծումն ե: Յեթե մենք այնքան հեշտությամբ հաղթահարեցինք կերենսկու բանզաներին, յեթե այնպիս հեշտությամբ իշխանություն ստեղծեցինք, յեթե մենք առանց վորեւ գդալության գեկրետ ստացանք հողի սոցիալիզացիայի, բանզորական կոնտրոլի մասին, — այս բոլորը մեզ աջողվեց միայն նրա համար, վոր հատկապես գասագործած պայմանները մի կարծ ժամանակ մեզ վահանել ելին միջազգային իմպերիալիզմից: Միջազգային իմպերիալիզմը,



վոր ունի ամբողջ միացյալ կապիտալի հզորությունը և ռազմական տեխնիկայի ամբողջ հզորությունը, իրական հսկայական մի ույժ է, վորը վոչ մի պարագայում, վոչ մի պայմանով Խորհրդային հանրապետության կողքին ապրել չեր կարող թե իր որյեկտիվ գրությամբ, թե նրանում մարմացած կապիտալիստական դասակարգի տնտեսական շահերի շնորհիվ, չեր կարող առետրական կապերի, միջազգային և ֆինանսական հարաբերությունների շնորհիվ։ Այստեղ ընդհարումը հանդիսանում եր անխոսափելի։ Այստեղ և ռուսական հեղափոխության մեծագույն գժվարությունը, նրա պատմական մեծագույն առեղծվածը—միջազգային խնդիրները լուծելու անհամեշտությունը, միջազգային հեղափոխություն հարուցանելու անհամեշտությունը» (տես նույն տեղը, էջ 126–127):

Սրանք են պրոլետարական հեղափոխության ներքին քննութը և հիմնական իմաստը։

Կարելի՞ յէ արդյոք հին, բուրժուական կարգերի այդպիսի արմատական վերակազմումն առանց բռնի հեղափոխության, առանց պրոլետարիատի դիկտատուրայի։

Պարզ է, վոր չի կարելի։ Կարծել, թե այդպիսի հեղափոխություն կարելի յէ անել իսպաղ կերպով, բուրժուազիայի տերապետությանը հարմարեցված բուրժուական գեմոկրատիայի շըրջանակներում,—նշանակում ե կամ խելագարքել և կորցնել մարդկային նորման հասկացողությունները, կամ թե կոպիտ կերպով և բացարձակապես հրաժարվել պրոլետարական հեղափոխությունից։

Այս սկզբունքը պետք է ավելի մեծ ույժով ու կտրականաւուած շշտենք մանավանդ այն պատճառով, որ մենք գործ ունենք պրոլետարական հեղափոխության հետ, վորը հաղթել և առաջմամայն մեկ յերկում, վորը շրջապատված ե թշնամի կապիտալիստական յերկրներով և վորի բուրժուազիային չի կարող չոգնել միջազգային կապիտալը։

Ահա թե ինչու ինքնին ասում է, վոր «ճշգած դասակարգի արատագրումն անկարելի յէ վոչ միայն առանց բռնի հեղափոխության, այլ և առանց վոչնչացնելու պետական իշխանության այն պարագայ, վոր ստեղծել է տիրապետող դասակարգը» (տես հ. XI, մ. II, էջ 302):

«Թող,—ասում ե լենինը,—մասնավոր սեփականությունը, կապիտալի իշխանությունը, ճնշումը պահպանված ժամանակ նախ բնակության մեծամասնությունը արտահայտվի պրոլետարիատի կուսակցության ողաբն, և ապա միայն նա կարող է և որեաք և վերցնի իշխանությունը,—այսպիս են ասում մանր-բուրժուական գեմոկրատները, բուրժուազիայի խական ծառաները, վորոնք «սոցիալիստ» են անվանում իրենց» (տես հ. XVI, էջ 456):

«Թող,—շարունակում ե լենինը, —նախ հեղափոխական պրոլետարիատը տապալի բուրժուազիային, վոչնչացնի կապիտալի ճնշումը, ջարգություր անի բուրժուական պետական ապարատը, այն ժամանակ հազթություն տանող պրոլետարիատը կարող կլինի արագործն իր կողմը գրավել վոչնչացնի պրոլետարական աշխատավոր մասսաների համակրանքն ու աշխացությունը, գոհացնելով նրանց շահագործողների հաշվին,—ասում ենք մենք» (տես նույն տեղը, էջ 457):

«Բնակչության մեծամասնությանը իր կողմը գրավելու համար,—շարունակում ե լենինը, —պրոլետարիատը պետք է, նախ, տապալի բուրժուազիային և զավթի պետական իշխանությունը, յերկրորդ, նա պետք է մտցնի խորհրդային իշխանություն, ջարգութչուր անելով պիտական հին ապարատը, վորով նա մի անգամից կվարկաբեկի բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնականների տիրապետությունը, հեղինակությունը, ազգեցությունը վոչնչացնի պրոլետարական աշխատավոր մասսաների մեջ։ Յերկրորդ, նա պետք է սպանի բուրժուազիայի և մանր-բուրժուական համաձայնականների ազգեցությունը վոչ-պրոլետարական աշխատավոր մասսաների մեծամասնության մեջ հեղափոխականորին բավարարելով նրանց տնտեսական կարիքները շահագործողների հաշվին» (տես նույն տեղը, էջ 450):

Սրանք են պրոլետարիատի հեղափոխության բնորոշ նշերը։

Բնգ ամին, վորոնք են պրոլետարիատի դիկտատուրայի հիմնական գծերը, յեթե ճանաչված է, վոր պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարական հեղափոխությունն է։

Ահա պրոլետարիատի դիկտատուրայի ամենից ավելի ընդհանուր վորոշումը, վոր տվել ե լենինը։

«Պրոլետարիատի դիկտատուրան դասակարգային պայքարի վերջը չէ, այլ նրա շարունակությունն է նոր ձեռ-

բով։ Պրոլետարիատի դիկտատուրան՝ հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքն առած պրոլետարիատի դասակարգային պայքար և հաղթված, բայց վոչ վոչնչացրած, վոչ չքացած բուրժուազիայի գեմ, վորը չի դադարում դիմագրություն ցույց տալ, վորը ուժեղացնում է իր դիմագրությունը» (տես էջ 240—241)։

Առարկելով պրոլետարիատի դիկտատուրան «համաժողովրդական», «ընդհանուրից ընտրված» իշխանությամբ, «վոչ-դասակարգային» իշխանությամբ փոխարինելու գեմ, Անինն առում է։

«Այս դասակարգը, վոր իր ձեռքն և առել քաղաքական տիրապետությունը, վերցրել և այն, զիտակցելով, վոր վերցնում և այն մենակ։ Այս պարունակվում է պրոլետարիատի դիկտատուրա հասկացողության մէջ։ Այս հասկացողությունն այն ժամանակ միայն իմաստ ունի, յերբ մի դասակարգ գիտե, վոր մենակ ինքնն է վերցնում իր ձեռքը քաղաքական իշխանությունը և չի խարում վոչ իրեն, վոչ ել ուրիշներին բարբառելով «համաժողովրդական, ընդհանուրից ընտրված, ամրող ժողովրդից նվիրագործված» իշխանության մասին» (տես հ. XVIII, մ. I, էջ 175)։

Այս չի նշանակում, սակայն, թե իշխանությունը իր ձեռքն առած մի դասակարգ, պրոլետարիատի դասակարգը, վորը մասնակից չի անում և չի կարող մասնակից անել այդ իշխանությանը մյուս դասակարգերին, կարիք չունի իր նպատակներն իրագործելու համար մյուս դասակարգերի աշխատավոր և շահագործվող մասսաների ողնության և դաշնակցության։ Ընդհակառակը։ Այդ դասակարգն իր իշխանությունը կարող է ամրապնդել և մինչեւ վերջը տանել միայն մի առանձին ձեփ դաշնակցություն կնքելով պրոլետարիների դասակարգի և մանր-բուրժուական աշխատավոր դասակարգերի մասսաների, ամենից առաջ զյուղացիության աշխատավոր մասսաների միջև։

Այդ ի՞նչ առանձին ձեփ դաշնակցություն և և ինչումն և նակայանում։ Մյուս, վոչ-պրոլետարական դասակարգերի աշխատավոր մասսաների հետ կնքած այս դաշնակցությունը առնասարակ չի հակասում արդյոք մի դասակարգի դիկտատուրայի դասակարին։

Դաշնակցության այդ առանձին ձել կայանում և նրանում, վոր այդ դաշնակցության ույժը դեկարող ձեռքը հանդիսանում

է պրոլետարիատը։ Դաշնակցության այդ առանձին ձել կայանում և նրանում, վոր պետության զեկավարը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ հանդիսանում է մեկ կուսակցություն—պրոլետարիատի կուսակցությունը, կոմմունիստների կուսակցությունը, վորը մասնակից չի անում յեվ չի կարող մասնակից անել զեկավարությանը մյուս կուսակցություններին։

Ինչպես տեսնում եք, հակասությունն այստեղ միայն առերկույթական է։

«Պրոլետարիատի դիկտատուրան,— առում է լենինը, — դասակարգային դաշնակցության մի առանձին ձեվ ե*), վոր կնքվում է պրոլետարիատի, աշխատավորության հառաջապահի և աշխատավորների վոչ-պրոլետարական բաղմաթիվ խափերի (մասր բուրժուազիա, մասր տնտեսատեր, զյուղացիություն, ինտելիգենցիա և այլն) կամ նրանց մեծամասնության միջև կապիտալի գեմ՝ կապիտալը լիովին տապալելու, բուրժուազիայի գիմազրությունը լիովին ճնշելու, նրա կողմից հին իրավակարգը վերականգնելու համար յեղած փորձերը ջախջախելու և վերջնականապես սոցիալիզմ ստեղծելու ու ամրապնդելու նպատակով։ Դա առանձին տեսակի մի դաշնակցություն է, վոր կազմվում և առանձին պարագաներում, այն ե՛ք քաղաքացիական կատաղի պատերազմի պարագաներում։ դա սոցիալիզմի հաստատուն կողմնակիցների դաշնաքիցներին «չեզոքների» հետ (այն ժամանակ պայքարի մասին յեղած համաձայնությունից դաշնաքը դառնում է համաձայնություն չեզոքության մասին), դաշնաքիցներին «չեզոքների» հետ (այն ժամանակ պայքարի միջև) (տես հ. XVI, էջ 241)։

Իր հրահանգչական գեկույցներից մեկում ընկ. Կամենյել, պիճարանելով պրոլետարիատի դիկտատուրայի այդպիսի հասկացողության դեմ, առում է։

«Դիկտատուրան մի դասակարգի դաշնակցություն չեվ*) մյուսի հետ» (տես «Պրավդա», № 11, 15 հունվարի 1925թ.)։

Յես կարծում եմ, վոր ընկ. Կամենյեն այստեղ ի նկատի ունի, ամենից առաջ, իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և

*) Բնողություն իմն է, ի. Սու.։

ոռւսական կոմմունիստների գործելակերպը՝ բրոցյուրի մի տեղը, ուր ասված է.

«Պրոլետարիատի դիկտատուրան մի հասարակ կառավարական վերնաշենք չե «փորձված ուսղմագետի» խնամուածեռքով «հմտորեն» «ընտրված» և բնակչության այս կամայն խավի վրա «խելացի կերպով հենված»։ Պրոլետարիատի դիկտատուրան պրոլետարիատի և զյուղացիության աշխատավոր մասսաների դասակարգային դաշնակցություն և կապիտալը տապալելու համար, այն պայմանով, վոր այդ դաշնակցության դեկավար ույժը հանդիսանում է պրոլետարիատը։

Յես ամբողջովին պաշտպանում եմ պրոլետարիատի դիկտատուրայի այս ձևակերպումը, վորովհետեւ կարծում եմ, վոր սամարդղովին և լիովին գուգագիպում և լենինի հենց նոր առաջընդունություն։

Յես պնդում եմ, վոր ընկ. Կամենյակի այն հայտարարությունը, թե «դիկտատուրան մի դասակարգի դաշնակցություն չի մյուսի հետ», վորը տրված և այնպիսի անվերապահ ձեռք, — վոչ մի առնչություն չունի պրոլետարիատի դիկտատուրայի լենինյան տեսության հետ։

Յես պնդում եմ, թե այլպես կարող են առել միայն այն մարդկի, վորոնք չեն հասկացել զորման գաղափարի, պրոլետարիատի և զյուղացիության դաշնակցության դաղափարի, այդ դաշնակցության մեջ պրոլետարիատի ունեցած հեղեղոնիայի գաղափարի իմաստը։

Այլպես առել կարող են միայն այն մարդիկ, վորոնք չեն հասկացել լենինյան թեզն այն մասին, թե՝

«Միայն համաձայնությունը զյուղացիության նետ»։ Կարող ե փրկել սոցիալիստական հեղափոխությունը Ռուսաստանում, քանի հեղափոխություն կի ծագել ուրիշ յերկըներում» (տես հ. XVIII, մ. 1, էջ 138)։

Այլպես առել կարող են միայն այն մարդիկ, վորոնք չեն հասկացել լենինի այն սկզբունքը, թե՝

*) Ըստգծումն իմն եւ ի. Ստ.։

«Դիկտատուրայի բարձր սկզբունքը») — գա գյուղացիության հետ պրոլետարիատի ունեցած դաշնակցության պահպանումն ե, վորպեսզի պրոլետարիատը կարողանա պահնել զեկավար դերը և պետական իշխանությունը» (տես հ. XVIII, մ. 1, էջ 331)։

Մատնանշելով դիկտատուրայի նպատակներից մեկը, շահագործողներին ճնշելու նպատակը, լենինն ասում ե.

«Դիկտատուրայի դիմական հասկացողությունը նշանակում ե վոչ այլ ինչ, յեթե վոչ մի իշխանություն, վոր սահմանափակված չե վոչ մի բանով, վոչ մի որենքով, վոչ մի կանոնով բառի բռն նշանակությամբ և հենվում ե անմիջականորեն բռնության վրա...։ «Դիկտատուրա նշանակում ե — այս բանը մի անգամ առ միշտ ընդունեցեք ի գիտություն, պարոնայք կադենակը — անսահմանափակ, ույժի և վոչ որենքի վրա հենվող իշխանություն։ Քաղաքացիական պատերազմի ժամանակ ամեն մի հաղթող իշխանություն կարող ե լինել միայն դիկտատուրա» (տես հ. XVII, էջ 361 և 355)։

Բայց, ի հարկե, բռնությամբ չի սպառվում պրոլետարիատի դիմականության, թեև առանց բռնության դիկտատուրա չի լինում։

«Դիկտատուրան, — ասում ե լենինը, — նշանակում ե վոչ միայն բռնություն, թեև նա անկարելի յե տոանց բռնության։ Նա նշանակում ե նաև աշխատանքի ավելի բարձր կազմակերպություն, բան նախորդ կազմակերպությունը» (տես հ. XVI, էջ 222)։

«Պրոլետարիատի դիկտատուրան... միայն բռնություն չե շահագործուների վրա և նույն իսկ վոչ գլխավորապես բռնություն։ Հեղափոխական այդ բռնության տնտեսական հիմունքը, նրա կինսունակության և աջղողության զբափականը հանդիսանում ե այն, վոր պրոլետարիատը ներկայացնում և իրագործում ե աշխատանքի հասարակական կազմակերպության ավելի բարձր տիպ կապիտալիզմի համեմատությամբ։ Սրանումն ե եյությունը։ Սրանումն ե կոմմունիզմի ույժի աղբյուրը և անխուսափելի կատարյալ հաղթության գրավականը» (տես հ. XVII, էջ 247—248)։ Նրա (այսինքն դիկտատուրայի, ի. Ստ.) գլխավոր եյությունը կայանում ե աշխատավորների առաջարկոր զորամասի, նրա միակ զեկավարի պրոլետարիատի կազմակերպված և դիմա-

**) Ըստգծումն իմն եւ ի. Ստ.։

յիսլինայի յենթարկված լինելու մեջ։ Նրա նպատակն է ստեղծել սոցիալիզմ, վոչչացնել հասարակության բաժանումը դասակարգերի, աշխատավոր դարձնել հասարակության բոլոր անդամներին, արմատափիլ անել մարդը մարդու կողմից շահագործվելու ամեն մի հնարավորություն։ Այս նպատակը չի կարելի իրագործել մի անգամից, ոտքահանջում և բավական յերկարատև ժամանակաշրջան կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու, —թե նրա համար, վոր արտադրության վերակազմումը դժվար բան է, թե նրա համար, վոր ժամանակ և պետք արմատական փոփոխություններ մատցնելու կյանքի բոլոր ասպարեզներում, թե նրա համար, վոր մանր-բուրժուական և բուրժուական տընտեսավարության սովորության ահագին ույժը կարելի յի հաղթահարել միայն յերկարատև համառ պայքարով։ Այս պատճառով ել Մարքսը խոսում է պրոլետարիատի դիկտատորյայի մի ամբողջ ժամանակաշրջանի, իբրև կապիտալիզմից դեպի սոցիալիզմ անցնելու ժամանակաշրջանի մասին» (անս նույն տեղը, եջ 226—227)։

Սրանք են պրոլետարիատի դիկտատուրայի բնորոշ գծերը։ Այստեղից են պրոլետարիատի դիկտատուրայի յերեք հիմնական կողմերը։

1) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը շահագործողներին ձնշելու համար, յերկրի պաշտպանության համար, մյուս յերկրների պրոլետարների հետ կապերն ամրապնդելու համար, բոլոր յերկրներում հեղափոխությունը դարգացնելու և հաղթելու համար։

2) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը աշխատավորների և շահագործվողների մասսաները բուրժուազիացից վերջնականապես անջատելու համար, պրոլետարիատի կապը այդ մասսաների հետ ամրապնդելու համար, այդ մասսաներին սոցիալիստական շինարարության գործին լծելու համար, այդ մասսաների պետական դեկալարության համար պրոլետարիատի կողմից։

3) Պրոլետարիատի իշխանության ոգտագործումը սոցիալիզմը կազմակերպելու համար, դասակարգերը վոչչացնելու համար, դեպի անդամակարգ հասարակություն, դեպի պետություն չունեցող հասարակություն անցնելու համար։

Պրոլետարական դիկտատուրան այս բոլոր յերեք կողմերի միացումն է։ Այս կողմերից վոչ մեկը չի կարող առաջ քաշվել իբրև պրոլետարիատի դիկտատուրայի միակ բնորոշ նշան և, ընդհակառակը, բավական ե այդ նշաններից գեթ մեկի բացակայությունը, վորպեսզի պրոլետարիատի դիկտատուրան դադարի դիկտատուրա լինելուց կապիտալիստական շրջապատի պարագաներում։ Ուստի այս յերեք կողմերից վոչ մեկը չի կարող մեջ տեղից վերացվել առանց խեղաթյուրելու պրոլետարիատի դիկտատուրայի իմաստը։ Միայն բոլոր այս յերեք կողմերը, միամին առած, տալիս են մեկ պրոլետարիատի լիակատար և ամբողջական հասկացողությունը։

Պրոլետարիատի դիկտատուրան ունի իր ժամանակաշրջանակի մերը, իր առանձին ձևերը, աշխատանքի բազմազան մեթոդները։ Քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում առանձնապես աչքի յի զարնում դիկտատուրայի բանի կողմը։ Բայց սրանից ամեննեին չի հետևում, թե քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում շինարարական վոչ մի աշխատանք տեղի չի ունենում։ Առանց շինարարական աշխատանքի քաղաքացիական պատերազմ վարել անկարելի յի։ Սոցիալիզմի շինարարության ժամանակաշրջանում, ընդհակառակը, առանձնապես աչքի յի զարնում դիկտատուրայի խաղաղ, կազմակերպչական, կուլտուրական աշխատանքը, հեղափոխական որինականությունը և այլն։ Բայց սրանից գարձյալ ամեննեին չի հետևում, թե դիկտատուրայի բանի կողմը վերացել և կամ կարող և վերանալ շինարարական ժամանակաշրջանում։ Ճնշման որգանները, բանակը և մյուս կազմակերպություններն անհրաժեշտ են այժմ, շինարարական ժամանակաշրջանում նույնքան, վորքան և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանում։ Առանց այդ որգաններն ունենալու անկարելի յի դիկտատուրայի քիչ թե շատ ապահովված շինարարական աշխատանք կատարել։ Զպետք և մոռանար, վոր հեղափոխությունը հաղթել և առայժմ ընդամենը միայն մեկ յերկում։ Զպետք և մոռանար, վոր քանի կա կապիտալիստական շրջապատ, կինի և զբսի զինական միջամտության վտանգ այդ վտանգից բղխող բոլոր հետեանքներով։

**ԿՈՒՍԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳԸ
ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ ԴԻԿՏԱՏՈՐԱՅԻ ՍԻՍՏԵՄԻ ՄԵջ**

Գերել յեւ խոսեցի պրոլետարիատի դիկտատորայի մասին նրա պատմական անխոռասիկելիության տեսակետից, նրա գառակարգային բովանդակության տեսակետից, նրա պետական բնույթի տեսակետից, վերջապես, նրա ավելածական և սուեղծագործական խնդիրների տեսակետից, վոր նա կատարում է կապիտալիզմից գեղի սոցիալիզմ՝ անցնելու ժամանակաշրջան կոչող մի ամերոջ պատմական ժամանակաշրջանի ընթացքում։

Այժմ՝ պետք է խոսնք պրոլետարիատի դիկտատորայի մասին նրա կառուցվածքի տեսակետից, նրա «մեխանիզմի», տեսակետից, այն «հաղորդիչների», «Ծակների» և «ուղղություն տվող ույժի» դերի ու նշանակության տեսակետից, վորոնց համագումարը կազմում և «պրոլետարիատի դիկտատորայի սիստեմը» (Անին) և վորոնց ողնությամբ իրագործվում է պրոլետարիատի դիկտատորայի ամենորյա աշխատանքը։

Ի՞նչ են այդ «հաղորդիչները» կամ «Ծակները», պրոլետարիատի դիկտատորայի սիստեմի մեջ։ Ի՞նչ է այդ «ուղղություն տվող ույժը»։ Ի՞նչի յեն պետք նրանք։

Ծակներն ու հաղորդիչները—այդ՝ պրոլետարիատի այն մասսայական կազմակերպություններն են, առանց վորոնց ողնության անկարելի յեւ դիկտատորայի իրագործումը։

Ուղղություն տվող ույժը—այդ՝ պրոլետարիատի առաջավոր գորաման և, նրա առաջապահը, վորը, հանդիսանում է պրոլետարիատի դիկտատորայի հիմնական զեկավար ույժը։

Այդ շարժիչները, Ծակները, ուղղություն տվող ույժը անհրաժեշտ են պրոլետարիատի համար այն պատճառով, վոր նա առանց գրանց իր հաղթության համար մղած պայքարի մեջ կտնվեր անդեն բանակի դրության մեջ կազմակերպված և զինված կապիտալի հանդեպ։ Այդ կազմակերպություններն անհրաժեշտ են պրոլետարիատին նրա համար, վոր առանց վրանց նա անխոռասիկի պարտություն կիրեր բուրժուազիային տապալելու

համար մղած իր պայքարի մեջ, իր իշխանությունն ամբապնդելու համար իր մղած պայքարի մեջ, սացիալիզմի շինարարության համար մղած իր պայքարի մեջ։ Այդ կազմակերպությունների սիստեմատիկ ոգնությունը և առաջապահի ուղղություն տվող ույժն անհրաժեշտ են նրա համար, վոր առանց այդ պայմանների անկարելի յեւ պրոլետարիատի քիչ թի շատ տեսական և հաստատուն դիկտատուրա։

Ի՞նչ են այդ կազմակերպությունները։

Այդ, նախ, լանվորների պրոֆմիություններն են իրենց մի շարք արտադրական, կուլտուրական, կրթական և այլ կառամակերպությունների ձեր ճյուղավորումներով կենտրոնում և տեղադրում։ Նրանք միացնում են բոլոր պրոֆեսիաների բանվորներին։ Դա կուսակցական կազմակերպություն չե։ Պրոֆմիությունները կարելի յեւ անվանել մեղնում տիրապետող բանվոր գասակարգի համար։ Նրանք հանդիսակարգի սիստեմի միացնություն։ Նրանք առաջ են քաշում իրենց միջից լավագույն մարդկանց գեկավար աշխատանքի համար պրօքության բոլոր ասպարեզներում։ Նրանք կապ են հաստագործություններում բանվոր գասակարգի կազմի մեջ առաջավորների և յետամացների միջև։ Նրանք միացնում են բանվորական մասսաները բանվոր գասակարգի առաջապահի հետ։

Այդ, յերկրորդ, խորհուրդներն են իրենց վարչական, արնատեսական, զինվորական, կուլտուրական և պետական այլ կառամակերպությունների ձեր բազմաթիվ ճյուղավորումներով, պլանաշխատավորների անհաջիվ շատ մասսայական ինքնարույն միացումները, վորոնք թիթեացնում են այդ կազմակերպությունները և միացնում նրանց բնակչության հետ։ Խորհուրդները քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորների մասսայական կազմակերպություններ։ Դա կուսակցական կազմակերպություն չե։ Խորհուրդները պրոլետարիատի դիկտատուրայի անմիջական արտահայտություններն են։ Խորհուրդների միջոցով են անցնում զինված կուտարածությունների ամբաղնդման և սոցիալիզմի շինարարության բոլոր և ամեն տեսակի ձեռնարկները։ Խորհուրդների միջոցով և իրագործվում գյուղացիության պետական զեկավարումը պրոլետարիատի կողմից։ Խորհուրդները միացնում են աշխատավորների միլիոնաց վոր մասսաները պրոլետարիատի առաջապահի հետ։

Այդ, յերբորդ, ամեն տեսակի կոռպերացիան և իր ըոլոր ճյուղավորումներով: Դա աշխատավորների մասսայական կազմակերպություն է, վոչ-կուսակցական կազմակերպություն, վոր միացնում է նրանց, ամենից առաջ, իբրև սպառողների, նմանապես և, ժամանակի ընթացքում, իբրև արտադրողների (գյուղատնտեսական կոռպերացիա): Նա առանձին նշանակություն և ստանում պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումից հետո, լայն շնորհարության ժամանակաշրջանում: Նա գյուրացնում է պրոլետարիատի առաջապահի կապը գյուղացիության մասսաների հետ և նարարարություն և ստեղծում վերջիններիս քաշելու դեպի սոցիալիստական շինարարության հունը:

Այդ, չորրորդ, յերիտասարդության միությունն է: Դա բանվոր և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն է, վոչ-կուսակցական, բայց կուսակցությանը հարող կազմակերպություն: Նրա խնդիրն է՝ ոգնել կուսակցությանը յերիտասարդ սերնդին սոցիալիզմի վորով դաստիարակելու գործում: Նա յերիտասարդ սեղերվիներ և տալիս պրոլետարիատի բոլոր մյուս մասսայական կազմակերպություններին վարչության բոլոր ասպարեզների համար: Յերիտասարդության միությունը առանձին նշանակություն և սատարել պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումից հետո պրոլետարիատի լայն կուլտուրական ու կրթական աշխատանքի ժամանակաշրջանում:

Այդ, վերջապես, պրոլետարիատի կուսակցությունն է, նրա առաջապահը: Նրա ույժը կայանում է նրանում, վոր նա իր մեջ և առնում պրոլետարիատի բոլոր լավագույն ույժերը նրա ըոլոր մասսայական կազմակերպություններից: Նրա նշանակությունը կայանում է նրանում, վորպեսզի միացնի պրոլետարիատի առանց բացառության բոլոր մասսայական կազմակերպությունների աշխատանքը և ուղղի նրանց գործողությունները մի նպատակի պրոլետարիատի ազատագրման նպատակին: Խոկ նրանց միացնել և ուղղել մի նպատակի գծով բացարձակապես անհրաժեշտ է, վորդինետև առանց այդ անկարելի յե պրոլետարիատի պայքարի միանականությունը, վորովհետև առանց այդ անկարելի յե պրոլետարիատի մասսաների ղեկավարությունը իշխանության համար նրանց մղած պայքարի մեջ, սոցիալիզմի շինարարության համար նրանց մղած պայքարի մեջ: Բայց պրոլետարիատի մաս-

սայական կազմակերպությունների աշխատանքը միացնել և այդ աշխատանքին ուղղություն տալ ընդունակ և պրոլետարիատի առաջապահը, նրա կուսակցությունը միայն: Պրոլետարիատի կուսակցությունն է միայն, կոմմունիստների կուսակցությունն է միայն, վոր ընդունակ և իրազործել հիմնական ղեկավարի այս դերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ:

Ի՞նչո՞ւ:

«Նրա համար, նախ, վոր կուսակցությունը հավաքակետ է բանվոր դաստիարակի բոլոր լավագույն տարրերի, վորոնք անմիջական կապեր ունեն պրոլետարիատի անկուսակցական կազմակերպությունների հետ և շատ հաճախ ղեկավարում են նրանց. յերկրորդ, նրա համար, վոր կուսակցությունը, իրեն բանվոր դաստիարակի լավագույն մարդկանց հավաքակետ, լավագույն դպրոցն է հանդիսանում պատրաստելու բանվոր դաստիարակի լիդերներ՝ ընդունակ ղեկավարելու իրենց դաստիարակի կազմակերպման բոլոր ձեերը. յերրորդ, նրա համար, վոր կուսակցությունը, իրեն բանվոր դաստիարակի լիդերների լավագույն դպրոց, իր փորձառությամբ և հեղինակությամբ հանդիսանում է միակ կազմակերպությունը, վոր ընդունակ և կենարունացնել պրոլետարիատի պայքարի ղեկավարությունը և, այդպիսով բանվոր դաստիարակի բոլոր և ամեն տեսակի անկուսակցական կազմակերպությունները գարձնել նրան դաստիարակի հետ միացնող սպասավոր որգաններ և շարժիչ փոկեր» (տես «Լենինիզմի հիմունքների մասին», եջ 134 135):

Կուսակցությունը հիմնական ղեկավար ույժ և պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ:

«Կուսակցությունը պրոլետարիատի դաստիարակացին մասսայական միացման բարձրագույն ձեռն ե» (Լենին):

Այսպես ուրեմն, պրոֆիլությունները, իբրև պրոլետարիատի մասսայական կազմակերպություն, վոր կապում և կուսակցությունը դաստիարակի հետ, ամենից առաջ արտադրական գծով. խորհուրդները, իրեն աշխատավորների մասսայական կազմակերպություն, վոր կապում և կուսակցությունը այդ աշխատավոր ների հետ, ամենից առաջ պետականության գծով. կոռպերացիան, իբրև մասսայական, ղեկավարությունը կյուղացիական, կազմակերպություն, վոր կապում և կուսակցությունը գյուղացիական մաս-

սաների հետ, ամենից առաջ տնտեսական գծով, գյուղացիությանը սոցիալիստական շինարարության մեջ քաշելու գծով. յերիտասարդության միությունը, իբրև բանվոր և գյուղացիական յերիտասարդության մասսայական կազմակերպություն, վոր կոչված և թեթևացնել պրոլետարիատի առաջապահի գործը նոր սերունդը սոցիալիստորեն դաստիարակելու և յերիտասարդ սեղերֆանը պատրաստելու, և, վերջապես, կուսակցությունը, իբրև ուղղություն տվող հիմնական ույժ պրոլետարիատի դիկտատուրայի սխառեմի մեջ, վոր կոչված և զեկավարելու այդ բոլոր մասսայական կազմակերպությունները, — այս և, ընդհանուր՝ առմամբ, դիկտատուրայի «մեխանիզմի» պատկերը, «պրոլետարիատի դիկտատուրայի սփառմի» պատկերը:

Առանց կուսակցության, իբրև հիմնական զեկավար ույժի, անկարելի յե պրոլետարիատի քիչ թե շատ տեսական և հաստատուն դիկտատուրա:

Այսպիսով, առենք լենինի խոսքերով, ստացվում է, ընդհանուրապես և ամբողջովին, ձևականորեն վոչ-կոմմունիստական, ճկուն և համեմատաբար լայն, խիստ ուժեղ պրոլետարական մի ապարատ, վորի միջոցով կուսակցությունը սերտորեն կապված և դասակարգի և մասսայի հետ և վորի միջոցով, կուսակցության զեկավարությամբ, իրազործվում և դասակարգի դիկտատուրան» (տես հ. ՀՎՊ, եջ 139):

Այս չի նշանակում, ի հարկե, թե կուսակցությունը կարու և կամ պետք և փոխարինի պրոֆմիություններին, խորհուրդներին և մյուս մասսայական կազմակերպություններին: Կուսակցությունն իրազործում և պրոլետարիատի դիկտատուրան: Բայց իրազործում և վոչ թե անմիջականորեն, այլ պրոֆմիությունների ոգնությամբ, խորհուրդների և նրանց ճյուղավորությունների միջոցով: Առանց այդ «հազորդիչների» քիչ թե շատ հաստատուն դիկտատուրա անկարելի կլիներ:

«Զի կարելի, — ասում է լենինը, — իրազործել դիկտատուրան առանց մի քանի «հազորդիչների», վորոնք տանուսն առաջապահից դեպի առաջավոր գասակարգի մասսաները, նրանից դեպի աշխատավորների մասսաները...»: «Կուսակցությունն, այսպես տած, իր մեջ և առնում պրոլետարիատի առաջապահին, և այդ առաջապահը իրազործում է պրո-

լիտարիատի դիկտատուրան: Առանց ունենալու այնպիսի հիմք, վորպիսին պրոֆմիություններն են, չի կարելի իրազործել դիկտատուրան, չի կարելի կատարել պետական գումարիցիաներ: Հարկ և լինում իրազործել նրանց մի շարք գարձյալ վորեւ նոր տիպի առանձին հաստատությունների միջոցով^{*)}, այս և խորհրդային պարագատի միջոցով^{*)}) (տես հ. ՀՎՊ, մ. 1, եջ 9 և 8):

Իբրև կուսակցության զեկավար գերի բարձրագույն արտահայտություն, որինակ, մեզնում, Խորհրդային Միության մեջ, պրոլետարիատի դիկտատուրայի յերկում, պետք և ընդունել այն փաստը, վոր վոչ մի կարեւոր քաղաքական կամ կազմակերպչական հարց չի վճռվում մեր խորհրդային և մյուս մասսայական կազմակերպությունների մեջ առանց կուսակցության զեկավար ցուցումների: Այս իմաստով կարելի յեր ասել, վոր պրոլետարիատի դիկտատուրան ըստ ելության նրա առաջապահի «դիկտատուրա» յե, նրա կուսակցության, իբրև պրոլետարիատի «հիմնական զեկավար ույժի «դիկտատուրա»: Ահա թե այս մասին ինչ եր ասում լենինը կոմինտերնի և կոնդրեսում.

«Տեններն ասում են, թե ինքը կողմնակից և պրոլետարիատի գիկտատուրայի, բայց պրոլետարիատի գիկտատուրան նա հասկանում են վոչ բոլորովին այնպիս, ինչպես մենք ենք հասկանում: Նա ասում են, թե պրոլետարիատի գիկտատուրա ասելով մենք հասկանում ենք իսկապես^{**)} նրա կազմակերպված և գիտակից գորբամանության գիկտատուրան: Յեվ իրոք, կապիտալիզմի ժամանակաշրջանում, յերը բանվորական մասսաներն յենթարկվում են անընդհատ շահագործման և չեն կարողանում զարգացնել իրենց մարդկանության մեջ բանվորների համար ամենից ավելի բնորոշ հանդիսանում են նոյն այն, վոր նրանք կարող են ընդգրկել իրենց զատակարգի միայն գորբամանությունը: Քաղաքական կուսակցությունը կարող է միացնել գասակարգի միայն գորբամանությունը, այնպես, ինչպես իսկապես գիտակից բանվորները ամեն մի կապիտալիստական հասարակության մեջ կազմնում են բոլոր բանվորների միայն գորբամանությունը: Աւտովի մենք ենք խոսավանել, թե միայն այդ գիտակից գորբամանությունը կարող է զեկա-

) Բնագծումն իմն եւ ի. Ստ.,

վարել բանվորական լայն մասսաներին և տանել նրանց իր յետեից: Յեթե ընկ. Տեհներն ասում եւ, թե ինքը թշնամի յե կուսակցության, բայց միևնույն ժամանակ կողմնակից և այն բանի, վոր ամենից ավելի լավ կազմակերպված և ամենից ավելի հեղափոխական բանվորների փոքրամասնությունը ճանապարհ ցույց տա ամբողջ պլոյետարիատին, ապա յես ասում եմ, վոր մեր միջեւ իսկապես տարբերություն չկա» (Տ. XVIII, եջ 270):

Նշանակում եւ այս, սակայն, թե պլոյետարիատի դիկտատուրայի և կուսակցության զեկավար գերի (կուսակցության «դիկտատուրայի») միջև կարելի յե հավասարության նշան դնել թե կարելի յե նույնացնել ասացինը յերկրորդի հետ, թե կարելի յե փոխարինել առաջինը յերկրորդով: Ի հարկեւ, չի նշանակում: Ի հարկեւ, չի կարելի: Այս, որինակ ընկ. Սորինն ասում եւ, թե «պլոյետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան ե» (տես «Լենինի ուսմունքը կուսակցության մասին», եջ 95): Այս սկզբունքը, ինչպես տեսնում եք, նույնացնում և «կուսակցության դիկտատուրան» պլոյետարիատի դիկտատուրայի հետ: Կարելի՞ յե արդյոք, լենինիզմի հողի վրա մնալով, տեսէ, թե ճիշտ և այս նույնացնումը: Վոչ, չի կարելի: Յեկ ահա թե ինչու:

Նախ: Կոմինտերնի Ո կոնգրեսում լենինի արտասահմած ճառից վերև առաջ բերված ցիտատի մեջ լենինը բնավ չի նույնացնում կուսակցության զեկավար գերը պլոյետարիատի դիկտատուրայի հետ: Նա խոսում է միայն այն մասին, թե «միայն գիտակից փոքրամասնությունը (այսինքն կուսակցությունը: Ի. Ստ.) կարող ե զեկավարել բանվորական լայն մասսաներին և տանել նրանց իր յետեից», թե հենց այս իմաստով ել «պլոյետարիատի դիկտատուրա ասելով մենք հասկանում ենք իսկապես»*) նրա կազմակերպված և գիտակից փոքրամասնության դիկտատուրան»: Ասել «իսկապես» դեռևս չի նշանակում տես «ամբողջովին»: Մենք հաճախ ասում ենք, թե ազգային հարցը իսկապես գյուղացիական հարց ե: Յեկ այս ըոլորտին ճիշտ ե: Բայց այս զեռևս չի նշանակում, թե ազգային հարցը սպառվում է գյուղացիական հարցով, թե պլոյացիական հարցը սպառվում է գյուղացիական հարցով, թե գյուղացիական հարցը սպառվում է գյուղացիական հարցով:

*) Բնդիքձումն իմն ե: Ի. Ստ.:

ազգային հարցին իր ծավալով, թե գյուղացիական հարցը նույնն ե, ինչ վոր ազգային հարցը: Հարկ չկա ապացուցելու, թե ազգային հարցն իր ծավալով ավելի լայն և հարուստ ե գյուղացիական հարցից: Նույնը պիտի ասել սրա նմանությամբ, կուսական հարցից: Յեւ կուսակցությունը գործադրում ե պլոյետարիատի դիկտատուրայի մասին: Յեթե կուսակցությունը գործադրում ե պլոյետարիատի դիկտատուրան և այս իմաստով պլոյետարիատի դիկտատուրան հանդիսանում ե իսկապես նրա կուսակցության «դիկտատուրա», ապա այդ գեռես չի նշանակում, թե «կուսակցության դիկտատուրան» (զեկավար գերը) նույնն ե, ինչ վոր պլոյետարիատի դիկտատուրան, թե առաջինն իր ծավալով հավասար ե յերկրորդին: Հարկ չկա ապացուցելու, թե պլոյետարիատի դիկտատուրան ծավալով ավելի լայն ու հարուստ ե կուսակցության զեկավար գերից: Կուսակցությունը գործադրում ե պլոյետարիատի դիկտատուրան, բայց գործադրում ե պլոյետարիատի, և վոչ թե ուրիշ վորեւ դիկտատուրա: Ով կուսակցության զեկավար գերը նույն կուսակցության պլոյետարիատի դիկտատուրայի հետ, նա կեղծիք և կատարում պլոյետարիատի դիկտատուրայի տեղը դնելով կուսակցության «դիկտատուրան»:

Յերկրորդ: Պրոլետարիատի մասսայական կազմակերպությունների վոչ մի վորոշում չի անցնում առանց կուսակցության զեկավար ցուցումների: Այս բոլորովին ճիշտ ե: Բայց նշանակում զեկավար ցուցումների: Այս բոլորովին ճիշտ ե: Այս արկուսակցության զեկավար ցուցումներով: Նշանակում ե այս արդյոք, թե կուսակցության զեկավար ցուցումները, այս պատճառվ կարելի յե նույնացնել պլոյետարիատի դիկտատուրայի հետ: Ի հարկեւ, չի նշանակում: Պրոլետարիատի դիկտատուրան ըաղկացած ե կուսակցության զեկավար ցուցումներից պլյուս այդ ցուցումների գործադրումը մասսայական կազմակերպությունների կողմից, պլյուս նրանց կիրառումը կյանքի մեջ ընակշության կողմից: Այստեղ մենք գործ ունենք, ինչպես տեսնում եք, մի շաբաթ անցումների և միջանկյալ աստիճանների հետ, գորոնք պլոյետարիատի դիկտատուրայի այնքան ել անկարեւը մոմենտը չեն կազմում: Հետեւբար կուսակցության զեկավար ցուցումների և կազմում: Հետեւբար կուսակցության զեկավար ցուցումների և նրանց կյանքի մեջ կիրառման միջև գտնվում են զեկավարվողների կամքն ու գորոնք կամքն ու գործադրությունները, դասակարգի կամքն ու գոր-

ծողությունները, նրա պատրաստակամությունը (կամ չկամությունը) աշակցել այդ ցուցումներին, նրա կարողությունը (կամ անկարողությունը) գործադրել այդ ցուցումները, նրա կարողությունը (կամ անկարողությունը) գործադրել այդ ցուցումները (կամ անկարողությունը) հենց այնպես, ինչպես պահանջում են հանգամանքները: Հազիվ թե ճարկ լինի ապացուցելու, թե կուսակցությունը, վորստանձնել ե ղեկավարությունը, չի կարող հաշվի չառնել ղեկավարվողների կամքը, կարողությունը, զիտակցության աստիճանը: Ուստի, ով կուսակցության ղեկավար դերը նույնացնում է պրոլետարիատի գիլտատուրայի հետ, նա կեղծիք է կատարում՝ գասակարգի կամքի և գործողությունների տեղը դնելով կուսակցության ցուցումները:

Յերրորդ: «Պրոլետարիատի գիլտատուրան, —ասում ե Ենինը, —հաղթած և քաղաքական իշխանությունն իր ձեռքն առած պրոլետարիատի գասակարգային սրայքար ե» (տես հ. XVII, եջ 240—241): Ինչում կարող ե արտահայտվել այդ դասակարգային պայքարը: Նա կարող է արտահայտվել պրոլետարիատի մի շարք զինված յելույթների մեջ տապալված բուրժուազիայի ըմբառացումների դեմ և ոտարերկրյա բուրժուազիայի զինական միջամտության դեմ: Նա կարող է արտահայտվել քաղաքացիական պատերազմի մեջ, յեթե պրոլետարիատի իշխանությունը ղեկաս չի ամրապնդված: Նա կարող է արտահայտվել պրոլետարիատի լայն կազմակերպչական և շինարարական աշխատանքի մեջ, գործին մասնակից անելով լայն մասսաներին, այն բանից հետո, յերբ իշխանությունն արդեն ամրապնդվել ե: Այս բոլոր դեպքերում իբրև գործող անձ հանդիսանում է պրոլետարիատն իբրև դասակարգ: Զի յեղած, վոր կուսակցությունը, մենամենակ սարքած լինի այս բարոր յելույթները բացառապես իր սեփական ույթերով, առանց դասակարգի աջակցության: Սովորաբար նա միայն ղեկավարում է այդ յելույթները և ղեկավարում այն չափով, վոր չափով գասակարգն աջակցում է նրան: Վորովհետեւ կուսակցությունը չի կարող փոխարինել նրան: Վորովհետեւ կուսակցությունը, իր ամրող կարևոր ղեկավար դերով հանդերձ, այնուամենայնիվ մնում է իբրև դասակարգի մաս: Ուստի, ով կուսակցության ղեկավար դերը

նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա կեղծիք է կատարում՝ դասակարգի տեղը դնելով կուսակցությունը:

Չորրորդ: Կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի դիկտատուրան: «Կուսակցությունը —գա պրոլետարիատի անմիջականորեն կառավարող առաջապահն է, —նա զեկավար է» (Ենին): Այս իմաստով կուսակցությունը վերջնում է իշխանությունը, կուսակցությունը կատավարում է յերկիրը: Բայց այս դեռևս չի նշանակում, թե կուսակցությունն իրագործում է պրոլետարիատի գիլտատուրան պետական իշխանությունից դուրս, առանց պետական իշխանության, թե կուսակցությունը յերկիրը կառավարում և խորհուրդների գուրս, վոչ խորհուրդների միջուկ: Այս դեռևս չի նշանակում, թե կուսակցությունը կարելի յետույնացնել խորհուրդների հետ, պետական իշխանության հետ: Կուսակցությունը իշխանության միջուկն է: Բայց նա չե և չի կուսակցության պետական իշխանության հետ: «Իբրև կառավարող կուսակցություն, —ասում ե Ենինը, —մենք չեյինք կարող զինված կուսակցական վերին խափերի հետ խորհրդային վերին խափերը, և նրանք մեզնում միաձուրված են և այդպես ել կլինին» (տես հ. XVII, մ. 1, եջ 112): Այս կատարելապես ճիշտ է: Բայց սրանով ամենակին չի ուզում առել Ենինը, թե մեր խորհրդային հաստատություններն ամբողջովին, որինակ՝ մեր բանկը, մեր արանսպորտը, մեր տնտեսական հիմնարկները և այլն, մեր կուսակցության հաստատություններ են, թե կուսակցությունը կարող է փոխարինել խորհուրդներին և նրանց ճյուղավորությունը կարելի յետույնացնել պետական իշխանության հետ: Ենինը հաճախ ասում էր, թե «խորհրդային իշխանությունը պրոլետարիատի գիլտատուրա յե» և «խորհրդային իշխանությունը պրոլետարիատի գիլտատուրա յե» (տես հ. VII, եջ 44—46), բայց նա յերբեք չի առել, թե կուսակցությունը պետական իշխանություն է, թե խորհրդայինը և կուսակցությունը միենույնն են: Մի քանի հարյուր հազար անդամ ունեցող կուսակցությունը գեկավարում է մի քանի միլիոն կուսակցական և անկուսակցական մարդիկ ընդգրկող խորհրդայինը և նրանց ճյուղավորությունը կենտրոնում և աեղերում, թե ինչու, ասում ե Ենինը, «գիլտատուրան իրագործում է

Խորհուրդների մեջ կազմակերպված պրոլետարիատը, վորոնց (Խորհուրդներին) ղեկավարում և բոլշևիկների կոմմունիստական կուսակցությունը», թե «կուսակցության ամբողջ աշխատանքն ընթանում է Խորհուրդների միջոցով*»), վորոնք միացնում են աշխատավոր մասսաներին առանց պորֆեսիաների խորության» (տես հ. XVII, էջ 138 և 140), թե դիկտատուրան «հարկ է լինում իրագործել խորհրդային ապարատի միջոցով*») (տես հ. XVIII, մ. I, էջ 8): Ուստի, ով կուսակցության ղեկավար ղերը նույնացնում և պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա կեղծիք է կատարում՝ խորհուրդների, պետական իշխանության աելը դնելով կուսակցությունը:

Հինգերորդ: Պրոլետարիատի դիկտատուրա հասկացողությունը պետական հասկացողություն է: Պրոլետարիատի դիկտատուրան անպայման պարփակում է իր մեջ բանության հասկացողությունը: Առանց բանության դիկտատուրա չի լինում, յեթե դիկտատուրան հասկանանք այդ բառի իսկական իմաստով: Լենինը պրոլետարիատի դիկտատուրան վորոշում է իրրե «անմիջապես բանության վրա հենվող իշխանություն» (տես հ. XV, էջ 451): Այս պատճառով խոսել կուսակցության դիկտատուրայի մասին պրոլետարների գասակարգի վերաբերմամբ և նույնացնել այդ դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նշանակում է խոսել այն մասին, թե կուսակցությունը իր գասակարգի վերաբերմամբ պետք է լինի վոչ միայն ղեկավար, վոչ միայն պարագություն և ուսուցիչ, այլ և նրա վրա բանություն գործադրող մի տեսակ պետական իշխանություն: Ուստի, ով «կուսակցության դիկտատուրան» նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա լսելոյան յելնում է այն բանից, թե կուսակցության հեղինակությունը կարելի յե հիմնել բանության վրա, մի բան, վոր կատարյալ անհեթեթություն և և միանգամայն անհարիր և լենինիզմին: Կուսակցության հեղինակությունը պահպանվում է բանվոր գասակարգի վատահությամբ: Իսկ բանվոր գասակարգի վատահությունը ձեռք է բերվում վոչ թե բըռնությամբ, — բանությամբ վատահությունը միայն սպանվում է, — այլ կուսակցության ճշշտ տեսությամբ, կուսակցության ճշշտ

*.) Ըստ դումն իմն եւ ի. Սու.:

քաղաքականությամբ, կուսակցության անձնվիրությամբ բանվոր դարակարգին, նրա բանվոր դասակարգի մասսաների հետ ունեցած կապով, նրա պատրաստակամությամբ, նրա կարողությամբ համոզել մասսաներին իր լոգունգների ճշտությանը:

Ուրեմն ի՞նչ է հետեւմ այս բոլորից:

Հետեւմ ե այն, վոր՝

1) Լենինը կուսակցության դիկտատուրա խոսքը գործ է ածում այդ բառի վոչ թե իսկական իմաստով («բոնության վրա հենվող իշխանություն»), այլ փոխարերական իմաստով, ղեկավարության իմաստով.

2) ով կուսակցության ղեկավարությունը նույնացնում է պրոլետարիատի դիկտատուրայի հետ, նա խեղաթյուրում է լենինին, անձիշտ կերպով յուրացնելով կուսակցությանը բանության ֆունկցիաներ բանվոր դասակարգի վերաբերմամբ ամբողջությամբ վերցրած.

3) ով կուսակցությանը յուրացնում է նրան վոչ-հատուկ բանության ֆունկցիաներ բանվոր դասակարգի նկատմամբ, նա խանգարում է առաջալարի և դասակարգի միջն, կուսակցության և պրոլետարիատի միջն կանոնավոր փոխազարձ հարաբերությունների տարրական պահանջները:

Այսպիսով մենք մոտեցանք կուսակցության և դասակարգի, բանվորական դասակարգի մեջ յեղած կուսակցականների՝ և անկուսակցականների փոխարարերությունների խնդրին:

Լենին այդ փոխարարերությունները վորոշում է իրրե «փոխադարձ վստահություն»*) բանվոր դասակարգի և բանվորական մասսայի միջն (տես հ. XVIII, մ. I, էջ 135):

¶ Ի՞նչ է նշանակում այս:

Այս նշանակում է, նախ, թե կուսակցությունը պետք է ուշադիր ականջալուր լինի մասսաների ձայնին, թե նա պետք է ուշադիր վերաբերմբ մասսաների հեղափոխական բնագդին, թե նա պետք է ուսումնակարգի մասսաների պայքարի տակտիկան, ստուգելով այդ բանի վրա իր քաղաքականության ճշտությունը, թե նա, հետևաբար, պետք է վոչ թե միայն ուսուցանի, այլ և ուսանի մասսաներից:

*) Բնորդումն իմն եւ ի. Սու.:

Յերկրորդ, այս նշանակում է, թե կուսակցությունը պետք է որը-որին զբավի պրոլետարական մասսաների վատահությունը, թե նա պետք է իր քաղաքականությամբ և իր աշխատանքով կոփի իր համար մասսաների աջակցությունը, թե նա պետք է վոչ թե հրամայի, այլ համոզի ամենից առաջ գյուրացնելով մասսաներին սեփական փորձով հասկանալու կուսակցության քաղաքականության հշտությունը, թե նա, հետեւաբար, պետք է լինի իր դասակարգի ղեկավարը, առաջնորդը, ուսուցիչը:

Այս պայմանները խանգարել-նշանակում ե իւանգարել կանոնավոր փոխհարաբերությունները առաջապահի և դասակարգի միջե, վարկաբեկել «փոխազարձ վատահությունը», քանդել թե դասակարգային և թե կուսակցական դիսցիպլինան:

«Անշուշտ, —ասում ե կենինը, —այժմ արդեն զրեթե ամեն վոք տեսնում ե, վոր բոլշևիկներն իշխանությունն իրենց ձեռքին պահել չելին կարող վոչ միայն $2\frac{1}{2}$ տարի, այլ և $2\frac{1}{2}$ ամիս առանց խստագույշն, խսկապես վոր յերկաթյա դիացիպլինայի մեր կուսակցության մեջ, առանց քանվոր դասակարգի ամբողջ մասսայի նրան ցուց տված ամենալիակատար յեվ անձնվեր ազակցության*), այսինքն այդ դասակարգի մեջ յեղած այն բոլորի աջակցության, փրոնք մտածում են, ազնիվ են, անձնվեր, ազգեցիկ, ընդունակ իրենց յետեկց տանելու և վոգելու յետամաց խավերին» (տես հ. ԽIII, էջ 117):

«Պրոլետարիատի դիկտատուրան, — շարունակում է լենինը, — արյունավի և անարյուն, բռնի և խաղաղ, զինվորական և տնտեսական, գաստիգարակչական և վարչական համառ պայքար և հին հասարակության ույժերի և ավանդների դեմ: Միլիոնների և տասնյակ միլիոնների սովորության ույժը ամենասարսափելի ույժն ե: Առանց յերկաթյա և պայքարի մեջ կոփկած կուսակցության, առանց տվյալ դասակարգի մեջ յեղած բոլոր ազնիվ մարդկանց վստահությունը վայելող կուսակցության*), առանց մասսայի տրամադրությանը հետևող և նրա վրա ազգել կարողացող կուսակցության աջղողությամբ այդպիսի պայքարը վարել անկարելի յե» (տես Տ. ԽՄԱ, եջ 136):

Բայց ի՞նչպես ե ձեռք բերում կուսակցությունը դասակարգի՝ այդ վատահությունն ու աջակցությունը։ Ի՞նչպես ե կազմվում

*) *Лирический роман* К. Н. Устюгов

պրոլետարիատի դիկայատուրայի համար անհրաժեշտ յերկաթյան դիսցիպլինան, ի՞նչ հողի վրա յենա աճում:

Ահա թե ինչ է ասում այս մասին լենինը.

«Ինչո՞վ ե պահպանվում պրոլետարիատի հեղափոխական կուսակցության դիմացիպիլինան, ինչո՞վ ե նա ստուգվում: Ինչո՞վ ե ամրապնդվում: Նախ՝ պրոլետարական առաջապահի գիտակցությամբ և նրա անձնվիրությամբ հեղափոխությանը, նրա գիմացկունությամբ, անձնազոնությամբ, հերոսությամբ: Յերկրորդ՝ նրա կարողությամբ կապվելու, մոտենալու, վորոշ չափով յեթե ուզում եք, ծուլվելու աշխատավորների ամենալայն մասսաների*), ամենից առաջպրության, բայց նույնպես յեվ վոչ-պրոլետարական աշխատավոր մասսայի հետ: Յերրորդ՝ այդ առաջապահի իրագործած քաղաքական գեկավարության ձատությամբ, նրա քաղաքական ուսումնագիտության և տակտիկայի ճշտությամբ, պայմանով, վոր ամենալայն մասսաներն իրենց սեփական փորձով համոզվեն այդ ճշտությանը: Առանց այդպայմանների դիմացիպիլինա սուեղծելու փորձերը անխուսափելիորեն դառնում են դատարկ քան, Փրազ, ծամածություն: Իսկ այդ պայմանները, մյուս կողմից, չեն կարող առաջանալ մի անգամից: Նրանք մշակվում են միայն յերկարակ աշխատանքով, ծանր փորձով. Նրանց մշակումը թեթևանում և հեղափոխական կանոնավոր տեսությամբ, վորը, իր հերթին, չի հանդիսանում դոգմա, այլ վերջնականապես կազմվում է միայն սերտ-կապակցությամբ իսկապես մասսայական և իսկապես հեղափոխական շարժման պրակտիկայի հետ» (տես հ. XVII, էջ 118—119):

ՅԵՒ ապա

«Կապիտալիզմի գեմ հաղթություն տանելու աջողության համար պահանջվում է կանոնավոր փոխարարելություն հեղափոխական դասակարգը, պլոտետարիատը ղեկավարող կոմմունիստական կուսակցության և մասսաների, այսինքն բոլոր աշխատավորների և շահագործվողների միջև։ Միմիայն կոմմունիստական կուսակցությունը, յեթե իսկապես նա հանդիսանում է հեղափոխական դասակարգի առաջապահը, յեթե նա իր մեջ և պարփակում նրա բոլոր լավագույն ներկայացուցիչներին, յեթե նա բաղկացած է կատարելապես գիտակից, անձնվեր, կրթված և հեղափոխական համառ պայքարի բովով անցած կոմմունիստներից, յեթե այդ կուսակցությունը կարողաց անքան կապել իրեն իր դասակարգի ամբողջ կյանքի, իսկ նրա միջոցով

*) *L'nyq qdnyu mnu hifnu kti h. Umn.*

շահագործվողների ամբողջ մասսայի հետ և այդ դասակարգին ու այդ մասսային կատարյալ վատահությունն*) ներշնչել — միմիայն այդպիսի կուսակցությունն և ընդունակ զեկավարելու պրոլետարիատին ամենաանողոք, վճռական վերջին պայքարի մեջ կապիտալիզմի բոլոր ուժերի դեմ: Մյուս կողմից, միմիայն այդպիսի կուսակցության զեկավարության տակ պրոլետարիատն ընդունակ և ծավալելու իր հեղափոխական գրոհի ամբողջ հզորությունը, վոչինչ դարձնելով կապիտալիզմից վչացած բանվորական արիստակարիայի, հին արեգյունիոնիստական և կոռպերատիվային պարագուինների ու այլ չնչին փոքրասնության անխուսափելի անտարբերությունն ու մասսամբ դիմագրությունը, — ընդունակ և ծավալելու իր ամբողջ ուժը, վորը անչափ մեծ և, քան նրա բաժինը բնակչության մեջ, կապիտախոսական հասարակության հենց անտեսական կազմության շնորհիվ» (տես հ. ԽVI, էջ 232):

Այս մեջբերութներից հետևում ե, վոր՝

1) կուսակցության հեղինակությունը և պրոլետարիատի դիկտատուրայի համար անհրաժեշտ յերկաթյա դիսցիպլինան դասակարգի մեջ հիմնվում են վոչ թե վախի կամ կուսակցության «անսահման» իրավունքների, այլ բանվոր դասակարգի գեղի կուսակցությունն ունեցած վատահության վրա, բանվոր դասակարգի կողմից կուսակցությանը ցույց տված աջակցության վրա.

2) բանվոր դասակարգի վատահությունը գեղի կուսակցությունը ձեռք և բերվում վոչ միանգամից և վոչ ել բանվոր դասակարգի վրա բռնանալու միջոցով, այլ մասսաների մեջ կուսակցության վարած տեսական աշխատանքով, կուսակցության ձիշտ քաղաքականությամբ, նրա կարողությամբ՝ համոզելու մասսաներին իր քաղաքականության ձշտությանը մասսաների սեփական փորձի հիման վրա, կուսակցության կարողությամբ՝ ապահովելու իր համար բանվոր դասակարգի աջակցությունը, տանելու իր յետեկո բանվոր դասակարգի մասսաները.

3) առանց կուսակցության կանոնավոր, մասսաների պայքարի փորձով ամրապնդված քաղաքականության և առանց բանվոր դասակարգի վատահության չի լինում և չի կարող լինել կուսակցության իսկական զեկավարությունը.

*) Հաղթական իմաստ: Ի. Ստ.:

4) կուսակցությունը և նրա զեկավարությունը, յեթե նա վայելում և դասակարգի վատահությունը և յեթե այդ զեկավարությունը խական զեկավարություն և հանդիսանում, չեն կարող հակադրվել պրոլետարիատի դիկտատուրային, վորովհետեւ առանց բանվոր դասակարգի վատահությունը վայելող կուսակցության զեկավարության (կուսակցության «դիկտատուրային») անհնարին և պրոլետարիատի քիչ թե շատ հաստատում դիկտատուրա:

Առանց այս պայմանների կուսակցության հեղինակությունը և յերկաթյա գիսցիպլինան կամ դատարկ ֆրազ և, կամ սնապարծություն և արկածախնդրություն:

Զի կարելի պրոլետարիատի դիկտատուրան հակագրել կուսակցության զեկավարությանը («դիկտատուրային»): Զի կարելի, վորովհետեւ կուսակցության զեկավարությունը գլխավորն և պրոլետարիատի դիկտատուրայի մեջ, յեթե ի նկատի ունենանք քիչ թե շատ հաստատում և լիակատար դիկտատուրա, և վոչ թե այնպիսին, ինչպիսին, որինակ, Պարիզի կոմմունան եր, վորը թերի և անհաստատ դիկտատուրա յեր: Զի կարելի, վորովհետեւ պրոլետարիատի դիկտատուրան և կուսակցության զեկավարությունը գտնվում են, այսպես ասած, աշխատանքի մի գծի վրա, գործում են մի ուղղությամբ:

«Արգեն ինդիրի ձեւկերպումը միայն, — ասում ե Լենինը, — «կուսակցության դիկտատուրա թե՛ դասակարգի դիկտատուրա, պարագլուխների դիկտատուրա (կուսակցություն) թե՛ մասսաների դիկտատուրա (կուսակցություն)» — վկայում ե, թե մտքերի ինչպիսի անհնարին և անյելաների շփոթություն և արում: Ամենքին հայտնի յե, վոր մասսաները բաժանվում են դասակարգերի... վոր մասսաներին զեկավարում են սովորաբար և մեծ մասմբ, գեթ ժամանակակից քաղաքակիրթ յերկրներում, քաղաքական կուսակցությունները. վոր քաղաքական կուսակցությունները իբրև ընդհանուր կանոն կառավարվում են ամենից ավելի հեղինակավոր, ազգեցիկ փորձված, ամենապատասխանատու պաշտոնների համար ընտրվող պարագլուխ անվանվող անձերի քիչ թե շատ զիմացկուն խմբակների կողմից... Ասել խոսել և վերջը գալ ու մասսաների դիկտատուրան առհասարակ հակագրել պարագլուխների դիկտատուրային ծիծաղելի անհեթեթություն և հիմարություն ե» (տես հ. ԽVI, էջ 133-134):

Այս միանգամայն ճիշտ է: Բայց այս ճիշտ վորոշումը յեւնում և այն նախադրյալից, թե կանոնավոր փոխադարձ հարաբերություններ կան առաջապահի և բանվորական մասսաների միջև, կուսակցության և դասակարգի միջև: Այս վորոշումը յեւնում և այն յենթադրությունից, թե փոխադարձ հարաբերությունները առաջապահի և դասակարգի միջև մնում են, այսպես ասած, բնականոն, մնում են «փոխադարձ վստահության» սահմաններում: Իսկ յեթե այդպես չե՞ն, իսկ յեթե կանոնավոր փոխադարձ հարաբերությունները առաջապահի և դասակարգի միջև, «փոխադարձ վստահության» հարաբերությունները կուսակցության և դասակարգի միջև խանգարված են: Իսկ յեթե կուսակցությունն ինքն և սկսում այս կամ այն կերպ հակադրել իրեն դասակարգին, խախտելով դասակարգի հետ ունեցած կանոնավոր փոխադարձ հարաբերությունների հիմունքները, խախտելով «փոխադարձ վստահության» հիմունքները: Հնարավայր են առասարակ այսպիսի դեպքեր: Այս, հնարավոր են, յեթե կուսակցությունը սկսում է իր հեղինակությունը կառուցել մասսաների մեջ վոչ թե իր աշխատանքի և մասսաների վստահության վրա, այլ իր «անսահման» իրավունքների վրա. յեթե կուսակցության քաղաքականությունը պարզապես անձիշտ է, իսկ նա չի ուզում վերաքննել և ուղղել իր սիրալը. յեթե քաղաքականությունը ճիշտ է ընդհանրապես, բայց մասսաները դեռևս պատրաստ չեն այդ քաղաքականությունն յուրացնելու, իսկ կուսակցությունը չի ուզում կամ չի կարողանում սպասել, վորպեսզի հնարավորություն տա մասսաներին համոզվելու սեփական փորձի հիման վրա կուսակցության քաղաքականության ճշտությանը: Մեր կուսակցության պատմությունը մի շարք այդպիսի դեպքեր ե տալիս: Զանազան խմբավորումներ և ֆրակցիաներ մեր կուսակցության մեջ ընկան և ցրվեցին նրան համար, վոր խախտում եին այս յերեք պայմաններից մեկը, իսկ յերբեմն և այս բոլոր պայմանները, միասին առած:

Բայց սրանից հետեւմ ե, վոր պրոլետարիատի դիկտատուրի հակագրումը կուսակցության «դեկտատուրային» (դեկավարությանը) ճիշտ չի կարող ճանաչվել այն դեպքում միայն,

1) յեթե բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության բոլոր դասականանք վոչ թե դիկտատուրա ասելով հասկանանք վոչ թե դիկտատուրա այ-

րառի իսկական իմաստով («բոնության վրա հենվող իշխանություն»), այլ կուսակցության դեկավարություն, վորը բացասում ե բոնությունը դասակարգի վրա իր ամբողջությամբ վեցըրած, նրա մեծամասնության վրա, ինչպես և հասկանում ե լենինը.

2) յեթե կուսակցությունը տվյալներ ունի դասակարգի դեկավարը լինելու, այսինքն յեթե կուսակցության քաղաքականությունը համապատասխանում է դասակարգի շահերին.

3) յեթե դասակարգը, յեթե դասակարգի մեծամասնությունը ընդունում, յուրացնում է այդ քաղաքականությունը, համոզվում է, շնորհիվ կուսակցության աշխատանքի, այդ քաղաքականության ճշտությանը, վստահում է կուսակցությանը, և աշխատանքը նրան:

Այս պայմանների խախտումը անխուսափելիորեն ընդհարում է հարուցանում կուսակցության և դասակարգի միջև, պառակտում և զցում նրանց միջև, նրանց հակագրում և իրար:

Կարելի՞ յե զորով փաթաթել դասակարգի վզին կուսակցության դեկավարությունը: Վոչ, չի կարելի: Համենայն գեպս այդպիսի դեկավարությունը չի կարող քիչ թե շատ տեսկան լինել: Կուսակցությունը, յեթե ուզում է մնալ պրոլետարիատի կուսակցություն, պետք ե գիտնա, վոր ինքը հանդիսանում է, ամենից առաջ և զլիավորապես, բանվոր դասակարգի դեկավար, պարագաների ուսուցիչ: Մենք չենք կարող մոռանալ լենինի խոսքերը, վոր ասել ե նա այս առթիվ «Պետություն և հեղափոխություն» բրոշյուրի մեջ.

«Կըթելով բանվորական կուսակցությունը, մարքսիզմը կըթում է պրոլետարիատի մի առաջապահ, վոր ընդունակ ե իր ձեռքն առնել իշխանությունը և ամբողջ ժողովուրդը տանել գեպի սոցիալիզմ, ուղղություն տալ և կազմակերպել նոր իրավակարգ, լինել բոլոր աշխատավորների և շահագործվողների ուսուցիչը, դեկավարը, պարագլուխը*): իր հասարակական կյանքը առանց բուրժուազիայի և բուրժուազիայի դեմ կազմակերպելու գործում» (տես հ. XIV, մ. II, եջ 317):

Կարելի՞ յե ասել թե կուսակցությունը դասակարգի իսկական դեկավարը և հանդիսանում, յեթե նրա քաղաքականությունը

*.) Ընդգծում իմ և ի. Ստ.:

ձիշտ չե, յեթի նրա քաղաքականությունն ընդհարվում է գասա-
կարգի շահերի հետ: Ի հարկե, չի կարելի: Այդպիսի դեպքերուն
կուսակցությունը, յեթի նա ուզում է զելավար մնալ, պետք է
վերաբննի իր քաղաքականությունը, պետք է ուղղի իր քաղա-
քականությունը, պետք է խոստովանի իր սխալը և ուղղի այն:
Այս սկզբունքը հաստատելու համար կարելի յեր մատնանշել հենց
թեկուղ այնպիսի մի փաստ մեր կուսակցության պատմությու-
նից, ինչպես պարենի մասնատրման վերացման ժամանակաշրջանը,
յերբ բանվորներն ու գյուղացիական մասսաները պարզապես զժգոհ
հանդիսացան մեր քաղաքականությունից և յերբ կուսակցու-
թյունը բացարձակ և ազնվորեն ձեռք դարձեց այդ քաղաքակա-
նության վերաբննությանը: Ահա թե ինչ եր ասում այն ժամա-
նակ է ենինը Հնամագումարում պարենի մասնատրումը վերացնե-
լու և տնտեսական նոր քաղաքականությունը մտցնելու ինդրի
մասին:

«Մենք չպետք ե աշխատենք թագցնել վորեւ բան,
այլ պետք ե ասենք ուղղակի, վոր վյուղացիությունը մեզ-
նում սահմանված հարաբերությունների ձևից զժո՞ն ե, հա-
րաբերությունների այդ ձևը չի ուղղում և այդպես այլք չի
ապրի: Այս անվիճելի յե: Նրա այս կամքն արտահայտվեց
վորոշակի: Սա աշխատավոր բնակչության ահազին մաս-
սանների կամքն է: Մենք պետք ե հաշվի առնենք այս, և
մենք բավկանաչափ խոնուն քաղաքակետներ ենք, վոր-
պեսզի ասենք ուղղակի—յեկեք վերաբննենք»*) (տես հ.
XIII, մ. 1, եջ 138):

Կարելի՞ յէ ասել թէ կուսակցությունը պետք ե իր վրա առնի մասսաների վճռական յելույթների կազմակերպման ձեռներեցությունն ու զեկավարությունը միայն այն հիման վրա, վոր նրա քաղաքականությունն ընդհանուր առմամբ ճիշտ ե, յեթե այդ քաղաքականությունը գեռևս վստահություն և աջակցություն չի գտնում դասակարգի կողմից շնորհիվ, ասենք, նրա քաղաքական յետամացության, յեթե կուսակցությանը գեռևս չի աջնօղել համոզելու դասակարգին իր քաղաքականության ձշությանը շնորհիվ, ասենք, այն բանի, վոր անցքերը գեռևս չեն հասունացել: Վոչ, չի կարելի: Այդպիսի գեպքերում կուսակցու-

^{*)} Հնդկծումն իմն է։ Առ։

«Յեթե, — ասում ե լենինը, — հեղափոխական կուսակցությունը մեծամասնություն չունի հեղափոխական դասակարգերի առաջավոր զորամասերի և յերկրի մեջ, ապա կարգերի լիովորոշության մասին» (տես հ. խոսք ել չի կարող լինել ապատամբության մասին) (XIV, մ. 11, էջ 255):

«Առանց բանվոր դասակարգի մեծամասնության հայացքները փոխելու հեղափոխությունը անհնարին ե, իսկ այդ փոփոխությունը ստեղծվում է մասսաների քաղաքական փորձով» (տես հ. ԽVI, եջ 172):

«Պրոլետարական առաջապահը գաղափարապես սվաճրած է: Այս ե գլխավորը: Առանց այս բանի առաջին քայլն իսկ չի կարելի անել դեպի հաղթություն: Բայց սրանից գենես բավական հեռու յե հաղթությունը: Միմիայն առաջապահով հաղթել չի կարելի: Միմիայն առաջապահը նետել վճռական կովի, քանի վոր ամբողջ գասակարգը, քանի վոր լայն մասսաները զիրք չեն բռնել կամ ուղղակի ոգնելու նրան, կամ գեթ նրան բարյացակամ չեղողքություն պահանջելու և կատարելապես անընդունակ լինելու ոգնել նրա հակառակորդին,—վոչ միայն հիմարություն, այլ և վոճրագործություն կլիներ: Իսկ վորպեսզի իսկապես ամբողջ գաղափարը, վորպեսզի աշխատավորների և կապիտալիզ շահակարգը, վորպեսզի աշխատավորների և համարական լայն մասսաները համանեն այդ հազըճգողների իսկապես լայն մասսաները համար միմիայն պիսի զիրքի, զրա համար միմիայն պրոպագանզը, միմիայն ազիտացիան քիչ ե: Դրա համար հարկավոր ե այդ մասսաների սեփական քաղաքական փորձ» (աես նույն տեղը, եջ 179):

Հայտնի յեւ, վոր մեր կուսակցությունը հենց այսպէս ել վարչկեց Լենինի 1917 թվի ապրիլյան թեգիսներից սկսած մինչ Հոկտեմբերյան ապստամբությունը: Յեզ հենց նրան համար, վոր նա գործում եր Լենինի այդ ցուցումներով, որու համար ել նա շահեց ապստամբությունը:

Այսպես են հիմնականում առաջապահի և գասակարգի միջն կանոնավոր փոխարքերությունների պայմանները:

Ի՞նչ և նշանակում ղեկավարել, յեթե կուսակցության քաղաքականությունը ճիշտ է, իսկ կանոնավոր հարաբերությունները առաջապահի և դասակարգի միջև չեն խանդարվում:

Դեկավարել այսպիսի պայմաններում—նշանակում է կարողանալ համոզել մասսաներին կուսակցության քաղաքականության ճշտությանը, առաջ քաշել և կիրառել այնպիսի լոգունգներ, վորոնք մոտեցնում են մասսաներին կուսակցության դիրքերին և դյուրություն են տալիս նրանց հասկանալու իրենց սեփական փորձով կուսակցության քաղաքականության ճշտությունը, բարձրացնել մասսաներին մինչև կուսակցության դիտակցության մակարդակը և, այդպիսով, ապահովել մասսաների աջակցությունը, նրանց պատրաստակամությունը վճռական պայքարի համար:

Այս պատճառով համոզման մեթոզը հանդիսանում է իրրեհիմական մեթոդ կուսակցության կողմից մասսաներին ղեկավարելու համար:

«Յեթե մենք,—ասում են Անինը,—այս բովելին Ռուսաստանի և Անտանտի բուրժուազիայի գեմ տարած չտեսնված հաղթությունների 2 տարուց չետոպրոֆմիտությունները մտնելու համար պայման զնելինք «դեկատորայի ճանաչումը», զրանով հիմարություն կանելինք, կիշացնելինք մեր ազգեցությունը մասսաների վրա, կողնելինք մենշևիկներին: Վորովչետե կոմմունիստների ամրող խնդիրն եւ—կարողանալ համոզել յետամնացներին, կարողանալ գործել նրանց մեջ, և վոչ թե անջրպետութեանցից մտացածին յերեխայական-«Ճախ» լոգունդներով» (տես հ. XVII, էջ 144):

Այս չի նշանակում, ի հարկե, թե կուսակցությունը պետք է համոզի բոլոր բանվորներին, մինչև վերջին մարդը, թե այդ բանից հետո միայն կարելի յեւ գործողությունների դիմել, թե այդ բանից հետո միայն կարելի յեւ սկսել գործողությունները: Ամենեին: Այս նշանակում է միայն այն, թե նախ, քան վճռական քաղաքական գործողությունների դիմելը, կուսակցությունը պետք է ապահովի իր համար, հեղափոխական յերկարաժական աշխատանքի միջոցով, բանվորական մասսաների մեծամասնության աջակցությունը, դասակարգի մեծամասնության գիթ նպաստավոր չեղոքությունը: Հակառակ դեպքում՝ լենինյան նա-

խադրյալն այն մասին, թե բանվոր դասակարգի մեծամասնության գրավումը կուսակցության կողմը հանդիսանում է իր հաղթական հեղափոխության անհրաժեշտ պայման, - վոչ մի իմաստ չեր ունենա:

Իսկ փոքրամասնությանն ինչ անենք, յեթե նա չի ուզում, յեթե նա համաձայն չե հոժարակամ յենթարկվել մեծամասնությանը: Կարսղ և արդյոք կուսակցությունը, պետք եւ արդյոք կուսակցությունը, իր յետեն ունենալով մեծամասնության վստահությունը, ստիպել փոքրամասնությանը, վոր հնագանդվի մեծամասնության կամքին: Այսու կարող է և պետք եւ: Դեկավարությունն ապահովվում է մասսաներին համոզելու մեթոդով, վորը կուսակցության հիմնական մեթոդն է մասսաների վրա ազդելու համար: Բայց այդ չի բացասում, այլ թույլ ետալիս ստիպումը, յեթե այդ ստիպումը հենված է բանվոր դասակարգի մեծամասնության, դեպամասնության գեպի կուսակցությունը տածած վասահության, կուսակցությանը ցուց տված աջակցության վրա, յեթե նա զորդաղբում է փոքրամասնության վերաբերմամբ այն բանից հետո, յերբ կարողացել են համոզել մեծամասնությանը: Պետք է հիշել մեր կուսակցության մեջ այս մտախն յեղած վեճերը, վորոնք տեղի ունեցին պրոֆմիտութեական դիսկուսիայի ժամանակ: Ենչումն եր այն ժամանակ ոպողիցիայի սխալը, Ցելտրանի (Տրանսպորտի կենտրոնական կոմիտեյի) սխալը: Նրանում արդյոք, վոր ոպողիցիան այն ժամանակ հնարավոր եր համարում ստիպումը: Վոչ վոչ այս բանում: Ոպողիցիայի սխալն այն ժամանակ կայանում եր նրանում, վոր նա, անկարող լինելով համոզել մեծամասնությանը իր գիրքի ճշտությանը, կորցնելով մեծամասնության վասահությունը, այսուամենայնիվ սկսել եր ստիպում գործադրել, սկսել եր պնդել թե պետք է «թափահարել» մեծամասնության վասահությունն ունեցող մարդկանց:

Ահա թե ինչ եր ասում այն ժամանակ կենինը կուսակցության X համագումարում արհեստակցական միությունների մասին իր արտասանած ճառի մեջ.

«Բանվոր դասակարգի առաջապահի և բանվորական մասսայի միջև փոխադարձ հարաբերություն, փոխադարձ վասահությունն ասհմանելու համար պետք եր, յեթե Ցելտրանը սխալ եր գործել... պետք եր ուղղել այդ սխալ:

Բայց յերբ այդ սխալն սկսում են պաշտպանել, դա քաղաքական վասնզի աղբյուր և գառնում: Յեթե գեմոլրատիայի իմաստով մաքսիմալ հնարավորը չանելին այն տրամադրություններից, վոր արտահայտում է այստեղ կուտուզովը, մենք կհասնելինք քաղաքական սնանկության: Ամենից առաջ մենք պետք են համոզինք յեվ ապա ստիպենք*): Մենք չկարողացանք համոզել լայն մասսաներին և խանգարեցինք առաջապահի կանոնավոր փոխհարաբերությունը մասսաների հետ» (տես հ. XVIII, մ. 1, եջ 135):

Նույն և ասում Լենինն իր ճառի մեջ «Պողմիությունների մասին»:

«Մենք այն ժամանակ կանոնավորապես և աջողությամբ գործադրեցինք ստիպումը, յերբ կարողացանք նրա տակ դնել համոզման հիմքը» (տես նույն տեղը, եջ 19):

Յեվ այս միանգամայն ձիշտ ե: Վորովհետև առանց այս պայմանների անհնարին և վորեե զեկավարություն: Վորովհետև միայն այսպիսով կարելի յե ապահովել կուսակցության մեջ գործողությունների միասնականությունը՝ յեթե խոսքը վերաբերում և կուսակցությանը, դասակարգի գործողությունների միասնականությանը՝ յեթե խոսքը վերաբերում և դասակարգին ամբողջությամբ առած:

Առանց այս բանի բանվոր դասակարգի մեջ կտիրի պառակտում, տարածայնություն, քայլայում:

Սրանք են ընդհանուր առմամբ կուսակցության կանոնավոր զեկավարության հիմունքները:

Դեկավարության ամեն մի այլ հասկացողություն սինդիհալիզմ ե, անարխիզմ, բյուրոկրատիզմ,—ինչ ուղեք, —միայն գոչ բոլշեիզմ, միայն վոչ կոմմունիզմ:

Զի կարելի պրոլետարիատի դիկտատուրան հակագրել կուսակցության զեկավարությանը («դիկտատուրային»), յեթե կանոնավոր փոխհարաբերություններ կան կուսակցության և բանվոր դասակարգի միջև, առաջապահի և բանվորական մասսաների միջև: Բայց սրանից հետում ե, թե այդ պատճառով ել ավելի և չի կարելի նույնացնել կուսակցությունը բանվոր դասակարգի:

*.) Ըստգծումն իմն ե: Ի. Սու.:

հետ, կուսակցության զեկավարությունը («դիկտատուրան») բանվոր դասակարգի դիկտատուրայի հետ: Այն հիման վրա, թե կուսակցության «դիկտատուրան» չի կարելի հակագրել պրոլետարիատի դիկտատուրան, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան ե»: Բայց Լենինը միայն այն մասին չի խոսում, թե այդպիսի հակագրումը անթույլատրելի յե: Նա ասում ե ընդ սմին, թե անթույլատրելի յե «մասսաների դիկտատուրայի հակագրումը պարագուխների դիկտատուրային»: Չեյք հաճիւ արդյոք այս հիման վրա նույնացնել պարագուխների դիկտատուրան պրոլետարիատի դիկտատուրայի հետ: Այսուղությամբ գնալով, մենք պետք ե ասեինք, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր պարագուխների դիկտատուրան ե»: Խակ չե վոր, իսկապես ասած, հենց այս հիմարության և տանում կուսակցության «դիկտատուրայի» և պրոլետարիատի դիկտատուրայի նույնացման քաղաքականությունը...

Ի՞նչ և ասում այս մասին ընկ. Զինովյել:

Ընկ. Զինովյել, իսկապես, կանգնած և կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու նույն տեսակետի վրա, ինչ վոր և Սորինը, սակայն այն տարբերությամբ, վոր ընկ. Սորինն արտահայտվում է ավելի բաց ու պարզ խակ ընկ. Զինովյել պտույտապույտ և անում: Բավական և վերցնենք ընկ. Զինովյելի «Լենինիզմ» գրքից հենց թեկուղ հետեւյալ կտորը, այս բանում համոզվելու համար.

«Ի՞նչ ե, —ասում ե ընկ. Զինովյել, —Սիօն Միության մեջ գոյություն ունեցող իրավակարգը նրա դասակարգային բովանդակության տեսակետից: Դա պրոլետարիատի դիկտատուրա յե: Ի՞նչ ե իշխանության անմիջական զավանակը Միօն Միության մեջ: Ո՞վ ե իրավործում բանվոր դասակարգի իշխանությունը: —Կոմմունիստական կուսակցությունը: Այս իմաստով մեզնում կուսակցության դիկտատուրա յի *): Ի՞նչ տեսակ ե իշխանության իրավարանական ձեզ Միօն Միության մեջ: Ի՞նչ ե Հոկտեմբերյան հեղափոխության ստեղծած պետական կազմի նոր տիպը: Դա խոր-

*.) Ըստգծումն իմն ե: Ի. Սու.:

հըրդային սիստեմն եւ Մեկը բնավ չի հակասում մյուսին
(տես «Լենինիզմ», եջ 371):

Վոր մեկը մյուսին չի հակասում, դա, ի հարկե, ճիշտ ե, յեթե բանվոր գասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա ասելով համար կուսակցության ղեկավարությունը: Բայց ինչպես կարելի յե այս հիման վրա հավասարության զիծքաշել պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության «դիկտատուրայի» միջև, խորհրդային սիստեմի և կուսակցության «դիկտատուրայի» միջև: Լենինը խորհրդային սիստեմը նույնացնում եր պրոլետարիատի դիկտատուրայի հետ, և նա ճիշտ եր ասում, վորովհետեւ խորհուրդները, մեր խորհուրդները, հանդիսանում են աշխատավոր մասսաներին պրոլետարիատի շուրջը կուսակցության ղեկավարությամբ համախմբող կազմակերպություն: Բայց յերբ, վրաբեր, իր վար աշխատության մեջ Լենինը հավասարության նշան եր գնում կուսակցության «դիկտատուրայի» և պրոլետարիատի դիկտատուրայի միջև, կուսակցության «դիկտատուրայի» և խորհուրդների սիստեմի միջև, ինչպես այդ անում և այժմ ընկ. Զինովյել: Պրոլետարիատի դիկտատուրային չի համանում վոչ թե միայն կուսակցության ղեկավարությունը («դիկտատուրան»), այլ և պարագուխների ղեկավարությունը («դիկտատուրան»): Զեյթը հաճիլ արգյուք այս հիման վրա հայտարարել, թե մեր յերկրը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրայի յերկրը, այսինքն կուսակցության դիկտատուրայի յերկրը, այսինքն պարագուխների դիկտատուրայի յերկրը. չե վոր հենց դեպի այս հիմարությունն ե տանում կուսակցության «դիկտատուրան» պրոլետարիատի դիկտատուրայի հետ նույնացնելու «Ազգունքը», վոր թագուն և անհամարձակ անց և կացնում ընկ. Զինովյել:

Լենինի բազմաթիվ աշխատությունների մեջ ինձ աջողվեց դժունել միայն հինգ դեպք, ուր Լենինը անցողակի շոշափում և կուսակցության դիկտատուրայի խողիբը:

Առաջին դեպքը—դա ես-երների և մենշևիների հետ ունեցած բանավեճն ե, ուր նա ասում ե.

«Յերբ մեզ հանդիմանում են մի կուսակցության դիկտատուրայի համար և առաջարկում են, ինչպես լուսմ ենք, սոցիալիստական միասնական ճակատ, մենք ասում ենք.

«Եյ՛, մի կուսակցության դիկտատուրա: Մենք կանգնած ենք այս հոգի վրա և իջնել չենք կարող, վորովհետեւ սա այն կուսակցությունն ե, վոր տասնյակ տարիների ընթացքում նվազել և ամբողջ գործարանային և արդյունաբերական պրոլետարիատի առաջապահի դիրքը» (տես հ. ԽVI, եջ 296):

Յերկրորդ դեպքը—դա Կոլչակի դեմ տարած հաղթանակի առթիվ բանվորներին և զյուղացիներին ուղղած «Նամակն» ե, ուր նա ասում ե.

«Գյուղացիներին վախեցնում են (մանավանդ մենցեիկները և եռ-երները, ամենքը, նույն իսկ «Ճախերը» նրանցից) «մի կուսակցության», բոլցիկ-կոմմունիստների կուսակցության, «դիկտատուրայի» խրավիլակով: Կոլչակի որինակի վրա զյուղացիները սովորեցին չվախենալ խրավիլակից: Կամ կալվածատերների և կապիտալիստների դիկտատուրա (այսինքն յերկաթյա իշխանություն), կամ թե բանվոր դասակարգի դիկտատուրա» (տես հ. ԽVI, եջ 306):

Յերրորդ դեպքը—դա Լենինի ճառն և Կոմինաերնի 2-րդ կոնգրեսում Տինների հետ ունեցած բանավեճում: Այդ ճառից յես մեջբերում արի վերել:

Չորրորդ դեպքը—դա մի քանի տող և «Պրոլետարական հեղափոխությունը և ունեկատ Կառտասկին» բրոշյուրի մեջ: Համապատասխան մեջբերումներն արդեն արված են վերել.

Հինգերորդ դեպքը—դա պրոլետարիատի դիկտատուրային վերաբերյալ սխեմայի ուրվագծումն ե, վոր հրատարակված և III «Լենինյան ժողովածու»-ի մեջ, ուր կա «Մի կուսակցության դիկտատուրան» յենթավերնազիրը (տես «Լենինյան ժողովածու», III, եջ 497):

Գետք և մատնանշել, վոր հենգ գեղագերից յերկումի մեջ, վերջին և յերկրորդ դեպքում, «մի կուսակցության դիկտատուրան» խոսքերը Լենինը չակերտների մեջ և առնում, պարզապես շեշտելով այս ձեակերպության անձիշտ, փոխարերական իմաստը:

Պետք և նույնպես մատնանշել, վոր այս բոլոր դեպքերում բանվոր դասակարգի նկատմամբ «կուսակցության դիկտատուրա» ասելով Լենինը հասկանում ե վոչ թե դիկտատուրա այդ խոսքի իմական իմաստով («բռնության վրա հենված իշխանություն»), այլ կուսակցության ղեկավարություն:

Բնորոշ ե, վոր իր աշխատություններից, հիմնական թե յերկրորդական, և վոչ մեկում, ուր լենինը խոսում է կամ պարզապես հիշատակում պրոլետարիատի դիկտատուրայի և կուսակցության գերի մասին պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ, ակնարկ անդամ չկա այն մասին, թե «պրոլետարիատի դիկտատուրան մեր կուսակցության դիկտատուրան ե»: Ընդհակառակը այդ աշխատությունների ամեն մի եջը, ամեն մի տողը աղաղակում ե այդպիսի բանաձեռի գեմ (տես «Պետություն և հեղափոխություն», «Պրոլետարիան հեղափոխությունը և ուսուդատ Կառաւակին», «Չախության յերեխայական հիվանդությունը» և այլն):

Ավելի ևս բնորոշ ե, վոր կոմինտերնի 2-րդ կոնգրեսի կուսակցության քաղաքական գերին վերաբերող թեղինակը մեջ, վորոնք մշակված եյին լենինի անմիջական դեկավության տակ և փորոնց վրա հաճախ մատնանիշ եր լինում լենինն իր ձառների մեջ, իրեն կուսակցության գերի և խնդիրների ձիւտ ձևակերպման որինակների վրա, բառի լուն նշանակությամբ վոչ մի խոսք չկա կուսակցության դիկտատուրայի մասին:

Ի՞նչ ե ասում այս բոլորը:

Այն, վոր

ա) Անինը «կուսակցության դիկտատուրա» ձևակերպումը չեր համարում անրիծ, ձիշտ, ուստի դա լենինի աշխատությունների մեջ զործ ե ածվում խիստ հազվագեղ և յերբեմն չակերտների մեջ և առնվում:

բ) այն սակավ գեղքերում, յերբ լենինը հակառակորդների հետ ունեցած բանավեճում ստիպված եր խոսել կուսակցության դիկտատուրայի մասին, նա սովորաբար բացարում եր, թե բանվոր դասակարգի նկատմամբ կուսակցության դիկտատուրա առելով պետք ե հասկանալ կուսակցության դեկավություն.

գ) այն բոլոր գեղքերում, յերբ լենինը հարկ եր համարում գիտականորեն փորաշել կուսակցության գերը պրոլետարիատի դիկտատուրայի սիստեմի մեջ, նա խոսում եր բացառապես կուսակցության գեկավար գերի մասին (իսկ այդպիսի գեղքերը հաղարավոր են).

դ) հենց սրա համար ել լենինը «չի կռահել» կուսակցության գերին վերաբերող հիմնական բանաձեռի մեջ—յես ի նկատի

ունեմ կոմինտերնի 2-րդ կոնգրեսի բանաձեռները—մտցնելու «կուսակցության դիկտատուրա» ձևակերպումը.

յե) լենինիզմի տեսակետից արգարացի չեն և կարճատես են այն ընկերները, վորոնք նույնացնում են կամ աշխատում են նույնացնել կուսակցության «դիկտատուրան», ուրեմն և «պարագլուխների դիկտատուրան», պրոլետարիատի դիկտատուրայի հետ, վորովհետեւ նրանք խոփառում են առաջապահի և դասակարգի կանոնավոր փոխարարելության պայմանները:

Յես արդեն չեմ խոսում այն մասին, վոր «կուսակցության դիկտատուրա» ձևակերպումը, առանց վերև մասնանշված վերապահումների վերցրած, կարող ե մի շարք վտանգներ և քաղաքական մինուսներ ստեղծել մեր գործնական աշխատանքի մեջ: Առանց վերաբանումների վերցրած այդ ձևակերպումով կարծես թե թելագրում են՝

ա) անկուսակցական մասաներին, չհամարձակվեք հակառակել չհամարձակվեք դատողություն տալ վորովհետեւ կուսակցությունը ամեն ինչ կարող ե, վորովհետեւ մեղնում կուսակցության դիկտատուրա յե.

բ) կուսակցական կաղըերին, զործեցեք ավելի համարձակ, հուզ տվեք ավելի, կարելի յե և բանի տեղ չգնել անկուսակցական մասաների ձայնը,—մեղնում կուսակցության դիկտատուրա յե.

գ) կուսակցական վերին խավերին, կարող եք մի քիչ ինքնագոն լինել թերևս կարող եք նույն իսկ մի քիչ ել փքիւ վորովհետեւ մեղնում կուսակցության դիկտատուրա յե, «ուրեմն» և պարագլուխների դիկտատուրա:

Այս վտանգների մասին տեղում և հեշեցնել հենց այժմ, մասսաների քաղաքական ակտիվության բարձրացման ժամանակ, յերբ մասսաների ձայնին ուշադրությամբ ականջալուր լինելու համար կուսակցության ցույց տված պատրաստակամությունն առանձին արժեք և ներկայացնում մեզ համար, յերբ ուշադիր վերաբերմունքը գեղի մասսաների պահանջները հանդիսանում ե մեր կուսակցության հիմնական պատգամը, յերբ կուսակցությունից պահանջվում ե առանձին աշարջություն և առանձին ձկունություն քաղաքականության մեջ, յերբ փքիւր վտանգը մեկն և այն ամենալուրջ վտանգներից, վորոնք կանգնած են

կուսակցության առջե մասսաներին կանոնավորապես դեկտա-
րելու գործում:

Զի կարելի չհիշել կենինի վոսկի խոսքերը, վոր ասաց նա-
մեր կուսակցության ՀԱ համագումարում.

«Ժողովրդական մասսաների մեջ մենք (կոմմունիստ-
ները) այսուամենայնիվ մի կաթիլ ենք ծովի մեջ և մենք
կառավարել կարող ենք միայն այն ժամանակը, յերբ ճիշտ
ենք արտահայտում այն, ինչ վոր ժողովուրդն ե գիտակ-
ցում: Առաջ այս բանի կոմմունիստական կուսակցությունը
առաջ չի առանի պրոլետարիատին, իսկ պրոլետարիատը չի
առանի իր յետելից մասսաներին, և ամբողջ մեքենան կքանդ-
վի» (տես հ. XVIII, մ. II, էջ 55):

«Ճիշտ արտահայտել այն, ինչ վոր ժողովուրդն ե գիտակ-
ցում»—հենց այս ե այն անհրաժեշտ պայմանը, վոր կուսակցու-
թյան համար ապահովում ե պրոլետարիատի դիկտատուրայի
սիստեմի մեջ հիմնական դեկտար ուժի պատվավոր դերը:

VI

ՍՈՅԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՄԻ ՅԵՐԿՐՍԻՄ

«Լենինիզմի հիմունքների մասին» գրքույկում (1924 թ.
ապրիլ) սոցիալիզմի հաղթանակը մի յերկրում հարցի մասին կա-
յերկու ձեւակերպություն: Առաջին ձեւակերպությունն ասում ե,

«Առաջ հեղափոխության հաղթանակը մի յերկրում
անկարելի ելին համարում, յենթագրելով, թե բուրժուազիա-
յին հաղթելու համար անհրաժեշտ ե, վոր հանդես դան բո-
լոր առաջարկոր յերկրների կամ, համենայն գեպս, այդ յեր-
կրների մեծ մասի պրոլետարները: Այժմս այդ տեսակետն
այլևս չի համապատասնում իրականությանը: Այժմ պետք ե
յելակետ ընդունել հեղափոխության հաղթանակի հնարավո-
րությունը մի յերկրում: Քանի վոր զանազան կապիտա-
լիստական յերկրների զարգացման անհավասարաշափ և
ցատկուն բնույթը իմպերիալիզմի պայմաններում, վորոնք
հանգում են անխուսափելի պատերազմների, և հեղափոխա-
կան շարժման աճումը բոլոր յերկրներում վոչ միայն հնա-
րավոր, այլ և անհրաժեշտ են դարձնում պրոլետարիատի

հաղթանակն առանձին յերկրներում» (տես գրքույկի 3-րդ
գլուխը):

Միանդամայն ճիշտ ե այս սկզբունքը և մեկնաբանություն-
ների կարիք չի գործ: Նա ուղղված ե սոցիալ-դեմոկրատների
տեսության դեմ, վորոնք ցնորք (ուստպիսա) են համարում սլո-
ւեարիատի իշխանություն զրավելը մի յերկրում՝ առանց միա-
ժամանակ հաղթական հեղափոխության մյուս յերկրներում:

Սակայն «Լենինիզմի հիմունքների մասին» գրքույկում կա-
և յերկրորդ ձեւակերպությունը, ուր ասվում ե,

«Բայց տապակել բուրժուազիայի իշխանությունը և
նրա փոխարեն պրոլետարիատի իշխանություն հաստատել
մի յերկրում՝ գեռ չի նշանակում ապահովել սոցիալիզմի
կատարյալ հաղթանակը: Սոցիալիզմի գլխավոր խնդիրը—
սոցիալիստական արտադրության կազմակերպումը—դեռ
մնում է մեր առջևում: Կարելի՞ յե արդյոք լուծել այս խըն-
դիրը, կարելի՞ յե արդյոք մի յերկրում համեմ սոցիալիզմի
վերջնական հաղթանակին՝ առաջ մի քանի առաջափոր
յերկրների պրոլետարների միահամուր ջանքերի: Վոչ, ան-
կարելի յե: Բուրժուազիայի տապալման համար բավական
է մի յերկրի ջանքերը—այդ մասին վկայում է մեր հեղա-
փոխության պատմությունը: Սոցիալիզմի վերջնական հաղ-
թանակի՝ սոցիալիստական արտագրության կազմակերպման
համար՝ մի յերկրի, մանավանդ նուևաստանի նման մի
գյուղացիական յերկրի ջանքերն արդեն անբավարար են—
դրա համար անհրաժեշտ են մի քանի առաջափոր յերկրների
պրոլետարների ջանքերը» (տես նույն տեղը):

Այս յերկրորդ ձեւակերպությունն ուղղված եր լենինիզմի
քննադատաների, տրոցկիստների գեմ, վորոնք հայտարարում ելին,
թե պրոլետարիատի դիկտատուրան մի յերկրում չի կարող «դի-
մանալ պահպանողական Յեվրոպային», մյուս յերկրներում հաղ-
թանակ չունենալու դեպքում:

Այնքան, բայց միայն վորքան—այս ձեւակերպությունն այն
ժամանակ (1924 թ. ապրիլ) բավարար եր համարվում, և անկաս-
կած վորոշ ոգուտ տվեց:

Բայց հետագայում, յերբ լենինիզմի քննադատությունն
այդ շրջանակում արդեն հաղթահարված եր կուսակցության ներ-
ում, և յերբ ներթի գրվեց նոր հարց—առանց դրսի ոգնության,

մեր յերկրի ուժերով լլիվ սոցիալիստական հասարակության կառուցման հարցը, — այդ յերկրորդ ձևակերպությունն արդեն պարզ կերպով անբավարար, ուստի և սխալ հանդիսացավ:

Վղրն ե այդ ձևակերպության պակասը:

Նրա պակասն այն է, վոր նա յերկու զանազան հարցեր միացնում է մի հարցի մեջ: Առաջին՝ մի յերկրի ուժերով սոցիալիզմի կառուցման հնարավորության հարցը, վորին պետք է զրական պատասխան տալ. յերկրորդ՝ կարող ե արդյոք մի յերկր, ուր տիրում է պրոլետարիատի դիկտոտուրան, իրեն միանդամայն ապահով համարել դրսի զինված միջամտությունից (ինտերվենցիա), հետեւաբար նաև հին կարգերի վերահաստատումից (սեստրավրացիա) առանց մի շարք այլ յերկրների հաղթական հեղափոխության, — վորին պետք է բացասական պատասխան տալ: Ել չեմ խոսում այն մասին, վոր այդ ձևակերպությունն առիթ կարող է տալ կարծելու, թե սոցիալիստական հասարակության կազմակերպումը մի յերկրի ուժերով անհնարին է, վորն ի հարկե ճիշտ չե:

Այս հիման վրա յես փոխեցի, ուղղեցի այդ ձևակերպությունը իմ «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ուստական կոմմունիստների գործելակերպը» գրքույկում (1924 թ. գեկտեմբեր), բաժանելով այդ հարցը յերկուական. — առաջին՝ լիակատար ապահովություն բուրժուական կարգերի վերահաստատումից և յերկրորդ՝ լրիվ սոցիալիստական հասարակության կառուցման հնարավորություն մի յերկրում: Դրան հասարակացրելով նախ «սոցիալիզմի կատարյալ հաղթանակը», վորպես «կատարյալ ապահովություն հին կարգերի վերահաստատումից», վոր հնարավոր և միայն «մի քանի յերկրների պրոլետարների միահամուռ ջանքերով» և յերկրորդ՝ կենինի «կոռպերացիայի մասին» գրքույկի հիման վրա հայտարարելով այն անվիճելի ճշմարտությունը, վոր մենք լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար ունենք բոլոր անհրաժեշտ պայմանները (տես «Հոկտեմբերյան հեղափոխությունը և ուստական կոմմունիստների գործելակերպը»):

Հարցի այս նոր ձևակերպությունը հենց հիմք դարձավ XIX կուսակցական կոնֆերենցիայի «Կոմինտերնի խնդիրները և Ռուս. կոմ. կուս.» հայտնի բանաձեին, վորը սոցիալիզմի հաղթանակի հարցը մի յերկրում քննության է առնում կապված կապիտալիզ-

մի կայունության հետ (1925 թ. ապրիլ) և գտնում է, վոր սոցիալիզմի կառուցումը մեր յերկրի ուժերով հնարավոր է և անհրաժեշտ:

Այդ նոր ձևակերպությունը հիմք ծառայեց նաև իմ «XIV կուս. կոնֆերենցիայի աշխատանքների հետեւանքները» գրքույկին, վորը հրատարակվեց XIX կոնֆերենցիայից անմիջապես հետո, 1925 թ. մայիսին:

Այս գրքույկում հետեւյալն է ասված սոցիալիզմի մի յերկրում հաղթանակի հարցի մասին.

Մեր յերկրը ներկայացնում է հակասությունների յերկու խումբը: Մի խումբը պրոլետարիատի և գյուղացիության մեջ գոյություն ունեցող հակասություններն են (խոսքն այստեղ վերաբերում է մի յերկրում սոցիալիզմի կառուցմանը: Ի. Ստ.): Հակասությունների մյուս խումբը արտաքին հակասություններն են, վոր կան մեր յերկրի, այսինքն սոցիալիզմի յերկրի և բոլոր մյուս յերկրների, այսինքն կապիտալիզմի յերկրների միջն (խոսքն այստեղ վերաբերում է սոցիալիզմի վերջնական հաղթանակին: Ի. Ստ.)... Ով հակասությունների առաջին խումբը, վոր միանգամայն հաղթանակելի յե մի յերկրի ջանքերով, խառնում է հակասությունների յերկրորդ խմբին, վորի լուծման համար պահանջվում է մի քանի յերկրների պրոլետարների ջանքերը — նա ամենակոպիտ սխալն է թույլ տալիս իրեն լենինիզմի գեմ: Նա կամ խառնակիչ է, կամ անուղղելի հարմարապաշտ — ոպպորտունիստ» (տես «XIV կուսկոնֆերենցիայի աշխատանքների հետեւանքները»):

Սոցիալիզմի հաղթանակը մեր յերկրում հարցի առթիվ գրքույկում ասված է.

«Մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել և կկառուցենք գյուղացիության հետ, բանվոր դասակարգի զեկավարությամբ... քանի վոր պրոլետարիատի դիկտուտարայի ժամանակ՝ մենք ունենք... այն բոլոր ավանդները, վորոնք անհրաժեշտ են լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու՝ հաղթանակելով բոլոր և ամեն տեսակի ներքին դժբարությունները, վորովհետեւ մենք կարող ենք և պետք է հաղթանակենք այդ գժվարությունները մեր սեփական ույժերով» (տես նույն տեղը):

Իսկ սոցիալիզմի վերջնական հաղթանակի հարցի մասին առաջած ե գրքույկում:

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակը նշանակում է լիակատար ապահովություն դրսի գինական միջամտության փորձերից, հետևաբար և հին կարգերի վերահստատումից, քանի վոր հին կարգերի վերահստատման վորես լուրջ փորձ կարող ե տեղի ունենալ միայն դրսի ոժանդակությամբ, միայն միջազգային կապիտալի ոգնությամբ։ Դրա համար ել մեր հեղափոխության պաշտպանությունը բոլոր յերկրների բանվորների կողմից, ևս առավել այդ բանվորների հաղթանակը թեկուղ մի քանի յերկրում, առաջին հաղթանակող յերկրի լիակատար ապահովության անհրաժեշտ պայմանն ե դրսի զինական միջամտության և հին կարգերի վերահստատման փորձերից, անհրաժեշտ պայմանն ե սոցիալիզմի վերջնական հաղթանակի» (տես նույն տեղը):

Թվում ե, թե պարզ ե:

Հայտնի յէ, վոր նույն վոգով ե բացատրված այս հարցը նաև իմ «Հարցեր և պատասխաններ» գրքույկում (1925 թ. գեկտեմբեր):

Այսպես են փաստերը:

Այս փաստերը, կարծում եմ, հայտնի յեն բոլորին և ամեն մեկն, նաև ընկ. Զինովյան:

Յեթե այժմ, կուսակցության մեջ տեղի ունեցած գաղափարական կովից և XIV կուսկոնֆերենցիայում ընդունված բանաձևից համարյա յերկու տարի հետո (1925 թ. ապրիլ) ընկ. Զինովյանը համարավոր ե համարում իր յեզրափակման ճառի մեջ՝ XIV կուս. համագումարում (1925 թ. գեկտեմբեր) հրապարակ հանել Ստալինի գրքույկից հին, միանդամայն անբավարար ձևակերպությունը, վոր գրված ե 1924 թ. ապրիլին, իսրե հենակետ լուծելու սոցիալիզմի մի յերկրում հաղթանակի արդեն իսկ լուծված հարցը, — ապա ընկ. Զինովյանի այս յուրահատուկ ձեր վկայում ե միայն այն, վոր նա վերջնականապես իմանվել ե այդ հարցում։ Յետ քաշել կուսակցության այն ժամանակ, յերբ նա արդեն առաջ ե անցել, անցնել XIV կուսկոնֆերենցիայի բանաձևի կողքից այն ժամանակ, յերբ նա հաստատված ե արդեն կենտրոնմիտեյի պլենումի կողմից, — նշանակում ե անհույս կերպով

միրճվել հակասությունների մեջ, չհավատալ սոցիալիզմի կառուցման գործին, շեղվել կենինի ուղղուց և ստորագրել իր իսկ սեփական պարտությունը։

Ի՞նչ ե նշանակում սոցիալիզմի հաղթանակի հնարավորություն մի յերկրում:

Դա նշանակում է՝ պլողետարիատի և գյուղացիության միջն յեղած հակասությունները լուծելու հնարավորություն մեր յերկրի ներքին ույժերով։ հնարավորություն, վոր պլողետարիատը վերցնի իշխանությունը և ոգտագործի այդ իշխանությունը լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու մեր յերկրում՝ վայելելով մյուս յերկրների պլողետարների համակրանքն ու պաշտպանությունը, բայց առանց պլողետարական հեղափոխության նախնական հաղթանակի մյուս յերկրներում։

Առանց այդպիսի հնարավորության սոցիալիզմի կառուցումը կինի զուրկ հեռանկարից, զուրկ հավատից սոցիալիզմի կառուցման նկատմամբ։ Զի կարելի սոցիալիզմ կառուցել առանց հավատալու, թե կարելի յե այն կառուցել առանց հավատալու, թե մեր յերկրի տեխնիկական յետամնացությունը անհաղթահարելի խոչընդոտ չե լիակատար սոցիալիստական հասարակություն կառուցելու համար։ Բացասել այդպիսի հնարավորությունը նշանակում ե չհավատալ սոցիալիզմի կառուցման գործին, շեղվել լենինիզմից։

Ի՞նչ ե նշանակում սոցիալիզմի լիակատար, վերջնական հաղթանակի անկարելիություն մի յերկրում՝ առանց հեղափոխության հաղթանակի մյուս յերկրներում։

Դա նշանակում է լիակատար ապահովության անկարելիություն դրսի զինական միջամտությունից, հետևաբար բուրժուական կարգերի վերահստատումից, յեթե հեղափոխության հաղթանակ չկա գոնե մի շարք յերկրներում։ Բացասել այս անվիճելի սկզբունքը՝ նշանակում ե շեղվել ինտերնացիոնալիզմից, շեղվել լենինիզմից։

«Մենք, — ասում ե կենինը, — սպրում ենք վոչ միայն պետության մեջ, այլ և պետությունների սիստեմում և նորհրդային Հանրապետության յերկարատև գոյությունը իմապերիալիստական պետությունների կողքին անկարելի յերբ ի վերջո կհաղթի կամ մեկը, կամ մյուսը։ Իսկ մին-

չե այդ որը անխուսափելի յեն մի շարք ամենասոսկալի ընդհարումներ Խորհրդային Հանրապետության և բուրժուական պետությունների միջև։ Այդ նշանակում է, վոր պրոլետարիատը, վորպես տիրող գասակարգ, յեթե միայն նա ցանկանում է տիրել և տիրելու յե, պետք ե ապացուցի այդ նաև իր ռազմական կազմակերպությամբ» (հատոր XIX, եղ 102):

«Մեր առջե, — ասում ե ինսինը մի այլ տեղ, — մենք ունենք ծայր աստիճանի անկայուն, բայց համենայն դեպս անկամած, անառարկելի, վորոշ հավասարակշռություն։ Յերկար կտեի այդ, — չգիտեմ, և կարծում եմ, վոր չի կարելի խմանալ։ Հենց այդ պատճառով ել մեր կողմից հարկավոր և ամենամեծ զգուշություն։ Յեվ մեր քաղաքականության առաջին պատվիրաններ, առաջին գասն ե — մի դաս, վոր բըղիուում ե մեր մի առարվա կառավարական գործունեյությունից, մի դաս, վոր պետք ե յուրացնեն բոլոր բանվորներն ու գյուղացիները — ինել միշտ պատրաստ, հիշել, վոր մենք ընծառատված ենք այսպիսի մարդկանցով, գասակարգերով, կառավարություններով, վորոնք բացորոշ կերպով արտահայտում են իրենց ամենախոր առելությունը մեր նկատմամբ։ Պետք ե հիշել, վոր ամեն մի հարձակման դեպքում մենք մազից ենք կախված» (հ. XVIII, մ. I, եղ 425):

Թվում ե, թե պարզ ե:

Ինչպես ե հասկանում ընկ. Զինովյանը սոցիալիզմի հաղթանակի հարցը մի յերկրում։
Լսեցեք.

«Սոցիալիզմի վերջնական հաղթանակի տակ պետք ե հասկանալ զոնե՝ 1) գասակարգերի վերացումն, հետևաբար 2) մի գասակարգի, տվյալ դեպքում ողբուհարիատի դիկտատուրայի վերացումն...»։ «Վորպեսպի ավելի ճիշտ պարզենք մեզ համար, — շարունակում ե ընկ. Զինովյանը, — թե ինչպես ե դրվագ հարցը մենառում, Խորհրդային Միության մեջ 1925 թվին, պետք ե զանազանենք յերկու բան։ 1) սոցիալիզմ կառուցելու ապահով հնարավորթյուն — սոցիալիզմ՝ կառուցելու այդպիսի հնարավորթյուն, հասկանալի յե, լիակատար կերպով կարելի յե ի նկատի առնել և մի՛ յերկրի շըրջանակներում, և 2) սոցիալիզմի վերջնական կառուցումն և սոցիալիզմի ամրապնդումն, այսինքն սոցիալիստական կազմի, սոցիալիստական հասարակության իրականացումն» (տես «Ենինիզմ» — Զինովյան, եղ 293):

Ի՞նչ ե նշանակում այս բոլորը։

Այն, վոր մի յերկրում սոցիալիզմի վերջնական հաղթանակի տակ ընկ. Զինովյանը հասկանում է վոչ թե ապահովություն դրսի զինական միջամտությունից և հին կարգերի վերահստատումից, այլ սոցիալիստական հասարակություն կառուցելու հնարավորություն։ Իսկ մի յերկրում սոցիալիզմի հաղթանակի տակ ընկ. Զինովյանը հասկանում է սոցիալիզմի այնպիսի կառուցումն, վորը չի կարող և չպետք ե հանգի սոցիալիզմի կառուցման։ Կառուցում յա բախտ, առանց հետանկարի, սոցիալիզմի կառուցումն սոցիալիստական հասարակություն կառուցելու անկարելիության դեպքում — ահա ընկ. Զինովյանի գիրքը։

Սոցիալիզմ կառուցել առանց նրան կառուցելու հնարավորության, կառուցել իմանալով, վոր չես կառուցելու — ահա թե ինչ անհետությունների հասավ ընկ. Զինովյանը։

Բայց չե վոր դա ծալլը ե հարցի նկատմամբ և վոչ թե հարցի լուծումն։

Ահա մի կտոր ես ընկ. Զինովյանի XIX համագումարում պատճենագործակման ճառից։

«Նայեցեք, թե մինչեւ ուր հասավ, որինիկ, ընկ. Յակովիկ կովկան վերջին նահանգական կոնֆերենցիայում։ «Կալով ենք արդյոք մենք, — հարց ե տալիս ընկ. Յակովիկը, — շըրջապատված լինելով բոլոր կողմերից թշնամիներով, սոցիալիզմ կառուցել մի յերկրում։ Յեվ պատսախանում ե. «Բոլոր ասածների հիման վրա իրավամբ կարող ենք ասել, թե մենք վոչ միայն կառուցում ենք սոցիալիզմ, այլ վոր մենք, չնայած այն բանին, վոր դեռ մենակ ենք, վոր դեռ ամբողջ աշխարհում միակ խորհրդային յերկրին ենք, միակ խորհրդային պետությունը — կառուցենք այդ սոցիալիզմը» («Կուրսկայա Պրավդա» № 279, 1925 թ. 8 դեկտ.)։ Մի՛թե սա լինինյան մոտեցումն ե հարցին. մի՛թե այսուեղից ազգային սահմանափակության հոտ չի զալիս» *):

Այսպիսով ըստ ընկ. Զինովյանի գուրս ե զալիս, վոր մի յերկրում սոցիալիզմ կառուցելու հնարավորությունն ընդունել — նշանակում ե կանգնել ազգային սահմանափակության տեսակետի

*.) Բնողջում իմ ե. Ի. Ստ.,

վրա, իսկ բացասել այդ հնարավորությունը՝ նշանակում ե կանգնել ինտերնացիոնալի տեսակետի վրա:

Սակայն, յեթե այդ ճիշտ ե, այդ դեպքում արժե՞ արդյոք կոխվ մղել առհասարակ մեր տնտեսության կապիտալիստական տարրերը հաղթահարելու համար: Զի՞ հետեւմ արդյոք այստեղից, թե անհար ե այդ հաղթահակը:

Կապիտուլյացիա մեր տնտեսության կապիտալիստական տարրերի առաջ - ահա թե ուր ե տանում ընկ. Զինովյան պատճառարանության ներքին տրամարանությունը:

Յեզ այս անհեթեթությունը, վոր վոչ մի ընդհանուր բան չունի լենինիդմի հետ, ընկ. Զինովյան մատուցում ե մեզ իրքն «ինտերնացիոնալիզմ», իբրև «հարյուր տոկոսի լենինիզմ»:

Յես պնդում ե հաստատում եմ, վոր սոցիալիզմի կառուցման ամենակարենը հարցում ընկ. Զինովյան հեռանում է լենինիզմից, գլորվելով մենշևիկ Սովխանովի տեսակետի վրա:

Դիմենք լենինին: Ահա թե ինչ եր ասում նա սոցիալիզմի մի յերկում հաղթահակի մասին գետ մինչեւ Հոկտեմբերյան հեղափոխությունը, 1915 թվի ողոսառախն:

«Տնտեսական և քաղաքական գարգացման անհամաշտությունը կապիտալիզմի անվայիման որենքն ե: Այստեղից հետեւում ե, վոր հնարավոր ե սոցիալիզմի հաղթանակը սկզբում մի քանի կամ նույն իսկ մի առանձին կապիտալիստական յերկում: Այդ յերկորի հաղթող պրոլետարիատն եքսպրոպրիացիայի, յենթարկելով բուրժուազիային և կազմակերպելով իր յերկում սոցիալիստական արտադրություն*), կկանգնի մնացած կապիտալիստական աշխարհի դեմ, դեպ իրեն գրավելով մյուս յերկուների ճնշված դաստկարգերին, ապստամբություն առաջ բերելով նրանց մեջ կապիտալիստների դեմ, անհրաժեշտ դեպում նույն իսկ սագմական ույժով հանդես գալով շահագործող դասակարգերի և նրանց պետությունների դեմ» (տես հ. XIII, եջ 133):

Ի՞նչ ե նշանակում լենինի այս ընդգծված՝ «կազմակերպելով իր յերկում սոցիալիստական արտադրություն» դարձվածքը: Այդ նշանակում ե, վոր հաղթող յերկորի պրոլետարիատը կարող ե յեվ պետք ե, իշխանությունն իր ձեռքը վերցնելուց

կազմակերպել սոցիալիստական արտադրություն: Սակայն ի՞նչ ե նշանակում «սոցիալիստական արտադրություն կազմակերպել»: Այդ նշանակում ե կառուցել սոցիալիստական հասարակություն: Հազիվ թե պետք լինի ապացուցել, թե լենինի այս պարզ և վոռոշ սկզբունքը կարիք չի գդում այլև մեկնաբանությունների հակառակ դեպքում անհասկանալի կլինիկին լենինի կոչերը վրութարիատին իշխանությունը վերցնելու 1917 թ. հոկտեմբերին:

Տեսնում եք, վոր լենինի այս պարզ սկզբունքը, ինչպես յերկինքը յերկորից, ապրելը պատճենագործ և ընկ. Զինովյանի խառնաշփոթ և հակաբենինյան այն «սկզբունքից», թե մենք կարող ենք սոցիալիզմ կառուցել «մի յերկորի ըջանակներում», վերջնական կառուցման անկարելիության դեպքում:

Լենինն այդ բանն ասել է 1915 թ. մինչեւ պրոլետարիատի իշխանության հասնելը: Բայց գուցե իշխանությունը վերցնելու փորձից, 1917 թվից հետո փոխվել են նրա հայացքները: Դիմենք լենինի: «Կոռպերացիայի մասին» գրքույկին, վոր գրված է 1923 թվին:

«Իրոք, — ասում ե լենինը, — արտադրության բոլոր խոռոշությունները պետության իշխանության ներքո, պետության իշխանությունը՝ պրոլետարիատի ձեռքին, այդ պրոլետարիատի սերտ կապը բազմամիլիոն մասր և մանրագույն գյուղացիների հետ, այդ պրոլետարիատի ղեկավարության ապահովությունը գյուղացիության նկատմամբ և այլն՝ միթե այս չե բոլորն, ինչ վոր հարկավոր ե այն բանը համար, վորպեսզի կոռպերացիայից, հենց միայն կոռպերացիայից, վորին մենք առաջ բանի տեղ չեյինք զնում իրեն չարչիական մի բան, և վորին վորոշ տեսակետից իրավունք ունենք այժմ եւ նեպի ժամանակ, նույն կերպ վերաբերվելու, — միթե այս չե բոլոր անհրաժեշտը, վոր հարկավոր ե լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար*): Սա զեռ ես սոցիալիստական հասարակության կառուցվածք չե, բայց այս ե այն բոլոր անհրաժեշտն ու բավարարը, վոր հարկավոր ե այդ կառուցվածքի համար» (տես հ. XVIII, մ. 11, եջ 140):

*.) Բնդիքծումն իմն ե: Ի. Սու.

Ուրիշ խոսքով մենք կարող ենք և պետք ե կառուցենք լրիվ սոցիալիստական հասարակություն, քանի վոր մեր տրամադրության տակ ունենք բոլոր անհրաժեշտն ու բավարարն այդ կառուցվածքի համար:

Թվում ե, թե չի կարելի սրանից ավելի պարզ արտահայտվել: Ենինի այս կլասիկ սկզբունքը համեմատեցեք ընկ. Զինովյանի հակալենինյան պատասխանի հետ ուղղված ընկ. Յակովյան, և դուք կհասկանաք, վոր ընկ. Յակովյանը կրկնել ե միայն լենինի խոսքերը սոցիալիզմի կառուցման հնարավորության մասին մի յերկրում, իսկ Զինովյանը հանդես գալով այդ սկզբունքի դեմ, մտակելով ընկ. Յակովյանի շեղվել և լենինից և կանգնել մենակի Սուխանովի տեսակետի վրա, մեր յերկրում սոցիալիզմ կառուցելու անկարելիության տեսակետի վրա, ի նկատի առնելով մեր տեխնիկական յետամացությունը:

Հայտնի չէ միայն, թե ինչո՞ւ համար վերցրինք իշխանությունը 1917 թ. հոկտեմբերին, յեթե հույս չունեինք սոցիալիզմ կառուցելու:

Հարկավոր չեր վերցնել իշխանությունը 1917 թ. հոկտեմբերին—անա թե ինչ յեղակացության և բերում ընկ. Զինովյանի պատճառաբանության ներքին տրամաբանությունը:

Այնուհետև յես ոնդում եմ, վոր սոցիալիզմի հաղթանակի ամենակարենը հարցում ընկ. Զինովյան հակառակ և զնում մեր կուսակցության փորոշ վճիռներին, վորոնք հաստատված են ԽՄԿ կուսկոնֆերենցիայի «կոմիստերնի խնդիրները և Ռ.Կ.Կ. Կոմիստերնի ընդարձակած պլենումի առթիվ» հայտնի բանաձևով:

Դիմենք այդ բանաձերին: Ահա թե ինչ և առված այնտեղ սոցիալիզմի հաղթանակի մասին մի յերկրում.

«Յերկու ուղղակի հակադիր հասարակական սիստեմների գրյությունը առաջ և բերում կապիտալիստական պաշարման (բլոկադա), տնտեսական ձնշման այլ ձևերի, դրանի զինված միջամտության, հին կարգերի վերականգնման սպառնալիքը: Սոցիալիզմի վերջնական հաղթանակի միակ ապահովությունը, այսինքն ապահովությունն իին կարգերի վերականգնումից» հաղթանակի մասին ուղղությունը, այսինքն ապահովությունն իին կարգերի վերականգնումից» հաղթանակի սոցիալիստական հեղափոխությունն ե մի շարք յերկրներում...»: «Լենինիզմը սովորե-

*) Բաղդամեներն իմն են: Ի. Ստ.:

յնում ե, վոր սոցիալիզմի վերջնական հաղթանակը հին կարգերի վերականգնությունը լիակատար ապահովության մտքով հասրավոր ե միայն միջազգային մասշտաբով...»: «Դրանից ամենեին չի բղխում, թե անհնարին և լրիվ սոցիալիստական հասարակության կառուցումն մի այնպիսի յատանաց յերկրում, ինչպիսին Ծովասատանն ե, առանց տեխնիկապես և տնտեսապես զարգացած յերկրների «պետական ոգնության» (Տրոցկի): (Ցես բանաձերը):

Տեսնում եք, վոր բանաձեր սոցիալիզմի վերջնական հաղթանակը բացատրում ե վորպես ապահովություն դրախ զինական միջամտությունից և հին կարգերի վերականգնությունից միանգամայն հակառակ ընկ. Զինովյանի բացատրության, վոր տվել ե նա իր «Լենինիզմի մասին» գրքում:

Տեսնում եք, վոր բանաձեռն ընդունում ե լրիվ սոցիալիստական հասրամկության կառուցման հնարավորությունը մի այնպիսի յետամնաց յերկրում, ինչպիսին Ծովասատանն ե, առանց տեխնիկապես և տնտեսապես ավելի զարգացած յերկրների «պետական ոգնության»—միանգամայն հակառակ ընկ. Զինովյանի պնդումին ու ասածին ընկ. Յակովյանի դեմ XIX կուսհամազումարում արտասանած իր յեղափակման խոսքում:

Ի՞նչ անուն տալ զրան, յեթե վոչ պայքար ընկ. Զինովյանի կողմից XIX կուսհամազումարի բանաձերի դեմ:

Ի հարկե, կուսակցության բանաձեռները միշտ ել անսխալուկան չեն: Պատահում ե, վոր կուսհամազումարների բանաձեռները սխաներ են պարունակում: Ընդհանրապես ասած, կարելի յենթադրել վոր XIX կուսհամազումարի բանաձեր ևս ունի մի քանի սխաներ: Հասրավոր ե նաև, վոր ընկ. Զինովյանը սխալ և համարում տված բանաձերը: Բայց այդ գեպքում պետք ե բաց և պարզ կերպով ասել այդ բանն, ինչպես վայել և բոլեկիլին: Սակայն ընկ. Զինովյանը, չգիտեմ ինչու, այդպես չի վարդում: Նա ավելի լավ ե համարել ընտրել այլ ձանապարհ—թիկունքից հարվածել XIX կուսհամազումարի բանաձերն՝ լուրզ այդ բանաձերի մասին և չտալով բանաձերի վորեւ բաց քննադատություն: Յերեկ ընկ. Զինովյանը կարծում ե, թե այդ ձանապարհն ավելի լավ կը հասցնի իր նպատակին: Իսկ նա մի նպատակ ունի—«բարելավել» բանաձեր և «մի քիչ» շոկել լենինին: Հազիվ թե կարիք լինի ապացուցել վոր ընկ. Զինովյանը սխալվել ե իր հաշիվների մեջ:

Վարտեղից և բդիսում ընկ. Զինովյան սխալը, վարչն և այդ սխալի արմատը:

Այդ սխալի արմատն, իմ կարծիքով, այն է, վոր ընկ. Զինովյան հավատացած է, թե մեր յերկրի տեխնիկական յետամնացությունն անհաղթահարելի խոշնութ և լրիվ սոցիալիստական հասարակություն կառուցելու համար, վոր պրոլետարիատը չի կարող սոցիալիզմ կառուցել մեր յերկրի տեխնիկական յետամնացության պատճառով: Ընկ. Զինովյան ու ընկ. Կամենելը մի ժամանակ փորձեցին հանդես գալ այդ պատճառաբանությամբ կուսակցության ենարք. Կոմիտեյի նիստերից մեկում, ապրիլի կուսկոնֆերենցիայից առաջ:

Սակայն նրանք ստացան իրենց պատասխանը և ստիպված յեղան նահանջել, ծեփականապես յենթարկվելով հակադիր՝ կենար. Կոմիտեյի մեծամասնության տեսակետին: Բայց յենթարկվելով այդ տեսակետին ձևականապես, ընկ. Զինովյանը ամրող ժամանակ շարունակում էր կովկան դեմ (ան ընկ. Զինովյանի գիրքը «Լենինիզմի մասին» և յեղափակման խոսքը XIX կուսամագումարում): Ան թե ինչ և ասում չկե կենար. Կոմիտեյի այդ «ինցիդենտի» մասին մեր կուսակցության Մոսկվայի Կոմիտեն լենինգրադի նահանգական կուսկոնֆերենցիային ուղած իր «Պատասխան»-ի մեջ».

«Ծառ չի անցել յեր ընկերներ կամենելը և Զինովյանը պաշտպանում ելին Քաղբյուրոյում այն տեսակետն, իրը թե մենք չենք կարող հաղթահարել ներքին գծվարությունները մեր տեխնիկական և տնտեսական յետամնացության պատճառով, յեթե մեզ չփրկի միջազգային հեղափոխությունը: Սակայն մենք կենար. Կոմիտեյի մեծամասնության հետ միասին կարծում ենք, վոր կարող ենք սոցիալիզմ կառուցել, կառուցում ենք և կկառուցենք, չնայած մեր տեխնիկական յետամնացության: Մենք կարծում ենք, վոր այդ կառուցումը անդի կունենա, ի հարկե, շատ ավելի դանդաղ, քան համաշխարհային հաղթանակի պայմաններում, բայց այնուամենայնիվ մենք առաջ ենք կնում և պիտի գնանք: Մենք յենթարկում ենք նմանապես, վոր ընկ. Կամենելի և Զինովյանի տեսակետը արտահայտում է հավատի բացակայություն կամ անվստահություն գեպի մեր բանվոր գասակարգի և նրա յետելից գնացող գյուղաշիական մասսաների ներքին ուժերը: Մենք յենթարկում

ենք, վոր այդ տեսակետը շեղումն և լենինյան գիրքից» (ան «Պատասխանը»):

Այս փաստաթուղթը յերեան յեկավ մամուլում XIV կուսհամագումարի առաջին նիստերի ժամանակ: Ընկ. Զինովյան, ի հարկե, հնարավորություն ուներ գուրս գալ այդ փաստաթղթի գեմ գեռ ևս համագումարում: Բնորոշ ե, վոր ընկ. ընկ. Զինովյան ու Կամենելը վոչ մի առարկություն չունեցան այդ ծանր մեղադրանքի գեմ, վոր գրել եր նըանց առջե Մոսկվայի Կոմիտեն: Պատահական և արդյոք այդ: Կարծում եմ, վոր պատահական չե: Մեղադրանքն, ըստ յերեւութիւն, հասել ե իր նպատակին: Ընկ. Կամենելն ու ընկ. Զինովյան այդ մեղադրանքին «Պատասխանեցին» լուսությամբ, վորովհետև այդ մեղադրանքի գեմ բան չունեցին ասելու:

Նոր ոպազդեցիան վիրավորվում է, վոր ընկ. Զինովյանը մեղադրում ենք, թե հավատ չունի գեղի սոցիալիստական կառուցման հաղթանակը մեր յերկրում: Բայց յեթե ընկ. Զինովյանը սոցիալիզմի մի յերկրում հաղթանակի հարցի միամյա քննությունից հետո, իր տեսակետի (25 թ. ապրիլ), այլ հարցի առթիվ վորոշ կարծիք կազմելուց հետո, վոր հաստափեցի այդ հարցի առթիվ վորոշ կարծիք կազմելուց հետո, վորը հաստափեցի ԽIV կուսկոնֆերենցիայի հայտնի բանաձևով (25 թ. ապրիլ), — յեթե ընկ. Զինովյան այս բոլորից հետո վճռում և հանդես գալ իր «Լենինիզմի մասին» գրքում (25 թ. սեպտեմբեր) կուսակցության առակետի գեմ, յեթե նա կը կնում է իր այդ յելութը XIX համագումարում, ապա ուրեմն ինչպէ բացատրել այդ բոլորը, այդ համառությունը, այդ սխալի վրա նրա ամուր կերպով կանգնելը, յեթե վոչ նրանով, վոր ընկ. Զինովյանը վարակված է, այն ել անհուսալի կերպով վարակված, անհավատությամբ կամ անվստահությամբ գեղի սոցիալիստական կասուցման հաղթանակի գործը մեր յերկրում:

Ընկ. Զինովյանը հարկ է համարում իր այդ անհավատությունը համարել վորպես ինտերնացիոնալիզմ: Բայց այդ վարժամանակից սկսած լենինիզմից շեղումը լենինիզմի ամենազլիսավոր հարցում ինտերնացիոնալիզմ սկսեց համարվել մեղնում:

Ավելի ճիշտ չի լինի ասել, վոր վոչ թե կուսակցությունը, այլ ընկ. Զինովյան և այսուղ սխալվում ինտերնացիոնալիզմի և համաշխարհային հեղափոխության նկատմամբ: Բանի վոր թիւ

և մեր «կառուցվող սոցիալիզմի» յերկիրը, յեթե վոչ համաշխարհային հեղափոխության հենարանը (բազա): Սակայն կարո՞ղ եարդյոք նա լինել համաշխարհային հեղափոխության իսկական հենարան, յեթե անընդունակ լինի սոցիալիստական հասարակություն կառուցել: Կարո՞ղ եարդյոք նա մնալ նույն ամենամեծ ձգողական կենտրոնը բոլոր յերկրների բանվորների համար, ինչպիսին ենա, անկասկած, այժմ, յեթե անընդունակ լինի հաղթաբարելու իր մեջ մեր տնտեսության կապիտալիստական տարրերին, ձեռք բերելու սոցիալիստական կառուցման հաղթանակի մասում էն, վորչի կարող: Բայց միթե դրանից չի հետևում, թէ գեղի սոցիալիստական կառուցման հաղթանակին ունեցած անհավատությունը, այդ անհավատության քարոզը վտանգում է մեր յերկրի, իբրև համաշխարհային հեղափոխության հենարանի, հռաչակը, իսկ մեր յերկրի այդ հոչակից գրկվելը թուլացնում է համաշխարհային հեղափոխական շարժումը: Ինչով եյին խրանեցնում մեղնից բանվորներին պ.պ. սոցիալ-դեմոկրատները: Այն քարոզով, թէ «ուստիներից վոչինչ չի դուրս գա»: Ինչով ենք մինք այժմ հարվածում սոցիալ-դեմոկրատներին՝ գեղի մեղ գրավել բանվորական պատվիրակությունների ամրողջ շարքեր և ամբացներով այլպիսով կոմմունիզմի դիրքերն ամրողջ յերկրում: Մեր աշողություններով սոցիալիզմի կառուցման բնագավառում: Բայց միթե պարզ չե սրանից հետո, վոր նա, ով անհավատություն կամ անվատահություն է քարոզում գեղի մեր աշողությունները սոցիալիզմի կառուցման նկատմամբ, նա անուղղակի կերպով ողնում է սոցիալ-դեմոկրատներին, թուլացնում է միջազգային հեղափոխական շարժումների թափը, անխուսափելի կերպով հեռանում է ինտերնացիոնալիզմից:

Տեսնում եք, վոր ընկ. Զինովյանի «ինտերնացիոնալիզմի» նկատմամբ ել գործն ամենսին ավելի լավ չե, քան նրա «հարյուրտոկոսային լեռնինիզմի» նկատմամբ սոցիալիզմի մի յերկրում կառուցման հարցի վերաբերյալ:

Այդ պատճառով ել կուսհամագումարը ճիշտ վարվեց՝ վորոշելով նոր սպազմիցիայի հայացքներն իբրև «անհավատություն կամ անվատահություն գեղի սոցիալիզմի կառուցման գործը» և «լեռնինիզմի աղավաղումն»:

VII.

ՊԱՅՄԱՐ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՀԱՄԱՐ

Կարծում եմ, վոր սոցիալիստական կառուցման հաղթանակին չավատալը նոր սպազմիցիայի հիմնական սխալն է: Այդ սխալը, իմ կարծիքով, հիմնական և այն պատճառով, վոր նըսանից են բղխում նոր սպազմիցիայի մյուս բոլոր սխալները: Նոր սպազմիցիայի սխալները նեղի, պետական կապիտալիզմի, մեր սոցիալիստական արդյունաբերության բնույթի, կոսպերացիայի գերի մասին պրոլետարիատի դիկտատորայի շրջանում, բռունցքների գեմ կավելու մեթոդների, միջակ գյուղացիության գերի և տեսակարար կշռի մասին, — այդ բոլոր սխալները բղխում են սպազմիցիայի հիմնական սխալից — մեր յերկրի ույժերով սոցիալիստական կառուցման հաղթանակին չավատալուց: Ի՞նչ են նշանակում հավատ չունենալ գեղի սոցիալիստական կառուցման հաղթանակը մեր յերկրում:

Գա նշանակում է ամենից առաջ չհավատալ, թէ գյուղացիության հիմնական մասսաները, մեր յերկրի գարգայման հայտնի պայմանների ույժով, կարող են կպչել սոցիալիստական կառուցման գործին:

Գա նշանակում է նախ և առաջ հավատ չունենար թէ մեր յերկրի պրոլետարիատը, վոր իր տրամադրության տակ ունի ժողովրդական անտեսության իշխող դիրքերը, ընդունակ և գրավիլ գյուղացիության հիմնական մասսաները գեղի սոցիալիստական կառուցման գործը:

Այս սկզբունքներից ե յելնում լոկլայն սպազմիցիան մեր զարգացման ուղիների վերաբերյալ իր կառուցվածքում՝ զիտակցար թէ անդիտակցարար, դա միենույն է:

Կարելի յե խորհրդային գյուղացիության հիմնական մասսան գրավել սոցիալիստական կառուցման գործի մեջ:

«Լեռնինիզմի հիմնաքների մասին» գրքույիսում այս մասին կա յերկու սկզբունք:

1) «Զի կարելի Խորհրդային Միության գյուղացիությանը շփոթել Արևմուտքի գյուղացիության հետ: Այս գյուղացիությունը, վորը յերեք հեղափոխությունների դպրաց և անցել, պրոլետարիատի հետ և նրա առաջնորդությամբ կռվել ե ցարի և բուրժուական իշխանության դեմ, հող և խաղաղություն և սոսցել պրոլետարական հեղափոխությունից և այդ իսկ տեսակետից դարձել և պրոլետարիատի պահեստի բանակը (ռեզիրվ), — այդ գյուղացիությունը չի կարող չտարբերվել այն գյուղացիությունից, վորը կռվել և բուրժուական հեղափոխության ժամանակ լիրերալ բուրժուազիայի առաջնորդությամբ, վոր հող և ստացել այդ բուրժուազիայի ձեռքից և այդ իսկ տեսակետից դարձել և բուրժուազիայի պահեստի բանակը: Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, թե խորհրդային գյուղացիությունը, վոր վարժվել ե գնահատել պրոլետարիատի հետ ունեցած քաղաքական բարեկամությունը և իր ազատությամբ պարտական և հենց այդ բարեկամությանը ու համագործակցությանը, — չի կարող պրոլետարիատի հետ տնտեսական համագործակցության բացառիկ լավագույն նյութ չծառայել»:

2) «Զի կարելի Ռուսաստանի գյուղատնտեսությունը շփոթել Արևմուտքի գյուղատնտեսության հետ: Այստեղ գյուղատնտեսության զարգացումն ընթանում և կապիտալիզմի սովորական գծով՝ գյուղացիության խոր շերտավորման հանգամանքներում — խոշոր կալվածներ և մասնագործիքներ (խոշոր կալվածներ) մի կողմից և պատճերիվ, աղքատություն ու վարձու ստըրկություն մյուս կողմից: Այդ տեսակետից անկումն ու քայլքայումն այնտեղ միանգամայն բնական ե: Սակայն այլ և Ռուսաստանում: Մեզնում գյուղատնտեսության զարգացումն չի կարող այդ հանապարհով ընթանալ, թեկուզ հենց այն պատճառով, վոր Խորհրդային իշխանության գոյությունը և արտադրության հիմնավան գործիքների և միջոցների ազգայնացումը թույլ չեն տալիս նման զարգացումն: Գյուղատնտեսության զարգացումն Ռուսաստանում պետք ե այլ հանապարհով ընթանա — միլիոնավոր մասն ու միջակ գյուղացիության կոռպերացման հանապարհով, գյուղում մասսայական կոռպերացման զարգացման հանապարհով, վորը վայելելու յե պետության պաշտպանությունը արտօնյալ վարկավորման կարգով: Լենինը ճիշտ և ցույց տվել կոռպերացիայի մասին իր հոգվածներում, թե գյուղատնտեսության զարգացումը մեզնում պետք ե նոր ուղղով ընթանա — գյուղացիության մեծամասնությունը կոռպերա-

ցիայի միջոցով դեպի սոցիալիստական շինարարությունը գրավելու ուղիով, գյուղատնտեսության մեջ աստիճանաբար կոլեկտիվմի սկզբունքները արմատացնելու ուղիով՝ սկզբում գյուղական տնտեսության արտադրանքի վաճառման և ապա այդ արտադրանքների արտադրության բնագավառում»...: «Հազիվ թե կարիք լինի ապացուցելու, թե գյուղացիության հակա մեծամասնությունը սիրով կկանգնի զարգացման այս նոր հանապարհի վրա՝ գին շվրտելով մասնավոր-կապիտալիստական լատիֆունդիսների և վարձու ստրկության, աղքատության և քայլքայման հանապարհը»: Ճիշտ են այս սկզբունքները:

Կարծում եմ, վոր այս յերկու սկզբունքներն ել ճիշտ են և անվիճելի մեր ամբողջ շինարական շրջանի համար՝ նեպի պայմաններում:

Դրանք արտահայտությունն են միայն՝ լենինի հայտնի թերթերի պրոլետարիատի և գյուղացիության կապի, գյուղացիական տնտեսությունները յերկրի սոցիալիստական զարգացման սիստեմի մեջ ներառնելու վերաբերյալ, այն թեզի, թե ինչպես պրոլետարիատը պետք ե առաջ շարժվի դեպի սոցիալիզմ գյուղացիության հիմնական մասսաների հետ միասին, վոր գյուղացիության միլիոնավոր մասսաների կոռպերացումը սոցիալիստական շինարարության ամենահարմար և ապահով հանապարհն ե գյուղում, վոր մեր սոցիալիստական արդյունագործության ամման պայմաններում «կոռպերացիայի հասարակ աճումը մեղ համար հոմանիշ և սոցիալիզմի աճման» (տես հատոր XVIII մասն II, էջ 144):

Յեզ իրոք, ինչ հանապարհով կարող ե և պետք ե ընթանա գյուղացիական տնտեսության զարգացումը մեր յերկրում:

Գյուղացիական տնտեսությունը կապիտալիստական տնտեսություն չե: Գյուղացիական տնտեսությունը, յեթե վերցնենք գյուղացիական տնտեսությունների ճնշող մեծամասնությունը, մանր-ապրանքային տնտեսություն ե: Իսկ ինչ ե մանր-ապրանքային գյուղացիական տնտեսությունը: Դա մի տնտեսություն ե, վոր կանգնած ե կապիտալիզմի և սոցիալիզմի համբարաժան գծի վրա: Նա կարող ե զարգանալ դեպի կապիտալիզմ, ինչպես վոր լինելու յե մեզնում, մեր յերկրում, պրոլետարիատի դիկտատորացի պայմաններում:

Վ՞րտեղից և առաջ գալիս գյուղացիական տնտեսության այդ անկայունությունն ու վոչ ինքնուրույնությունը։ Ինչով բացատրել։

Դա պետք է բացատրել գյուղացիական տնտեսությունների կտրտված լինելովը, նրանց անկազմակերպ վիճակով, քաղաքից, արդյունագործությունից, վարկային սիստեմից, յերկրի իշխանության բնույթից ունեցած կախումով, վերջապես այն հաստրակական դրությամբ, վոր գյուղը գնում և և պետք է գնա քաղաքի յետեկից ինչպես նյութական, այնպես ել կուլտուրական տեսակետից։

Գյուղացիական տնտեսության զարգացման կապիտալիստական ուղին զարգացումն է գյուղացիության ամենախոր շերտավորման միջոցով՝ խոշոր լատիֆունդիաներ մի բևեռում և մասսայական աղքատության մյուս բևեռում։ Զարգացման այդ ուղին անխուսափելի յէ կապիտալիստական յերկրներում, վորովհետեւ գյուղը, գյուղացիական տնտեսությունը կախումն ունի քաղաքից, արդյունագործությունից, քաղաքում կենտրոնացած վարկից, իշխանության բնույթից։ Խակ քաղաքում թագավորում և բուրժուազիան, կապիտալիստական արդյունաբերությունը, կապիտալիստական վարկային սիստեմը, կապիտալիստական պետական իշխանությունը։

Գյուղացիական տնտեսությունների զարգացման այդ ձեւը պարտավորիչ և արդյոք մեր յերկրում, ուր քաղաքը բոլորովին այլ գեմք ունի, ուր արդյունագործությունը գտնվում և պրոլետարիատի ձեռքին, ուր փոխարիական միջոցները, վարկային սիստեմը, պետական իշխանությունը և այլն կենտրոնացած են պրոլետարիատի ձեռքում, ուր հողի աղջայնացումը յերկրի ընդհանությունը է։ Ի հարկե, պարտավորիչ չեն այն պատճառով, վոր քաղաքը գյուղի գեկավարն է, —իսկ քաղաքում իշխում է մեզնում պրոլետարիատը՝ իրեն ձեռքին ունենալով ժողովրդական տնտեսության բոլոր իշխող գիրքերը, — հենց այդ պատճառով գյուղացիական տնտեսությունների զարգացումը պետք է ընթանա այլ ուղիով՝ սոցիալիստական շինարարության ուղիով։

Այդ ի՞նչ ուղի յէ։

Դա միլիոնավոր գյուղացիական տնտեսությունների մասայական կոռպերացման ուղին և՝ կոռպերացիայի բոլոր գծերով։ Դա կտրտված գյուղացիական տնտեսությունների միացման ուղին և սոցիալիստական արդյունագործության շուրջը։ Դա գյուղացիության մեջ կոլեկտիվիզմի սկզբունքների արմատացման ուղին և նախ հողագործության արտադրանքի վաճառքի և գյուղացիական տնտեսություններին քաղաքի ապրանքներ մատակարարելու գծով և ապա գյուղատնտեսական արտադրության գծով։

Այդ ուղին ավելի և ավելի անխուսափելի յէ գառնում պրոլետարիատի գիլտատուրայի պայմաններում, քանի վոր կոռպերացումը վաճառքի և մատակարարման ձեռվ, վերջապես կոռպերացումը վարկի և արտադրության զծով (գյուղատնտեսական ընկերություններ) գյուղի բարեկեցության բարձրացման միակ ուղին և, գյուղացիական լայն մասսաների աղքատությունից և քայլքայումից փրկելու միակ միջոցն է։

Առում են, թէ գյուղացիությունը մեզնում սոցիալիստական չե իր գրությամբ, վոր այդ տեսակետից հենց նա սոցիալիստական զարգացման անլուգունակ է։ Ճիշտ ե, ի հարկե, վոր գյուղացիությունն իր գրությամբ սոցիալիստական չե։ Բայց դա ապացուց չե գյուղացիական տնտեսությունների սոցիալիզմի ուղիով զարգացման գեմ, յեթե ապացուցված է, վոր գյուղը գնում և քաղաքի յետեկից, խակ քաղաքում իշխում է սոցիալիստական արդյունաբերությունը։ Հոկտեմբերյան հեղափոխության ժամանակ ես գյուղացիությունը սոցիալիստական չեր իր գրությամբ, և նա ամեննեին չեր ցանկանում յերկրում սոցիալիզմ հաստել։ Նա այն ժամանակ ձգում եր գլխավորապես վերացնելու կալվածատերերի իշխանությունը, վերջ տալու պատերազմին և խաղաղություն հաստատելու։ Այնուամենայնիվ նա զնաց այն ժամանակ պրոլետարիատի յետեկից։ Ինչու։ Վորովհետեւ բուրժուազիայի տապալումը և իշխանության գրավումը սոցիալիստական պրոլետարիատի կողմից միակ ճանապարհն եր այն ժամանակը գուրս գալու իմպերիալիստական պատերազմից, միակ ճանապարհն եր հաշտության և խաղաղության։ Վորովհետեւ ուրիշ վոչ մի ճանապարհ չկար այն ժամանակ և չեր ել կարող լինել։ Վորովհետեւ մեր կուսակցությունը կարողացավ այն ժամանակ

շոշափել, գտնել զյուղացիության առանձնահատուկ շահերի (կալվածատերի տապալումն, հաշտություն) միացման ու յենթարկման այն աստիճանը յերկրի ընդհանուր շահերին (պրոետարիատի գիտատուրա), վորը ընդունելի և շահավետ եր զյուղացիության համար: Յեվ զյուղացիությունը, չնայած իր վոչ սոցիալիստական լինելուն, գնաց այն ժամանակ սոցիալիստական պրոլետարիատի յետելից:

Նույնը պետք է ասել նաև մեր յերկրի սոցիալիստական շինարարության, զյուղացիությանը այդ շինարարության հունի մեջ զբավելու վերաբերմամբ: Գյուղացիությունը սոցիալիստական չե իր գրությամբ: Բայց նա պետք է կանգնի և անպայման կկանգնի սոցիալիստական զարգացման ճանապարհի վրա, քանի վոր զյուղացիությունը աղքատությունից և քայլայումից փրկվելու այլ ճանապարհ չունի և չի կարող ունենալ, բացի պրոլետարիատի հետ կապվելուց, բացի սոցիալիստական արդյունաբերության հետ կապվելուց, բացի գյուղացիական տնտեսությունը սոցիալիստական զարգացման ընդհանուր հունի մեջ գնելուց՝ զյուղացիության մասսայական կոռպերացման միջոցով:

Ինչու հատկապես զյուղացիության մասսայական կոռպերացման միջոցով:

Վորովհետեւ մասսայական կոռպերացման մեջ «մենք գտանք մասնավոր շահի, մասնավոր-առեւտրական շահի, միացման և ընդհանուր շահերին յենթարկման, պետության կողմից նրա ստուգման և վերահսկման այն աստիճանը» (Ենին), վորը գյուղացիության համար ընդունելի յեւ և շահավետ և վորը ապահովում և պրոլետարիատին զյուղացիության հիմնական մասսային սոցիալիստական շինարարության մեջ զբավելու հնարավորությունը: Հենց այն պատճառով, վոր զյուղացիության համար շահավետ և կազմակերպել իր ապրանքների վաճառքը և իր տնտեսության համար մեքենաներ հայթայթելը կոռպերացիայի միջոցով, հենց այդ պատճառով զյուղացիությունը պետք և գնա կգնա մասսայական կոռպերացման ճանապարհով:

Իսկ ի՞նչ ե նշանակում զյուղացիական տնտեսությունների մասսայական կոռպերացումն սոցիալիստական արդյունաբերության գլխավորությամբ:

Այդ նշանակում ե, վոր մանր-ապրանքային դյուղացիական տնտեսությունը պետք է յերես գարձնի հին կապիտալիստական ճանապարհից, վոր հղի յի զյուղացիության մասսայական քայլայմամբ, և մնցնի զարգացման նոր ուղի, սոցիալիստական շինարարության ուղին:

Ահա թե ինչու մեր պայքարը զյուղացիական տնտեսության զարգացման նոր ճանապարհի համար, զյուղացիական հիմնական մասսայի գեպի սոցիալիզմի կառուցման զործը զրավելու պայքարը մեր կուսակցության հերթական խնդիրն և այժմ:

Դրա համար ել Համամիություններին կոմ. կուսակցության ԽԽ համագումարը շատ ճիշտ վարեց վորոշելով, թե «Սոցիալիզմի կառուցման հիմնական ուղին զյուղում այն ե, վոր սոցիալիստական պետարդյունաբերության, պետական վարկային հիմնարկների և պրոլետարիատի ձեռքում գտնվող մյուս իշխող դիրքերի հարածուն տնտեսական զեկավարության պայմաններում գրավենք զյուղացիության հիմնական մասսան կոռպերատիվ կազմակերպությունների մեջ և ապահովենք այդ կազմակերպության սոցիալիստական զարգացումը, ուժագործելով, հաղթահարելով և գուրս մղելով նրա կապիտալիստական տարրերը» (տես համագումարի բանաձեռ Կենտր. Կոմիտեյի հաշվետվության առթիվ):

Նոր ոպպոզիցիայի ամենամեծ սխալն այն ե, վոր նա չի հավատում զյուղացիության զարգացման այդ նոր ճանապարհին, չի տեսնում կամ չի հասկանում այդ ճանապարհի անխուսափելիությունը պրոլետարիատի գիլտատուրայի պայմաններում: Իսկ չի հասկանում այն պատճառով, վորովհետեւ չի հավատում սոցիալիստական շինարարության հաղթանակին մեր յերկրում, չի հավատում մեր պրոլետարիատի ընդունակությանը՝ տանելու իր յետելից զյուղացիությանը սոցիալիզմի ուղիով:

Այստեղից ել բղխում ե այն, վոր ոպպոզիցիան չի ըմբռնում նեպի կրկնակի ընույթը, ուղղնում ե նեպի բացատրական կողմերը և նեպը բացատրում իրեն գլխավորապես նահանջ:

Այստեղից ե նաև այն, վոր ոպպոզիցիան ուղղնում ե մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գերը և նվազեցնում մեր սոցիալիստական զարգացման (սոցիալիստական արդյունա-

բերություն, վարկային սխառամ, կոռպերացիա, պրոլետարիատի հշամանությունը և այլն) լծակների գերը:

Այստեղից ե բղխում նաև նրա անհասկացողությունը մեր պետարքության սոցիալիստական ընուցիթի վերաբերմամբ և կասկածը լենինի կոռպերատիվ ծրագրի նկատմամբ:

Այստեղից ե բղխում նաև գյուղի շերտավորման ուղղնելը, խուճապը կուլակից, միջակ գյուղացու դերի նվազեցումը, կուսակցության քաղաքականության վիճեցնելու չանքերը միջակի հետ յեղած հաստատուն կապը ապահովելու գործում, և ընդհանրապես մի կողմից մյուսը տատանումը կուսակցության քաղաքականությունը գյուղում հարցի մեջ:

Այստեղից ե նաև անհասկացողությունը այն հսկայական աշխատանքի նկատմամբ, վորով կուսակցությունը ձգտում է բանվորների և գյուղացիների միլիոնավոր մասսաներ զբաղել արդյունաբերության և գյուղանտեսության շինարարության մեջ, կենդանացնել կոռպերացիան և խորհուրդները, կառավարել յերկիրը, պայքարել բյուրոկրատիզմի դեմ, պայքարել բարեկավելու և վերակադրելու մեր պետական ապարատը. մի աշխատմանը, վորը զարգացման նոր շերտի նշանն ե, և առանց վորի վոչ մի սոցիալիստական շինարարություն չի կարող լինել:

Այստեղից ե բղխում նաև ոպպոզիցիայի անհույս և զիսակորույս վիճակը մեր շինարարության դժվարությունների հանդեպ, կասկածը մեր յերկը ինդուստրիալիզացիայի հնարավորության նկատմամբ, հոսեանսական առեկոսեն մեր կուսակցության այլակերպման մասին և այլն:

Նրանցում, բուրժուազիայի մոտ ամեն ինչ լավ և շատ կամ քիչ չափով. իսկ մեզնում, պրոլետարիատի մոտ վատ և շատ կամ քիչ չափով. յեթե Արևմուտքից հեղափոխությունը չհասնի, մեր գործը կորած ե,—այսպես և նոր ոպպոզիցիայի ընդհանուր տոնը (յեղանակը), վոր իմ կարծիքով լիկվիդատորի տօն ե, վոր չգիտեմ ինչու հանդես ե բերվում իբրև ոպպոզիցիա (յերեկ զավեշտի համար), իբրև «ինտերնացիոնալիզմ»:

Նեպը կապիտալիզմ ե,—ասում ե ոպպոզիցիան: Նեպը առավելապես նահանջ ե,—ասում ե ընկեր Զինովյան: Այդ բոլորն, ի հարկե, սխալ ե: Իրոք, նեպը կուսակցության քաղաքականությունն ե, վոր թույլ ե տալիս սոցիալիստական և կապիտալիս-

տական տարրերի պայքար՝ ի նկատի ունենալով սոցիալիստական տարրերի վերաբերմամբ: Իրոք, նեպն սկսվեց միայն նահանջով, բայց ի նկատի առնելով նահանջի ընթացքում կատարել ուժերի վերախմբավորումներ և գիտել հարձակման: Իրոք, մի քանի տարի յե, վոր մենք հարձակումն ենք գործում, և աջող կերպով՝ զարգացնելով մեր արդյունագործությունը, զարգացնելով խորհրդային առևտուրը, ճնշելով մասնավոր կապիտալը:

Մակայն ինչ միտք ունի—նեպը կապիտալիզմ ե, նեպն առավելապես նահանջ ե—թեզը: Վրանեղից ե ծագում այդ թեզը:

Նա ծագում է այն սխալ յենթադրությունից, թե մեզնում այժմ տեղի ունի կապիտալիզմի պարզ վերականգնումն, կապիտալիզմի պարզ «վերադարձ»: Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպպոզիցիայի կասկածները մեր արդյունաբերության սոցիալիստական բնույթի նկատմամբ: Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպպոզիցիայի խուճապը հանդեպ կուլակի: Միայն այս յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպպոզիցիայի շտապողականությունը, վորով ոպպոզիցիան կառչեց գյուղացիության շերտավորման վերաբերյալ սխալ թվերից: Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել ոպպոզիցիայի առանձին մոռացկուությունը այն մասին, թե միջակ գյուղացիությունը մեզնում հանդիսանում է հողագործության կենտրոնական գեմքը: Միայն այդ յենթադրությամբ կարելի յե բացատրել միջակ գյուղացիության տեսակարար կշփթերությունահատումը և կենինի կոռպերատիվ ծրագրի վերաբերմամբ յեղած կասկածները: Միայն այդ յենթադրությամբ կարելի յե «Հիմնավորել» նոր ոպպոզիցիայի անհավատությունը գյուղի զարգացման նոր ճանապարհի, գյուղի սոցիալիստական շինարարության մեջ զրավելու նոր ճանապարհի նկատմամբ:

Իրոք, մեզնում այժմ տեղի ունի վոչ թե կապիտալիզմի վերականգնման միակողմանի պրոցես, այլ կապիտալիզմի զարգացման յերկողմանի պրոցես, սոցիալիստական և կապիտալիստական տարրերի պայքարի հակասական պրոցես, կապիտալիստական տարրերի սոցիալիստական տարրերով հաղթահարելու պրոցես: Դա անվիճելի յե ինչպես քաղաքի համար, ուր սոցիալիզմի հենարան և կազմում պետական արդյունաբերությունը, այնպես

և գյուղի համար, ուր սոցիալիստական զարգացման հիմնական շարժաբռ կոռպերացիան եւ միացած սոցիալիստական արդյունաբերության հետ:

Կապիտալիզմի պարզ վերականգնումն յէ թեկուզ այն պատճառով, վոր մեզնում իշխանությունը պրոլետարական ե, խոշոր արդյունաբերությունը գտնվում է պրոլետարիատի ձեռքին, փոխադրական միջոցներն ու վարկը գտնվում են պրոլետարական պետության տրամադրության տակ:

Ենթապղումը չի կարող նախկին չափերն ընդունել, միջակ գյուղացին մնում է գյուղացիական հիմնական մասսան, իսկ բոռնցքը չի կարող վերտանալ նախկին ույժը թեկուզ այն պատճառով, վոր հողը մեզնում ազգայնացրած ե, շրջանառության չի յենթարկվում, իսկ մեր առեւտրական, վարկային, հարկային և կոռպերատիվ քաղաքականության նպատակն ե սահմանափակել բոռնցքքների շահագործական ձգտումները, բարձրացնել գյուղացիության ամենալայն մասսաների բարեկեցությունը և հարթել ծայրահեղությունները գյուղում: Ել չեմ խոսում այն մասին, վոր պայքարը բոռնցքքների վեմ ընթանում է մեզնում վոչ միայն հին ձեռվ—չքավորությանը բոռնցքքների դեմ կ'ոզմակերպելու գծով,—այլև նոր զծով՝ պրոլետարիատի և չքավորության միջակների հետ ունեցած կապն ամրացնելու գծով ընդունելու: Այն փաստը, վոր ոպազողիցիան չի հասկանում բոռնցքքների դեմ այս յերկրորդ զծով՝ պայքարի միտքն ու նշանակությունը, մի ավելորդ անգամ հաստատում ե, վոր ոպազողիցիան սայթաքում ե գետի գյուղի զարգացման հին ուղին, գետի գյուղի կապիտալիստական զարգացման ուղին, յերբ բոռնցքն ու չքավորությունը կազմում եյին գյուղի հիմնական ույժերը:

Կոռպերացիան պետական կապիտալիզմի մի տեսակն ե, առում ե ոպազողիցիան հենվելով Լենինի «Պարենտուրք»-ի վրա և չի հագատում, թե կոռպերացիան հնարավոր և ոգտագործել իրեն սոցիալիստական զարգացման հիմնական շաղախ: Ոպազողիցիան այստեղ ևս կոպիտ սխալ և անում: Կոռպերացիայի այդպիսի բացարությունը բավարար և գոհացուցիչ եր 1921 թվին, յերբ զրվեց «Պարենտուրքը», յերբ մեզնում չկար զարգացած սոցիալիստական արդյունաբերություն, յերբ Լենինը պետկապիտակիզմի ընդունում եր վորպես մեր անտեսության հնարավոր և հիմնա-

կան ձեզ, իսկ կոռպերացիան՝ պետկապիտակիզմի հետ միացած: Սակայն այդ բացարությունը այժմ այլևս բավարար չե և յետ մնացել պատմությունից, վորովհետեւ սկսած այդ որից ժամանակները փոխվել են, սոցիալիստական արդյունաբերությունը զարգացել ե մեզնում, պետկապիտակիզմը չի պատվաստվել այն չափով, վորքան ցանկալի յեր համարվում, իսկ կոռպերացիան, վոր այժմ տասնյակ միլիոնավոր անդամներ ե ընդգրկել սկսել ե միանալ սոցիալիստական արդյունագործության հետ:

Այլապես ինչով բացարել այն փաստը, վոր յերկու տարի միայն անց «Պարենտուրք»-ից, գետ 1923 թ., Լենինն այլ կերպ սկսեց նայել կոռպերացիայի վրա, գտնելով, վոր «կոռպերացիան մեր պայմաններում ամենուրեք զուգագիզում և սոցիալիզմի հետ» (տես հ. XVIII, մ. II, եջ 144):

Այլ կերպ ինչով բացարել այս հանգամանքը, յեթե վոչ նրանով, վոր այդ յերկու տարվան ընթացքում սոցիալիստական արդյունաբերությունը հնար ունեցավ արգեն աճելու, իսկ պետկապիտակիզմը չպատվաստվեց հարկավոր չափով, վորի հիման վրա Լենինն սկսեց կոռպերացիային նայել վոչ թե պետկապիտակիզմի, այլ սոցիալիստական արդյունաբերության կապակցության մեջ:

Փոխվել եյին կոռպերացիայի զարգացման պայմանները: Պետք ե փոխվեր նաև մոտեցումը կոռպերացիայի հարցին:

Ահա ձեզ որինակ մի նշանակալից կտօր Լենինի «Կոռպերացիայի մասին» զբույյիցից (1923 թ.), վոր լույս ե սիռում այս հարցի վրա.

«Պետական կապիտալիզմի որոք*)» կոռպերատիվ ձեռնարկները զանազանվում են պետական-կապիտալիստական ձեռնարկներից նախ վորպես մասնավոր և ապա վորպես կոլեկտիվ ձեռնարկներ: Մեր ներկա իրավակարգում կոռպերատիվ ձեռնարկները զանազանվում են մասնավոր-կապիտալիստական ձեռնարկներից վորպես կոլեկտիվ ձեռնարկներ, բայց չեն տարբերվում սոցիալիստական ձեռնարկներից, յեթե հիմնված են պետությանը, այսինքն բանվոր գասակարգին պատկանող հողի վրա և նրա արտադրական մեջոցներով» (հ. XVIII, մ. I, եջ 143—144):

*) Ըստ ձեռնության իմ և ի. Սու.:

Այս փոքրիկ ցիտատում յերկու մեծ հարց են լուծված: Նախ այն հարցը, վոր մեր «ներկա կազմը» պետկապիտագիզմ չե: Յերկորդ այն հարցը, վոր կոռպերատիվ ձեռնարկները կապված «մեր կազմի հետ՝ չեն զանազանվում» սոցիալիստական ձեռնարկներից:

Կարծում եմ, վոր անկարելի յե սրանից ավելի պարզ կիրապով արտահայտել:

Ահա մի ուրիշ կտոր ևս լինինի նույն դրքից.

«Կոռպերացիայի պարզ աճումը մեղ համար նույնանում ե (բացի վերում մատնանշած «փոքրիկ» բացառությունը) սոցիալիզմի աճման հետ, և դրա հետ միասին մենք ստիպված ենք ընդունել մեր ամբողջ տեսակետի հիմնական փոփոխությունը սոցիալիզմի վերաբերմամբ» (տես նույն տեղը, եջ 144):

Պարզ ե, վոր մենք «Կոռպերացիայի մասին» գրքույզում գործ ունենք կոռպերացիայի նոր արժեքավորման հետ, ինչ վոր չի ուզում ընդունել նոր ոպպոզիցիան և վորը նա աշխատում է լուսվաճան տալ, հակառակ փաստերին, հակառակ ակնհայտ ճշմարտության, հակառակ լինինիզմի:

Տարբեր բան է պետկապիտավորմի հետ կապված կոռպերացիան, և տարբեր բան սոցիալիստական արդյունարերության հետ կապված կոռպերացիան:

Այստեղից, սակայն, չի կարելի յեղակացնել, թե «Պարենտուրք»-ի և «Կոռպերացիայի մասին» գրքույզի միջև սար ու ձոր կա: Այդ, ի հարկե, սխալ ե, բավական և վերցնել «Պարենտուրք»-ի որինակ հետեւյալ կտորը, վորախափի իսկույն ըմբռնենք «Պարենտուրք»-ի և «Կոռպերացիայի մասին» գրքույզի անքակտելի կապը կոռպերացիայի արժեքավորման հարցի նկատմամբ: Ահա այդ կտորը.

«Կոնցեսափայից սոցիալիզմին անցումը՝ խոշոր արտադրության մի ձեփ խոշոր արդյունաբերության մյուս ձեփն անցումն ե: Մանը տնտեսությունների կոռպերացիայից սոցիալիզմին անցումը՝ մանը արտադրությունից խոշոր արտադրության անցումն ե, այսինքն ավելի բարդ անցումն, վորը սակայն աջողության գեպօւմ ընդունակ ե ընդգրուել ազգաբնակչության ավելի լայն մասսաներ, ընդունակ ե դուրս կորզել հին, մինչսոցիալիստական, նույն խալ մինչ-

կապիտալիստական հարաբերությունների արմատները, վորոնք ամենահամառուն են ամեն մի «նորության» դիմացը լուսակետից» (տես հ. XVIII, մ. 1, եջ 220):

Այս ցիտատից յերեսում ե, վոր լինինը գետ «Պարենտուրք»-ի ժամանակ, յերբ չկար մեզնում գեռես սոցիալիստական արդյունավործության զարգացումն, հնարավոր եր համարում, վոր կոռպերացիան աջողության գեպօւմ կարող ե զառնալ պայքարի զորեղ միջոց «մինչսոցիալիստական», ուրեմն և կապիտալիստական հարաբերությունների գեմ: Կարծում եմ, վոր հենց այս միտքը հետագայում ծառայեց վորպես յելակետ նրա «Կոռպերացիայի մասին» գրքույզից համար:

Ի՞նչ ե հետեւում այս բոլորից:

Սրանից հետեւում ե, վոր նոր ոպպոզիցիան կոռպերացիայի հարցին մոտենում ե վոչ թե մարքսիստական, այլ մետաֆիզիկական տեսակետից: Ովպոզիցիան կոռպերացիային նայում ե վոչ իբրև պատմական յերեւութիւն, կապակցված մյուս յերեւութների, ամենք պետկապիտալիզմի (1921 թ.) կամ սոցիալիստական արդյունաբերության հետ (1923 թ.), այլ իբրև ինչ վոր մշտական և մշտական մի յերեւութիւն, վորպես «իրն իր մեջ»:

Այստեղից ել բղխում են ոպպոզիցիայի սխաները կոռպերացիայի հարցի նկատմամբ, նրա անհավասությունը գյուղի կոռպերացիայի միջոցով գեպի սոցիալիզմ զարգացման վերաբերյալ, այստեղից ել բղխում ե ոպպոզիցիայի թեքումը գեպի հին ուղին—գյուղի կապիտալիստական զարգացման ուղին:

Այս ե ընդհանուր առմամբ նոր ոպպոզիցիայի գիրքը սոցիալիստական շինարարության գործնական խնդիրներում:

Միակ յեղակացությունն այս ե.—ոպպոզիցիայի գիծը, վորչափ նա զիծ ունի, նրա տատանումներն ու յերերումները, նրա անհավասությունը և զլիակորույս վիճակը դժվարությունների հանդեպ՝ տանում են գեպի կապիտալիստական հանդեպ մեր անտեսության կապիտալիստական տարբերի: Վորովինեան, յեթե նեպը առավելապես նահանջ ե, յեթե պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը կասկածի յե յենթարկվում, յեթե բռունցքը համարյա թե ամենազոր ե, կոռպերացիան սակավ հուսատու, յեթե միջակ գյուղացիության գերը ընկնում ե

պրոգրեսիվ կերպով, յեթե զյւողի զարգացման նոր ձանապահը կասկածելի յե, կուսակցությունը համարյա թե այլուկերպվում է, խնկ Արևմուտքի հեղափոխությունն ել այնքան մոտ չե, - ապա ուրեմն ել ինչ ե մնում այս բոլորից հետո ոպազողիցիայի դինանոցում. ինչի վրա յե նա հույս դնում մեր տնտեսության կապիտալիստական տարրերի գեմ պայքարի գործում: Հո չի կարելի կովի յելնել միայն մի «ժամանակաշրջանի փիլիսոփայություն»-ով:

Պարզ ե, վոր նոր ոպազողիցիայի դինանոցը, յեթե ընդհանուրապես կարելի յե զինանոց համարել նախանձելի չե: Այդ զինանոցը անպետք ե կովի համար, ևս առավել հաղթանակի համար:

Պարզ ե, վոր այդպիսի զինանոցով կուսակցությունը շատ շուտով կորսույան կմատներ իրեն, յեթե կովի յելներ. նա սահմանական պիտի լիներ ուղղակի կապիտուլյացիայի դիմել հանդեպ մեր տնտեսության կապիտալիստական տարրերի:

Այդ պատճառով ել կուսակցության XIX համագումարը միանգամայն ճիշտ վարչից՝ վորոշելով, թե «պայքարը սոցիալիստական շինարարության հաղթանակի համար Խորհրդային Միության մեջ՝ կուսակցության հերթական խնդիրն ե». վոր այդ խնդրի լուծման անհրաժեշտ պայմաներից մեկն ե «պայքարել սոցիալիզմի շինարարության գործի վերաբերմամբ յեղած անհավատության և այն փորձերի գեմ, վորոնցով աշխատում են մեր ձեռնարկների, վորոնք «հաջորդական սոցիալիստական տիպի» ձեռնարկներ են (լենին), նայել վորպես պետական-կապիտալիստական ձեռնարկների». վոր «նման գաղափարական հուսանքները անկարելի գարձնելով մասսաների գիտակցական վերաբերմունքը գեպի սոցիալիզմի կառացումն ընդհանրապես և սոցիալիստական արդյունարերության կառուցումը մասնավորապես, ընդունակ են միայն կասեցնելու տնտեսության սոցիալիստական տարրերի աճումը և հեշտացնելու մասնավոր կապիտալի կոփը այդ սոցիալիստական տարրերի գեմ». վոր «այդ պատճառով համագումարն անհրաժեշտ ե համարում լայն գաստիարակչական աշխատանք՝ լենինիզմի այս տեսակ աղավաղման գեմ» (տես բառաձեռ Հ. Կ. Կենտր. կոմի հաշվետվության առթիվ):

Հ. Կ. Կ. XIX համագումարի պատճառական նշանակությունը կայանում է նրանում, վոր նա կարողացավ բանալ մինչև արմատ-

ները նոր ոպազողիցիայի սխալները, դեն շպրտեց նրա անհավատությունն ու վայնասունը, պարզ և վորոշ նիշեց պայքարի հետագա ուղին հանուն սոցիալիզմի, ավեց կուսակցությանը հաղթանակի հեռանկար և այդպիսով զինեց պրոլետարիատին սոցիալիստական շինարարության հաղթանակի անդրդվելի հավատով:



ողու
լառ
իսկ
ուր
նոց
պիւ
բել
թյո

լառ
նամ

շու
ստ
մել

միւ
տա
թյո
լոն
ոց
վա
ձեռ
ձեռ
լիս
նել
մու
լիս
ըն
տա
այտ
զու
իսա
ցու

լառ

20

Գինը 30 կուգ.



NL0034336

